ՀԵՆՐԻԿ ՍՎԱՋՅԱՆ

ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ



ՀՐԱՄԱՆԱՒ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

CATHOLICOSATE OF ALL ARMENIANS

SVAZYAN H. S.

RELIGIOUS LEADERS OF ALUANK'S WORLD AND PRIMATE CENTERS

Editor: Thorosyan Vahe

Publishing House of Mother See of Holy Etchmiadzin
Holy Etchmiadzin – 2021

КАТОЛИКОСАТ ВСЕХ АРМЯН

СВАЗЯН Г. С.

ДУХОВНЫЕ ЛИДЕРЫ СТРАНЫ АЛУАНК И ЕПАРХИАЛЬНЫЕ ЦЕНТРЫ

Редактор: Торосян Ваге

Издательство Первопрестольного Святого Эчмиадзина
Св. Эчмиадзин – 2021

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հ. Ս. ՍՎԱՋՅԱՆ

ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. Էջմիածին-2021

ՀՏԴ 93/94:27-9
ԳՄԴ 63.3+86.37
Ս 850

Տպագրվում է երաշխավորությամբ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի

ՍՎԱՋՅԱՆ Հ. Ս.
Ս 850 ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ / Հ. Ս. ՍՎԱՋՅԱՆ; Խմբ.՝ Վահե Թորոսյան.– Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչություն, Ս. Էջմիածին, 2021.– 128 էջ:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող սույն աշխատությունում հայկական աղվանագիտության մեջ առաջին անգամ ամփոփ շարադրանքով ուսումնասիրվում է Աղվանից աշխարհի հոգևոր գործիչների կյանքն ու գործունեությունը, վեր հանվում հարափոփոխ իրադրություններում նրանց որդեգրած քաղաքականությունը, ի ցույց դրվում Հայոց և Աղվանից եկեղեցիների դավանական համերաշխությունն ու միասնությունը, դարավոր կապերը: Նրանում անդրադարձ է կատարվում առաջնորդանիստ կենտրոններին, դրանց տեղից-տեղ փոխադրվելուն, հստակորեն մատնանշվում այդ տեղափոխումների քաղաքական, հասարակական ու կրոնական շարժառիթները և պարզաբանվում առընթեր այլ հարցեր: Մենագրությունում քննարկվում են հետազոտվող նյութի շուրջ առաջ քաշված տեսակետները, հաստատվում կամ հերքվում դրանք և արժևորվում ըստ էության:

Գիրքը հասցեագրված է Աղվանքի և նրա եկեղեցու պատմությամբ զբաղվող մասնագետներին, Հայոց և Աղվանից եկեղեցական հարաբերություններով հետաքրքրվողներին ու հասարակության ընթերցող լայն զանգվածներին:

ՀՏԴ 93/94:27-9
ԳՄԴ 63.3+86.37

Տպագրվում է մեկենասությամբ
«Սարգիս Գաբրիելյան» *հիմնադրամի*

ISBN 978-9939-59-285-5 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2022

Հրատարակության առիթով

«Աղվանից աշխարհի հոգևոր առաջնորդները և առաջնորդանիստ կենտրոնները» մենագրության մասին։

Հայոց Արևելից կողմանց կամ պատմագիտության մեջ հայտնի Աղվանից աշխարհի հոգևոր առաջնորդների և կենտրոնների պատմությունը Հայոց եկեղեցու պատմության մի մասն է։ Այն իր սկզբնավորման պահից հանդիսացել է Հայ Առաքելական Ս. Եկեղեցու անքակտելի մաս և միայն 461 թ., երբ Ուտիքը և Արցախը բռնակցվեցին բուն Աղվանքին, նոր կազմավորված քաղաքական միավորի՝ ընդհանուր անվան պատճառով կոչվեց Աղվանից եկեղեցի։ Գրախոսվող աշխատությունը սկզբնաղբյուրների ու թեմային առնչվող պատմագիտական ուսումնասիրությունների լայն օգտագործմամբ կատարված հետազոտություն է, որում Հ. Սվազյանը շոշափում է գիտական ու հասարակական շրջաններում մեծ հնչեղություն ստացած Աղվանից կաթողիկոսների և առաջնորդանիստ կենտրոններին վերաբերվող այնպիսի առանցքային հարցեր, որոնք հաճախ ադրբեջանցի հեղինակների կողմից քաղաքական շահարկման առարկա են։

Մենագրությունը սկսվում է ներածական բաժնով, որտեղ հեղինակը հետազոտության նպատակը, խնդիրները, գործնական նշանակությունն ու արդիականությունը ներկայացնելով հանդերձ, կատարել է օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության տեսական վերլուծություն՝ մատնանշելով և արժեվորելով դրանց կարևորությունը թեմայի վերաբերյալ։ Աշխատության մեջ քննարկվող հիմնահարցերից են քրիստոնեական առաջին քարոզիչների մուտքն Աղվանք՝ մասնավորապես սբ. Եղիշայի գործունեությունը Զողում և Հայոց Արևելից կողմերում՝ Ուտիքի Գիսում ։

Հետագա շարադրանքում ներկայացված են նաև Հայոց Արևելից կողմերում մյուս քարոզիչների գործունեությունը նոր վարդապետության սկզբնավորման արշալույսին, որտեղ հեղինակն անդրադառնում է նաև աղվանից «հայրապետների» Փայտակա-

բանում, Արցախում, Աղվանքում, ինչպես նաև նրա նահատակությունը Մասքթաց աշխարհում Սանեսան թագավորի հրամանով, որին Հ. Սվազյանը նույնացնում է Փայտակարանի կառավարիչ Սանատրուկի հետ՝ անվանելով Սանատրուկ-Սանեսան։

Անցնելով Աղվանից մյուս կաթողիկոսների գործունեության քննությանը՝ ուսումնասիրողը, իրավամբ, մեծ տեղ է հատկացնում Տեր Երեմյայի գործունեությանը, որի անվան հետ են կապված Մեսրոպ Մաշտոցի լուսավորչական գործունեությունն Աղվանքում, որ օժանդակությամբ կատարվում է աղվանից գրերի ստեղծումը և Սուրբ Գրքի թարգմանությունը։ Մենագրությունում անդրադարձ է կատարվում նաև աղվանից կաթողիկոսների աթոռանիստներին, մասնավորապես՝ Ջողին, ապա մարզպանության ստեղծումից ՝ 461 թ. հետո Պարտավի դերին՝ որպես աշխարհիկ և հոգևոր կենտրոնի։

Աշխատությունն ավարտվում է «Ամփոփում» բաժնով, ուր ամփոփված են հետազոտության արդյունքները։ Չնայած մասնակի թերությունների ու վիճահարույց հարցադրումների՝ սույն մենագրությունը պահանջված է հայ պատմագիտության կողմից։

Ներկայացվող նյութը ~~բառացիորեն~~ հեղինակի վերջին ուսումնասիրությունն է և հրատարակչությունն այն տպագրության է հանձնել հետմահու՝ տեքստում կատարելով չնչին խմբագրական աշխատանք։

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Սկզբնաղբյուրներ

Հայ մատենագիրները սեփական ժողովրդի պատմությունը հյուսելիս մեծապես անդրադարձել են նաև հարևան ժողովուրդների, այդ թվում՝ աղվանցիների, պատմական անցյալին ու թողել հաղորդումներ, որոնք հնարավորություն են ընձեռում խորությամբ ուսումնասիրել վերջիններիս քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի պատմությունը։ Նույն հեղինակները տեղեկություններ են հաղորդում Բուն ~~(Ռովկատյան)~~ Աղվանք քրիստոնեության ներթափանցման, ծավալման և գերակայության հասնելու մասին, հիշատակում են հոգևոր հայրերին, նշում նրանց կյանքի ու գործունեության զանազան դրվագներ, ընդգծում հարաբերությունները Հայոց եկեղեցու, նրա առաջնորդների հետ և ի ցույց դնում երկու՝ նույնադավան եկեղեցիների գաղափարական միասնությունն ու դավանական համերաշխությունը։ Նրանց չեն զիջում նաև կաթողիկոսական դիվաններում խնամքով պահված վավերագրերը, վարքագրերն ու եկեղեցական ավանդությունները, որոնք իրենց պարունակած ուղղակի ու անուղղակի տեղեկություններով շատ հարցեր են պարզաբանում և ընդգծում ~~են~~ իրադարձությունների իրական ընթացքը։ Նշվածների շարքում առանձնակի հնչեղություն ունի Հայոց Արևելից կողմանց, Աղվանից աշխարհի և Ջողա երկրի լուսավորիչ սբ. Եղիշայի շուրջ տարածված հանրահայտ զրույցը, որը զետեղված է Մովսես Կաղանկատվացու անունով հայտնի «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկասիրության մեջ[1] և Կիրակոս Գանձակեցու (ԺԳ դար) հեղինակած «Պատմություն Հայոց» գրքում[2]։

---

1 Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վարագ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 9-11 /Այսուհետ՝ Կաղանկատվացի/:

2 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա.

Տարբեր մոտեցումներով զրույցին անդրադարձել են նաև այլ մասնագետներ։

Ավանդազրույցը պատմում է հիշյալ տարածքներում քրիստոնեության արմատավորման նպատակով Երուսաղեմից ուղարկված սբ. Թադեոսի աշակերտ Եղիշայի գործունեության, քարոզներով տեղից-տեղ անցնելու, ամենուրեք հանդիպող դժվարությունները հաղթահարելու, հանուն հավատի նահատակվելու մասին։ Պատումում նկարագրվող իրադարձությունները ցույց են տալիս, որ քրիստոնեությունն Աղվանքում դժվարությամբ էր մուտք գործում, և նրա առաջին քարոզիչները հաճախ կյանքի գնով էին իրականացնում իրենց ստանձնած առաքելությունը[3]*։*

Առանցքային նշանակություն ունեն Աղվանից հայրապետների կյանքին ու գործունեությանը, աթոռակալության տարիներին ու ժամանակի անցուդարձերին նվիրված գավազանագրքերը, որոնք մեզ են հասել Մովսես Կաղանկատվացու «Պատմության» երրորդ գրքի հեղինակ, 10-րդ դարի պատմիչ Մովսես Դասխուրանցու (Ժ դար) [4]*, Մխիթար Գոշի (ԺԲ-ԺԳ դդ.)*[5]*, Կիրակոս Գանձակեցու*[6] *և Մխիթար Այրիվանեցու (ԺԳ դար)*[7] *ստեղծագործություններից։ Կազմված լինելով տարբեր ժամանակներում ապրած և ստեղծագործած հեղինակների կողմից՝ այդ գավազանագրքերը ցայտուն արտահայտչականությամբ կենդանացնում են Ք. հ. Բ դարից՝ սբ. Եղիշայի ասպարեզում հայտնվելուց մինչև ԺԳ դարն ընկած ժամանակահատվածում կրոնավորած հոգևոր այրերի բարեպաշտական գործողությունները, եկեղեցական հարաբերություններում նրանց ունեցած մասնակցությունը, քրիստոնեությունն անաղարտ պահելու միտվածությունը և պատմա-*

Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 192-193 /Այսուհետ՝ Գանձակեցի/:

3 Ավանդության մասին հանգամանորեն տես վերը նշված աղբյուրը:

4 Կաղանկատվացի, էջ 341-347:

5 Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վարագ Առաքելյանի, Երևան, 1983, Յաւելուած Բ, էջ 350-351 /Այսուհետ՝ Կաղանկատուացի, Յաւելուած Բ/: Տես նաև Հայապատում պատմիչք եւ պատմութիւք Հայոց, յօրինեալ եւ հաւաքեալ ի Հ. Ղևոնդեայ վ. Մ. Ալիշան աթոռակալ վարդապետէ, Վենետիկ, 1901, էջ 384-386/, /Այսուհետ՝ Հայապատում/:

6 Գանձակեցի, էջ 192-201:

7 Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 19 /Այսուհետ՝ Այրիվանեցի/:

կան այն միջավայրը, որում գործում էին նրանք։ Դրանք պարունակում են տեղեկություններ, որոնք ոչ մի այլ աղբյուրներում չեն հիշատակվում և իրենց այդ առանձնահատկությամբ փոխակերպվում են եզակի նշանակության տեղեկատուների։ Գավազանագրքերն, ընդհանուր առմամբ, ունեն փոխլրացնող բնույթ[8]։

Աղվանից եկեղեցու առաջնորդների և ընդհանրապես, հոգևորականության մասին ամենից շատ ու հաճախակի խոսում է 7-րդ դարի հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացին իր վերոհիշյալ աշխատության մեջ։ Գրելով հիմնականում Հայոց Արևելից կողմանց՝ Ուտիքի և Արցախի, պատմությունը[9]՝ նա գրեթե ամեն առիթով անդրադառնում է Բուն Աղվանքի հոգևոր կյանքին։ Նա հիշատակում է տարածաշրջանի առաջին քարոզիչներին, անուն առ անուն թվարկում սկզբից մինչև իր ժամանակները գործած հայրապետներին, դրվատում նրանց, միաժամանակ դատապարտում ուղղափառ հավատից շեղված գործիչներին։ Նա մեկն է այն պատմիչներից, որոնք հավաստում են, որ Աղվանից եկեղեցու առաջնորդներն իրենց ձեռնադրությունն ստանում էին հայոց կաթողիկոսներից[10]։

Կաղանկատվացին անդրադարձել է նաև Սբ. Մեսրոպ Մաշտոցի հանճարով Աղվանից գրերի արարման պատմությանը և վեր հանել հայ և աղվանից հոգևոր դասի մասնակցությունը պետական նշանակություն ունեցող այդ գործընթացում։ Զափազանց ուշագրավ են նրա տեղեկությունները երկրի հասարակական կյանքի, բնակչության բարքերի ու ընտանեկան հարաբերությունների (հատկապես այդ ժամանակ կենցաղում լայն տարածում գտած արյունակից ազգականների միջև ամուսնությունն-

---

8 Նշված գավազանագրքերի մասին մանրամասն տես Հ. Ս. Սվազյան, Աղվանքի հոգևոր առաջնորդները նախակաթողիկոսական շրջանում, Պատմա-բանասիրական հանդես, 2004, թ. 3, էջ 189-198: Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, Ս. Էջմիածին, 2019, էջ 91-103:

9 Կաղանկատվացու այս աշխատության՝ որպես սկզբնաղբյուրի տեսական քննությունը հանգամանորեն տես Հ. Ս. Սվազյան, Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից-VIII դարը ներառյալ), Երևան, 2006, էջ 9-14: Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, էջ 18-20:

10 Կաղանկատվացի, էջ 266-269:

րի) և դրանց նկատմամբ եկեղեցու ցուցաբերած վերաբերմունքի մասին։

Կաղանկատվացու երկը շարունակում է նրա անվանակիցը Դասխուրան գյուղից և նկարագրվող պատմական իրադարձությունների ընթացքը, ժամանակագրորեն հասցնում մինչև իր օրերը՝ 10-րդ դարը[11]։

Անգնահատելի է քննարկվող երկասիրության սկզբնաղբյուրային արժեքը։ Պատմիչներին հասու են եղել հույժ կարևոր վավերագրեր արքունի և եկեղեցական դիվաններից։ Այդ սկզբնաղբյուրի էջերը հարուստ են վավերագրերից արված մեջբերումներով, որոնք առավել մեծացնում են հաղորդվող տեղեկության արժանահավատությունը։ Այս հատկանիշները սույն ստեղծագործությանը հաղորդում են ~~գաղափար~~ նախաստեղծ գրվածքի նշանակություն։ Այս մասին է վկայում նաև այն փաստը, որ «Աղուանից աշխարհի պատմութիւն» վերտառությամբ մեզ հասած աշխատությունը աղբյուր է ծառայել նաև ավելի ուշ ժամանակներում Բուն Աղվանքին ու Հայոց Արևելից կողմերին անդրադարձած մի խումբ հայ մատենագիրների համար[12], իբրև հաղթաթուղթ օգտագործվել Աղվանից հայրապետների նկատմամբ հայոց կաթողիկոսների ունեցած գերագահության շուրջ ծագած վեճերում[13]։

Աղվանքում աթոռակալած հոգևոր առաջնորդների գործունեությունը լուսաբանվում է նաև Մխիթար Գոշի և Կիրակոս Գանձակեցու տեղեկություններով, որոնցով առլեցուն են նրանց աշխատությունները, առանձնապես՝ իրենց իսկ կազմած գավազանագրքերը։ Վերջիններիս՝ մինչև 10-րդ դարն ընկած ժամանակահատվածի ցանկերը գրեթե նույնությամբ կրկնում են Աղուանից աշխարհի պատմության գավազանացանկերին, իսկ հետագա ժամանակահատվածի համար պարունակում են ման-

---

11 Բովանդակ գրքում արծարծվող եկեղեցական շատ հարցերի քննությունն առավել հանգամանորեն տես ստորև։

12 Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, էջ 19։

13 Տեառն Անանիայի Հայոց Կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ Սուրբ Լուսաւորչի Աթոռոյն, Արարատ, Վաղարշապատ, 1857, թ. Գ, էջ 135 /Այսուհետ՝ Անանիա Մոկացի, Թուղթ Ա/։

րամասն ու հետաքրքիր տեղեկություններ այդ ընթացքում գահակալած հայրապետների գործունեության մասին[14]*։*

Մասնավորապես Կիրակոս Գանձակեցին իր մի շարք հաղորդումներով ներկայացնում է Աղվանքում 7-րդ դարում ստեղծված կրոնական տարտամ իրավիճակը, քաղկեդոնականության աշխուժացումը, դատապարտում այդ դավանությանը հարած կաթողիկոսի ու առաջին տիկնոջ վարքագիծը և գոհունակությամբ խոսում նրանց երկրից արտաքսելու մասին[15]*։ Նա Աղվանքի հոգևոր առաջնորդներին դիտում է որպես հայերի ազգակիցներ ու հավատակիցներ*[16] *և նույնպես հայտնում, որ նրանք ձեռնադրվում էին «ի սրբոյն Գրիգորէ և յաթոռակալաց նորա»*[17]*։*

Կիրակոս Գանձակեցու տեղեկությունները խիստ կարևոր են խնդրո առարկա թեմայի ուսումնասիրման համար. դրանք դիմացել են ժամանակի քննությանը և աչքի են ընկնում իրենց արժանահավատությամբ։

Աղվանից եկեղեցուն և նրա առաջնորդների գործունեությանը վերաբերող սկզբնաղբյուրների շարքում առանձնակի կարևորություն ունի նաև Մխիթար Գոշի ներկայացրած գավազանագիրքը։ Դրա հիմքում, ինչպես նշեցինք, «Աղուանից աշխարհի պատմութիւն»-ից հայտնի գավազանացանկն է, որը Մխիթար Գոշը զետեղել է իր «Դատաստանագրքում»՝ հաջորդ սերունդներին հորդորելով շարունակել և լրացնել այն[18]*։ Ցանկում առաջինը հիշատակում է սբ. Եղիշային և շեշտում, որ նա եկել էր Երուսաղեմից*[19]*, թվարկում հաջորդներին և հասնելով Սբ. Գրիգորիսին՝ իր հերթին նշում, որ նա իր պապի՝ Սբ. Գրիգոր Լուսավորչի կողմից նշանակվում է Աղվանից կաթողիկոս տասնհինգ տարեկանում, աղվանցիների իսկ խնդրանքով և նահատակվում բարբարոսների ձեռքով*[20]*։ Բացառիկ են ցանկում տեղ գտած նրա հաղորդումներն Աղվանից առաջնորդանիստ կենտրոնների մա-*

---

14 Գանձակեցի, էջ 192-201: Կաղանկատուացի, Յաւելուած Բ, էջ 350-357: Հայապատում, էջ 384-391:

15 Գանձակեցի, էջ 196-197:

16 Նույն տեղում, էջ 192:

17 Նույն տեղում:

18 Կաղանկատուացի, Յաւելուած Բ, էջ 350-357: Հայապատում, էջ 384-391:

19 Նույն տեղերում:

20 Նույն տեղերում:

սին։ Ըստ այդ հաղորդումների՝ Մանուկ Գրիգորիսին հաջորդած չորս հայրապետների նստոցը մինչև հայոց թվականի սկիզբը՝ 552 թ., եղել է Զողը[21]։ Երկրի նոր հոգևոր առաջնորդները, գործելով իրենց ժամանակաշրջանին հանգույն, իրենց նստավայրը փոխադրում են Պարտավ քաղաք և սկսում իրենց թղթերը հասցեատերերին ուղարկել «Աղուանից, Լփնաց և Զողայ կաթողիկոսէ» գրությամբ[22]։

«Դատաստանագրքի» հայտնի հեղինակն իր ցանկը կազմելիս չի սահմանափակվել լոկ Աղվանից հայրապետներին անվանապես թվարկելով ու նրանց աթոռակալության տարիները նշելով։ Նրանում հնչեցրած ամեն մի անուն ուղեկցվում է անվանատիրոջ գործունեության որևէ դրվագի կամ նրա ժամանակ տեղի ունեցող ինչ-ինչ իրադարձության նկարագրություններով, որոնք հայտածում են երկրի հոգևոր ու քաղաքական կյանքի շատ կողմեր։ Քիչ չեն նաև տարածաշրջան թափանցած օտար նվաճողների ու նրանց տիրապետության շրջանում Հայոց ու Աղվանից եկեղեցիների վարած կրոնական քաղաքականությանը վերաբերող նյութերը, որոնք անսքող թափանցիկությամբ վեր են հանում ընդհուպ 13-րդ դարն ընդգրկող պատմական իրողությունները և վերը նշած բացառիկ տեղեկություններով հանդերձ՝ այն վերածում առաջնակարգ սկզբնաղբյուրի։

Աղվանից հայրապետների ցանկն իր գրքում ներառել է նաև 13-րդ դարի մի ուրիշ պատմիչ՝ Մխիթար Այրիվանեցին, որը, սակայն, նշում է սոսկ նրանց անուններն ու աթոռակալության տարիները՝ առանց լրացուցիչ տեղեկությունների[23]։ Չնայած դրան՝ լինելով եղածների պարզ կրկնությունը՝ այն լռելյայն հաստատում է Աղվանից հայրապետների համար մյուս գավազանագրքերում առկա տվյալները և այդպիսով նույնպես դասվում ուսումնասիրվող թեմային առնչվող սկզբնաղբյուրների շարքը։

Քրիստոնեության Աղվանք թափանցման մասին առաջինը խոսում է Ագաթանգեղոսը։ Նշելով, որ Հայոց արքա Տրդատ Գ-ի (298-330) ջանքերով քրիստոնեությունն արդեն մուտք էր գործել Հայաստան, հասել Մասքթաց երկիր ու Կասպից ծովի առափնյա

21 Նույն տեղերում։
22 Նույն տեղերում։
23 Այրիվանեցի, էջ 19։

շրջաններ[24]՝ նա հանգեցնում է այն տրամաբանական եզրակացության, որ 4-րդ դարում նոր կրոնը հաստատվել էր նաև Աղվանքում: Նրա մի այլ հաղորդման համաձայն՝ դա իրականություն էր դարձել Գրիգոր Լուսավորչի կողմից ուղարկված Սուրբ Գրքերին ծանոթ քարոզիչների կողմից[25]:

Հարևան երկրներ քարոզիչներ ուղարկելու և տեղերում նրանց ծավալած գործունեության մասին խոսում է նաև Փավստոս Բուզանդը: Վերջինիս պատմելով՝ Գրիգոր Լուսավորիչը քրիստոնեություն տարածելու նպատակով եպիսկոպոս է նշանակում իր թոռանը՝ Մանուկ Գրիգորիսին և ուղարկում Հայոց Արևելից կողմեր, որտեղ նա մեծ արդյունավետությամբ քարոզչական աշխատանքներ է տանում: Ըստ նրա՝ Լուսավորչի թոռը տարբեր վայրերում եկեղեցիներ է կառուցում, աշակերտներ պահում և ուսուցանում[26]:

Մանուկ Գրիգորիսի մասին նույնը պատմում է նաև պատմահայր Մովսես Խորենացին՝ ավելացնելով, որ սուրբը բարբարոսների կողմից սպանվել է Վատնյան դաշտում՝ «մերձ ի Կասբիականն կոչեցեալ ծով»[27]:

Հայ պատմագիրների հաղորդումներից հետևում է, որ Աղվանքի հոգևոր այրերը կրոնականից զատ գործուն մասնակցություն են ունեցել նաև երկրի հասարակական կյանքում տեղի ունեցող անցուդարձերին և իրենց ողջ կարողությամբ նպաստել են նրա հոգևոր վերելքին: Դա պարզորոշ երևում է Կորյունի հա-

---

24 Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 468 /Այսուհետ՝ Ագաթանգեղոս, Պատմութիւն/:

25 Ագաթանգեղոսի պատմության հունարեն նորահայտ խմբագրությունը (Վարք), թարգմանություն հունարեն բնագրից՝ Հ. Բարթիկյանի, առաջաբան և ծանոթագրություն՝ Ա. Տեր-Ղևոնդյանի: Նյութը տես Հ. Մ. Բարթիկյան, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հտ. առաջին, Երևան, 2002, էջ 166-180 /Այսուհետ՝ Ագաթանգեղոս, Վարք/:

26 Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանյանի, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987, էջ 24-26 /Այսուհետ՝ Բուզանդ/:

27 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երևան, 1991, էջ 259-260 /Այսուհետ՝ Խորենացի/:

ղորդումներից, որոնք առանձնակի կարևորություն են ստանում Աղվանից գրերի արարման պատմության ուսումնասիրման գործում և դրանից հետո Աղվանքում քրիստոնեության բուռն վերելքի մասին բերված տեղեկությունների քննության ժամանակ։ Գրելով Մեսրոպ Մաշտոցի կենսագրությունը՝ Կորյուն վարդապետը հայտնում է, որ Աղվանից գրի ու դպրության ստեղծման շրջանում ուսուցչապետին մեծ աջակցություն է ցույց տվել թագավորը տեղի եպիսկոպոսապետի և Սյունիքից ժամանած հայ կրոնավորների հետ միասին[28] *և այդ օրինակով վեր հանել Հայոց և Աղվանից հոգևորականության առաջատար դերը տարածաշրջանի հասարակական կյանքում և հոգևոր ոլորտում։ Կորյունի բերած տվյալները ցույց են տալիս նաև, որ Աղվանից եպիսկոպոսական կենտրոնը տեղակայված էր Կապաղակում, որն այդ ժամանակներում երկրի գլխավոր քաղաքն էր՝ մայրաքաղաքը։*

9-րդ դարի երկրորդ և 10-րդ դարի առաջին կեսում է ապրել պատմիչ-կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին, որն իր հեղինակած աշխատության մեջ, պատմական նյութին առընթեր, անդրադարձել է նաև Աղվանքի հոգևոր կյանքին և ուշադրության արժանի տեղեկություններ թողել հարևան այս երկրների եկեղեցական գործիչների, նրանց համագործացության և իր ժամանակներում հասարակության միտքը խռովող դավանաբանական վեճերի մասին[29]*։ Նրա հաղորդումներն իրենց բազմակողմանիությամբ ու խորությամբ զգալիորեն օժանդակում են սույն աշխատությունում քննարկվող շատ հարցերի լուսաբանմանը, ուստի և իրենց արժանի տեղն ունեն համանման հաղորդումների շարքում։*

Ուսումնասիրվող թեմային անմիջականորեն առնչվող սկզբանաղբյուրներից է տարբեր ժամանակներում կրոնավորած հոգևոր գործիչների նամակների, կոնդակների ու զանազան այլ գրությունների ժողովածուն, որը մեզ է հասել «Գիրք Թղթոց» անվամբ[30]*։ Նրանում զետեղված յուրաքանչյուր գրություն ինքնին*

---

28 Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 2005, էջ 72 /Այսուհետ՝ Կորյուն/:

29 Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցի, Պատմություն Հայոց, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ. Բ. Թորոսյանի, Երևան, 1996 /Այսուհետ՝ Դրասխանակերտցի/:

30 Գիրք Թղթոց: Մատենագրութիւն նախնեաց, (Սահակ Մեսրոպեան Մա-

մի տեղեկատու է տվյալ շրջանում գործող հոգևոր առաջնորդի կյանքի ու գործունեության մասին, արտացոլում է երկրում տիրող իրավճակը և բացահայտում միջեկեղեցական հարաբերությունները։ Ժողովածուում տեղ գտած այդպիսի նյութերը պարզորոշ ցույց են տալիս քաղկեդոնականության, նեստորականության և զանազան այլ աղանդների ողջ վտանգը, կոչ անում ուժեղացնել պայքարը նրանց դեմ, արգելել նմանների գործունեությունն ու վտարել երկրից[31]։ Ասվածի շնորհիվ էլ այն եկեղեցական գրագրությունների պարզ հավաքածուից ներկա աշխատության համար վերածվում է բազմաբովանդակ սկզբնաղբյուրի։

Համանման սկզբնաղբյուր է նաև Հովհաննես Գ Հայոց կաթողիկոսի՝ Հովհան Օձնեցու (Իմաստասերի, 717-728) կազմած և հետագայում ~~առանձին մարդկանց կողմից կատարած~~ լրացումներով հարստացած եկեղեցական կանոնների ժողովածուն՝ «Կանոնագիրք Հայոց» խորագրով, որը երկու հատորով հրատարակել է բազմաշխատ գիտնական Վազգեն Հակոբյանը[32]։ Նրանում մեկտեղված կանոնները, որոնք նաև իրավաբանական փաստաթղթի նշանակություն ունեն, լույս են սփռում ինչպես Հայաստանի, այնպես էլ Աղվանից աշխարհի քաղաքական, սոցիալ-տնտեսական ու հոգևոր կյանքի վրա, բացահայտում հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունների շատ կողմեր և վեր հանում քրիստոնեության անցած ճանապարհը նաև Աղվանից աշխարհում։ Լինելով իրենց ժամանակների արգասիք՝ այդ կանոնախմբերը արտահայտում են հասարակական տրամադրությունները, պատկերում քաղաքական իրավիճակն ու հայտածում եկեղեցական կյանքը տարածաշրջանում, ինչն էլ պայմանավորել է նշված կոթողային աշխատության սկզբնաղբյուրային արժեքը։

տենադարան Ե.), Թիֆլիս, 1901, ԺԸ, 584 էջ /Այսուհետ՝ Գիրք Թղթոց/:

31 Նույն տեղում, էջ 281-284:

32 Կանոնագիրք Հայոց, Ա., (Նյութեր հայ ժողովրդի պատմության, գիրք իններորդ), աշխատասիրությամբ՝ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, LXXIX, 742 էջ /Այսուհետ՝ Կանոնագիրք Հայոց, Ա/: Կանոնագիրք Հայոց, Բ., (Նյութեր հայ ժողովրդի պատմության, գիրք տասներկուերորդ), աշխատասիրությամբ՝ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1971, ~~CXX, 475 էջ~~ / Այսուհետ՝ Կանոնագիրք Հայոց, Բ/:

Հայոց ու Աղվանից ~~ուղղափառ~~ և բյուզանդական հունադավան եկեղեցիների միջև ծավալված դավանաբանական պայքարի շուրջ հետաքրքիր դիտարկումներով է հանդես եկել 7-8-րդ դարերի մի անանուն քաղկեդոնիկ հայ հեղինակ «Պատմություն Հայոց խնդիրների մասին» վերնագրած իր աշխատության մեջ[33]*: Այստեղ հեղինակը շարադրում է Հայոց եկեղեցու պատմությունը 4-րդ դարից մինչև 7-րդ դարը ներառյալ և ներկայացնում միաբնակների ու երկաբնակների միջև ընթացող դավանաբանական պայքարը: Նրա գունեղ նկարագրություններից պարզորոշ նկատվում է, որ այդ պայքարը որքան կրոնական էր, նույնքան էլ քաղաքական և մղվում էր նաև հանուն աշխարհիկ գերիշխանության: Հեղինակը, որպես հունադավան եկեղեցու հետևորդ, շատ հարցեր լուսաբանում է այդ տեսանկյունից, իրադարձությունների յուրովի մեկնաբանություններով հակադրվում միաբնակներին և փորձում հերքել նրանց դրույթները: Նույն տրամադրվածությամբ նա մոտենում է նաև հայ-աղվանական եկեղեցական հարաբերություններին և բացասաբար խոսում քաղկեդոնականության դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով ծիսական արարողություններում հակաքաղկեդոնական դրույթներ մտցնելու հայոց կաթողիկոսների կողմից Աղվանքի իրենց պաշտոնակիցներին արված առաջարկների մասին*[34]*:*

Մեծ Հայքում, հատկապես նրա Հյուսիսարևելյան կողմերում, քրիստոնեության տարածման մասին է խոսում Մխիթար Գոշի աշակերտ, 13-րդ դարի պատմիչ Վանական վարդապետը[35]*: Նրա տեղեկությունների համաձայն՝ նշված կողմերում հայտնված առաջին քարոզիչները Թադեոս առաքյալի աշակերտներն էին, որոնք իրենց ուսուցչի հրամանով եկել էին «ի կողմանս*

---

33 Հ. Բարթիկյան, “Narratio de rebus Armenia” հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ քաղկեդոնական սկզբնաղբյուր: Նյութը տես Հ. Մ. Բարթիկյան, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հտ. առաջին, էջ 97-110 /Այսուհետ՝ Narratio/: Աշխատության սկզբնաղբյուրային արժեքորումը տես Կ. Մելիքյան, “Narratio de rebus Armeniae» հայ-քաղկեդոնական երկը վաղ միջնադարյան Հայոց եկեղեցու պատմության կարևոր սկզբնաղբյուր, Երևան, 2007, 165 էջ:

34 Narratio, էջ 105-106:

35 Գիրք Թղթոց, էջ 536: Տես նաև Հայապատում, էջ 47:

Աղուանից», մտել Փոքր Սյունիք (Արցախ – Հ.Ս.)[36]*, գաղտնաբար կամ, ինչպես ինքը՝ պատմիչն է ասում, «ծածկաբար»*[37] *նպատակաուղղված գործունեություն ծավալել ու շատերի նման հանուն հավատի ընդունել նահատակության պսակը*[38]*։*

Այսպիսով, Վանական վարդապետն իր այս հակիրճ, բայց խոսուն հաղորդումներով ցույց է տալիս քրիստոնեության տարածման սահմանները և այն միջավայրը, որի միջով անցնում էր նորածագ կրոնը մինչև գերակայության հասնելը։

Նշված այս սկզբնաղբյուրների թիվը, առանց բացառության, ավելացնում են եկեղեցիների, կրոնական տարբեր շինությունների, խաչքարերի, տապանաքարերի ու զանազան հուշարձանների վրա դրոշմված արձանագրությունները, որոնք սփռված են ողջ տարածաշրջանով մեկ և իրենց անեղծելի բնույթով հավաստի տեղեկատուներ են տվյալ ժամանակաշրջանում Բուն Աղվանքում և Հայոց Արևելից կողմերում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ[39]*։*

* * *

Աշխատության մեջ քննարկվող առանձին հարցեր լուսաբանվում են նաև ասորի ու վրացի հեղինակների տեղեկություններով։ Լինելով քրիստոնյա և քրիստոնյա աշխարհում տեղի ունեցող կրոնական հուզումների անմիջական մասնակիցներ՝ նրանք չափազանց ուշագրավ տեղեկություններ են թողել նաև աղվանցի ու հայ հոգևոր առաջնորդների, նրանց համագործակցության, հանուն հավատի խոշոր տերությունների հակադրվելու և դավանաբանական վեճերի մասին։ Նրանց հաղորդումները տանում են պատմական այն հեռավոր ժամանակները, երբ տարածաշրջանում դեռևս Թադեոս առաքյալի աշակերտներն էին քարոզչական աշխատանքներ տանում և հանուն Քրիստոսի նահատակվում։

---

36 Նույն տեղերում:

37 Նույն տեղերում:

38 Նույն տեղերում:

39 Դրանց մի մասը հավաքել ու իր աշխատություններում հրատարակել է Մ. Բարխուտարյանցը, իսկ հիմնականում՝ Ս. Բարխուդարյանը: Տես Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1982, 348 էջ:

Նրանց պատմելով ևս քիրստոնեությունն Աղվանք էր թափանցել Մեծ Հայքից և գործել դժվարին ու վտանգներով լի պայմաններում։

Անդրադառնալով եկեղեցական խնդիրներին՝ նրանցից պատրիարք Միքայել Ասորին իր «Ժամանակագրութիւն» վերնագիրը կրող աշխատության մեջ Գրիգոր Լուսավորչին Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների հետ միասին դիտում է որպես Հայոց, Աղվանից ու Վրաց երկրների լուսավորիչ, հիշատակում նրանց ձեռնադրած հոգևոր առաջնորդներին և նրանցից ոմանց կոչում «կաթողիկոս»[40]*։*

Հայոց, Աղվանից, Վրաց, Սիսական ու Բազգուն երկրների ճակատագրերի ընդհանրությունն է երևակում Միտիլենայի եպիսկոպոս Զաքարիա Միտիլենացին, ով հայտնի է նաև իր հեղինակած «Ժամանակագրութիւն» աշխատությամբ և «Հռետոր» մականվամբ։ Գրելով, որ նշված երկրները միասին ունեն քսանչորս եպիսկոպոս և մեկ ընդհանուր կաթողիկոս, որի անունը Գրիգոր է և նստում է Դվինում[41]*՝ 6-րդ դարի հեղինակը վեր է հանում հայոց կաթողիկոսի գերակա դիրքը և հնարավորություն ընձեռում մակաբերելու, որ նրանք համախմբված են եղել եկեղեցական մեկ միության մեջ, ենթարկվել են հայոց կաթողիկոսին և գործել նրա վերահսկողության ներքո։*

Արժանահավատ են ասորի հեղինակների հաղորդումները, քանի որ, իրենց իսկ խոստովանությամբ, այդ հաղորդումների հիմքում ընկած են Աղվանքում և հարևան երկրներում երկար տարիներ ապրած ականատեսների պատմությունները[42]*։*

Հետազոտվող թեմայի շուրջ կարևոր տեղեկություններ են հայտնում նաև վրացական աղբյուրները և մեծ չափով հաստատում կամ լրացնում այլ աղբյուրներում առկա նմանաբնույթ տեղեկությունները։ Նրանք՝ Հակոբ երեց (5-րդ դար), Արսեն Սա-

---

40 Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորւոց Պատրիարքի հանեալ ի հնագոյն գրչագրէ, յԵրուսաղէմ, 1871, էջ 127-133 / Այսուհետ՝ Միքայել Ասորի/:

41 Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 8, Ասորական աղբյուրներ, Ա., թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Գ Մելքոնյանի, Երևան, 1976, էջ 313:

42 Նույն տեղում, էջ 315:

փարացի (9-րդ դար), Անանուն (9-րդ դար)[43]*, Սմբատ Դավիդիս-ձե (10-րդ դար) և ուրիշներ, ևս փաստում են հայ և աղվանցի հոգևոր առաջնորդների դավանական միասնությունը և արտա-ցոլում այն համատեղ պայքարը, որ մղում էին նրանք իրենց գա-ղափարական հակառակորդների դեմ։ Այնուհանդերձ ամենից շատ նրանք խոսում են Հայոց և Վրաց եկեղեցիների բաժանման մասին, նշում հայերին հավատարիմ մնալու աղվանցիների հաս-տատակամությունը, յուրովի մեկնաբանում սեփական կաթողի-կոսների վարած քաղաքականությունը*[44] *և, որ առանձնապես կարևոր է, հատուկ շեշտում, որ Վրաց հոգևոր գործիչներն ևս ժամանակաշրջանի մի որոշակի հատվածում իրենց ձեռնադ-րություններն ստանում էին հայոց կաթողիկոսներից*[45]*։ Նրանք նմանապես անդրադառնում են Աղվանքում օտար նվաճողների, մասնավորապես, Բյուզանդիայի ու Սասանյան Իրանի վարած կրոնական քաղաքականությանը և անվերապահորեն հայտա-րարում, որ աղվանցիները քրիստոնեությունն ընդունել են Հե-րակլ կայսեր օրոք (610-641) և նրա կողմից։*

Վրաց պատմիչների աշխատություններն ժամանակաշրջանի շնչով գրված ուրույն ստեղծագործություններ են, և երեք ժո-ղովուրդների եկեղեցական փոխհարաբերությունների մասին իրենց պարունակած տեղեկություններով ներկա աշխատութ-յան համար դառնում են առաջնակարգ սկզբնաղբյուրներ[46]*։*

Բ. Ուսումնասիրություններ

Աղվանից աշխարհի հոգևոր կյանքն իր ներքին ու արտաքին դրսևորումներով շարժել է նաև ուսումնասիրողների հետաքրք-րությունը, և նրանք հաճախ անդրադառնալով այդ թեմային՝ գիտական բարձր աստիճանի են հասցրել ոլորտի հետազոտութ-յունը։ Ընդարձակ է այդ հետաքրքրությունների շրջանակը, բազ-

[43] Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հտ. Ա, Ե-ԺԲ դարեր, Երևան, 1934, 270 էջ /Այսուհետ՝ Վրաց աղբյուրները/:

[44] Վրաց աղբյուրները, էջ 34-36:

[45] Նույն տեղում, էջ 39:

[46] Ասորի և վրացի հեղինակների աշխատությունների սկզբնաղբյուրային արժեքների մասին տես նաև Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղե-ցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, էջ 27-29:

մազան՝ քննարկվող հարցերի շրջանակը՝ քրիստոնեության Աղվանք մուտք գործելուց սկսած մինչև տիրապետության հասնելը և ավելի ուշ ընկած ժամանակաշրջանը[47]։

* * *

Ժամանակագրական առումով պատմագիտական գրականության մեջ առաջիններից էր Սիմեոն Ա Հայոց Կաթողիկոսի (1763-1780)՝ Մայր Աթոռի և նրա շրջակա վանքերի նկարագրությանը նվիրված աշխատությունը, ուր պարզ ու անպաճույճ շարադրանքով ներկայացվում են դրանք, վեր հանվում քաղաքական, իրավական ու կրոնական այն իրադրությունը, որն, ըստ էության, պայմանավորում էր այդ վանքերի կենսագործունեությունը[48]։ Աշխատությունում հեղինակը մի ամբողջ գլուխ (Ժ գլուխը) է հատկացրել քրիստոնեության Աղվանք թափանցելուն, տարածվելուն, պաշտոնապես ճանաչվելուն՝ սկզբից մինչև իր ժամանակները, այն է՝ 18-րդ դարը[49]։ Նկարագրելով քրիստոնեության նախնական քայլերն Աղվանքում՝ Հայոց Կաթողիկոսը, օգտվելով «ի ճշմարտապատում պատմագրացն»[50], անդրադառնում է առաջին քարոզիչներին՝ Թադեոս առաքյալին, նրա աշակերտ Եղիշային, Գրիգոր Լուսավորչին, վերջինիս թոռ Գրիգորիսին, պատմում նրանց գործերի մասին և վեր հանում քրիստոնեության հաղթական ընթացքը Մեծ Հայքում, Աղվանքում և Վիրքում[51]։ Սիմեոն Ա Հայոց Կաթողիկոսը Աղվանքում նոր կրոնի սաղմնավորումը նույնպես կապում է Թադեոս առաքյալի անվան հետ, նրա գործի շարունակող համարում Եղիշային, իսկ Գրիգոր Լուսավորչին դիտում որպես նշված երկրների լուսավորիչ։ Առանձնակի ուշադրության է արժանի նրա այն հաղորդումը, որի համաձայն Հայոց և Աղվանից եկեղեցիների միջև

---

47 Նույն տեղում, էջ 30-49:

48 Ջամբռ: Գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս և իւրոյ շրջակայից վանօրէիցն, համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի Սիմէօնէ ցաւահար եւ վշտակոծ Կաթուղիկոսէ Երեւանցւոյ, Վաղարշապատ, 1873, էջ 63-91 /Այսուհետ՝ Ջամբռ/:

49 Նույն տեղում:

50 Նույն տեղում, էջ 74:

51 Նույն տեղում, էջ 65, 69:

ի հնուց անտի հաստատված փոխհարաբերությունները գործում են նաև իր օրերում և ի հաստատումն ասածի՝ նշում հայոց կաթողիկոսների կողմից Աղվանից հայրապետներին օծելու փաստը, Սյունյաց եպիսկոպոսներին տրվող «մետրոպոլիտ» տիտղոսը[52] *և այլն։*

Սիմեոն Երևանցին անդրադառնում է ներեկեղեցական խնդիրներին, հիշատակում Հայոց եկեղեցու դեմ ընդվզած հոգևոր առաջնորդներին, նշում նրանց նկատմամբ ձեռնարկված միջոցներն ու վերադարձը Հայոց եկեղեցու գիրկը[53]*։ Գրքում կաթողիկոսն իր ուշադրությունը բևեռում է քաղկեդոնականների վրա, դատապարտում նրանց ուսմունքը, վերհիշում Հայոց և Աղվանից հոգևորականության պայքարն այդ դավանանքի ու նրա հետևորդների դեմ և իր հերթին ընդգծում, որ դավանաբանական պայքարում Հայոց և Աղվանից եկեղեցիները եղել են համերաշխ և միշտ կամ գրեթե միշտ հանդես են եկել համատեղ*[54]*։ Խոսելով ընթացիկ իրադարձությունների մասին՝ Սիմեոն Երևանցին նաև հայտնում է, որ եկեղեցական ժողովներին իրենց գործուն մասնակցությունն են բերել նաև Աղվանից կաթողիկոսության առաջնորդներն ու բարձրաստիճան այլ եկեղեցականներ, անմիջական դերակատարություն են ունեցել նոր կանոնների ընդունման գործում։ Նա ուշադրություն է դարձրել նմանապես Հայոց և Աղվանից առաջնորդանիստ կենտրոնների վրա, նշել նրանց աստանդական վիճակը և դա իրավամբ համարել գերիշխող տերությունների վարած խտրական քաղաքականության հետևանք*[55]*։ Անդրադառնալով Հայոց, Աղվանից և Վրաց եկեղեցիների առաջնայնության խնդրին՝ Սիմեոն կաթողիկոսն արձանագրում է, որ 6-7-րդ դարերում հայոց կաթողիկոսն ուներ պատրիարքի, Աղվանիցը՝ արքեպիսկոպոսի, իսկ Վիրքի հովվապետը՝ մետրոպոլիտի կարգավիճակ*[56]*։ Նա շոշափում է նաև այլ խնդիրներ, վերապատմում Աղվանքի ու ողջ տարածաշրջանի հոգևոր կյանքում տեղի ունեցած շատ իրադարձություններ, ~~վերլուծում~~*

---

52 Նույն տեղում, էջ 75:
53 Նույն տեղում, էջ 69, 74:
54 Նույն տեղում, էջ 66-67:
55 Նույն տեղում, էջ 67:
56 Նույն տեղում, էջ 73:

~~դրանք և մատնանշում Հայոց և Աղվանից եկեղեցիների նվիրապետական ակնհայտ նմանությունները։~~

Աղվանքի հոգևոր առաջնորդների ցանկ է կազմել էջմիածնի միաբան Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցը[57]։ Սկսելով Եղիշա առաքյալից՝ նա մինչև 13-րդ դարն հովված հայրապետներին նշում է ըստ Կաղանկատվացու և Գանձակեցու գավազանագրքերի, ապա շարունակելով հասցնում մինչև Աղվանքի վերջին կաթողիկոս Սարգիս Ջալալյանցը (Սարգիս Բ Գանձասարեցին), որն այդ պաշտոնը վարում է մինչև 1815 թ. և վախճանվում է 1828 թ.[58]։ Չնայած նրա ցանկի հիմքում ընկած են վերոհիշյալ երկու աղբյուրների տվյալները, այնուհանդերձ, նա դրանում Եղիշայից հետո ներառում է նմանապես «ոմն մեկի», որին, թեպետև կոչում է «առաջնորդ Աղուանից»[59], սակայն գործերի մասին ոչինչ չի ասում։ Մատնանշելով հիշատակվածների աթոռակալության տարիներն ու առանձին պատառիկներ նրանց գործունեությունից՝ Հովհաննես Շահխաթունյանցը թույլ է տալիս որոշակի շեղումներ, նոր անուններ հավելում և Աղվանից հայրապետների հայտնի ցանկն ընդարձակում։

Սույն ուսումնասիրության համար անառարկելի կարևորության գործեր են Մաղաքիա արք. Օրմանյանի ~~«Հայոց եկեղեցի» և~~ «Ազգապատում» աշխատությունները։ Նրանցում եկեղեցական կյանքին լավատեղյակ հեղինակը քննում է հայոց եկեղեցու և նրա բնույթին աղերսվող հարցեր և համանման վիճակ պատկերում նաև Աղվանից եկեղեցու համար։ Նա հիշատակում է սբ. Եղիշային ու առաքելաշավիղ այն քարոզիչներին, որոնք վաղ քրիստոնեության շրջանում գործում էին Աղվանքում և Հայոց հյուսիսարևելյան կողմերում, նշում Հայոց եկեղեցու և նրա առաջնորդների գերակա դիրքը տարածաշրջանում և վեր հանում վերջիններիս վճռորոշ դերակատարությունը հայ-աղվանական եկեղեցական հարաբերություններում[60]։

---

57 Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց Շահրիարցւոյ միաբանի Սրբոյ Էջմիածնի, հտ. երկրորդ, Ս. Էջմիածին, 1842, էջ 334-349 /Այսուհետ՝ Ստորագրութիւն ... հտ./:

58 Ստորագրութիւն, հտ. երկրորդ, էջ 349:

59 Նույն տեղում, էջ 334:

60 ~~Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Հայոց եկեղեցին եւ իր պատ-~~

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին լույս են տեսնում Շամախու եկեղեցու քարոզիչ, եպիսկոպոս Մակար Բարխուդարյանցի՝ մեկը մյուսին լրացնող աշխատություններն Աղվանքի, Դաղստանի, Ուտիքի ու Արցախի պատմության՝ ներառյալ նրանց եկեղեցական կյանքի վերաբերյալ[61]։ Ողջ տարածաշրջանով մեկ շրջագայած և տեղացիներից շատերի հետ զրուցած եպիսկոպոսը հայկական աղբյուրների տեղեկությունների համադրությամբ նշում է առաջին քարոզիչներին ու նրանց քարոզչության վայրերը, բարձր գնահատում Աղվանքում քրիստոնեության տարածման գործում Մեծ Հայք ուղարկված քարոզիչների դերը և ընդգծում հայերի ու աղվանցիների ճակատագրական ընդհանրությունը նաև հավատի հարցերում[62]։ Նա հաստատում է, որ Աղվանքն ունեցել է իր առանձին կաթողիկոսությունը, եպիսկոպոսություններն ու համապատասխան այլ կառույցներ[63]։

Մ. Բարխուտարյանցը ևս արձանագրում է, որ Աղվանից կաթողիկոսներն իրենց ձեռնադրություններն ստանում էին Գրիգոր Լուսավորչի փոխանորդներից, անդրադառնում հայ-աղվանական եկեղեցական հարաբերություններին, քրիստոնյա Արևելքում ծավալված կրոնա-քաղաքական բանավեճերին։

Շամախու քարոզիչը մեծ ջանասիրությամբ հավաքել է նահատակ սրբերի անունները կրող շատ վանքերի, տաճարների, մահարձանների ու բազմաթիվ այլ շինությունների արձանագրությունները և անաղարտ վիճակում հասցրել մեզ, որ արդի ժամանակների համար կարող են անփոխարինելի սկզբնաղբյուր հանդիսանալ։

~~մութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը, Երեւան, 1993, 287 էջ /Այսուհետ՝ Օրմանյան, Հայոց եկեղեցին/։~~ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, հտ. Ա-Գ., Ս. Էջմիածին, 2001, հտ. Դ., Ս. Էջմիածին, 2002 /Այսուհետ՝ Ազգապատում/:

61 Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893, Բ, 304 էջ: Մ. Բարխուտարեանց, Արցախ, Բագու, 1895, Թ, 461 էջ: Մ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հտ. Ա, Վաղարշապատ, 1902, 224 էջ, հտ. Բ, Թիֆլիս, 1907, ԺԴ, 192 էջ:

62 Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 82-84:

63 Նույն տեղում, էջ 84: Տես նաև Պատմութիւն Աղուանից, հտ. Ա, էջ 51-52:

Աղվանքի հոգևոր խնդիրներին անդրադարձել է նաև Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Ներսես հ. Ակինյանը։ Ուսումնասիրության հատուկ նյութ դարձնելով Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկասիրությունը[64]՝ անվանի հետազոտողը մանրակրկիտ քննության է ենթարկել Հայոց և Աղվանից եկեղեցիների փոխհարաբերությունները, հիշատակել հոգևոր գործիչներին՝ իրենց գործերով հանդերձ, մատնանշել նրանց դիրքորոշումը տարբեր քաղաքական հարցերում, պարբերաբար ծագող դավանաբանական վեճերում և ցույց տվել երկու ժողովուրդների դավանաբանական համերաշխությունը։ Դրանց հետ մեկտեղ՝ նա անդրադարձել է նաև երկու եկեղեցիների առաջնայնության խնդրին և աղբյուրագիտական տվյալների հիման վրա հարցը լուծել հօգուտ առաջինի[65]։

Ն. Ակինյանը հանգամանորեն կանգ է առել Աղվանից հայրապետացանկերի վրա, փորձել պարզություն մտցնել դրանցում, վերականգնել առանձին առաջնորդների գործունեության ժամանակաշրջանը, վեր հանել նրանց ինքնության մանրամասներ և հանգել այնպիսի եզրակացության, թե նրանցից ոմանք անգո անձնավորություններ են, որոնց անունները ցանկերում ավելացված են միայն հետագայում «լոկ լեցնելու համար Գրիգորիսէն մինչեւ Աբաս բաց մնացած դատարկութիւնը»[66]։

Բազմավաստակ ուսումնասիրողի գրչի տակ ուրիշ շատ այլ հարցեր էլ են ստացել իրենց լուծումը, նորովի մեկնաբանվել, ճշգրտվել ու պարզաբանվել, որոնց շուրջ, սակայն, խոսք կլինի համապատասխան հարցերի լուսաբանման ժամանակ։

Գրեթե նույն ժամանակներում լույս է տեսնում «ԽՍՀՄ պատ-

64 Ն. Ակինեան, Մովսես Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւնն Աղուանից: Մատենագրական-պատմական ուսումնասիրութիւն, Հանդէս ամսօրեայ, Վիէննա, 1953, թ. 1-3, էջ 3-32, թ. 4-6, էջ 161-175, թ. 7-9, էջ 321-349, թ. 10-12, էջ 552-596; 1955, թ. 7-9, էջ 310-341; 1957, թ. 8-10, էջ 381-406; թ. 11-12, էջ 525-536; 1958, թ. 1-4, էջ 149-151; 1959, թիվ 1-4, էջ 110-132 /Այսուհետ՝ Ն. Ակինեան, Մովսես Դասխուրանցի/: Առանձին գրքով տես Ն. Ակինեան, Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր պատմութիւն Աղուանից (Ազգային մատենադարան, ՄԺԱ.), Վիեննա, 1970, 378 էջ:

65 Ն. Ակինեան, Մովսէս Դասխուրանցի, Հանդէս ամսօրեայ, Վիէննա, 1953, թ. 4-6, էջ 172:

66 Նույն տեղում, թ. 10-12, էջ 570:

մության ուրվագծեր III-IX դդ.» աշխատությունը, որտեղ Աղվանքի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմությանը զուգահեռ[67] ներկայացված է նաև գաղափարախոսությանն ու մշակույթին նվիրված առանձին մի բաժին՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սուրեն Տ. Երեմյանի հեղինակությամբ[68]։ Հետազոտությունը սկսելով քրիստոնեության Աղվանք ներթափանցման ժամանակներից՝ Ս. Տ. Երեմյանը եզրակացնում է, որ նոր կրոնն այստեղ մուտք է գործել Մեծ Հայքից՝ Տրդատ Գ Հայոց թագավորի օրոք (298-330), և երկարամյա քարոզչական աշխատանքներից հետո՝ 4-րդ դարի 70-ական թվականներին, Ուռնայր արքայի կողմից հռչակվել պետական կրոն[69]։ Հետևելով եկեղեցական ավանդությանը՝ նա Աղվանից եկեղեցու հիմնադիր է համարում Մանուկ Գրիգորիսին, ով ուղարկվելով Մեծ Հայքից՝ քարոզչական գործունեություն է ծավալել այս կողմերում և նահատակվել Մասքթաց աշխարհում՝ Վատնյան կոչվող դաշտում[70]։ Մեկնաբանելով սույն ավանդությունը՝ Ս. Տ. Երեմյանը կարծում է, որ Վատնյան դաշտի տեղադրումը Մասքթաց աշխարհում նպատակ է հետապնդել սրբացնել Մասքութ Արշակունիների ժառանգական սեփականություն հանդիսացող մայրաքաղաք Ջողը[71]։

Անդրադառնալով Աղվանքում քրիստոնեության տարածմանը՝ Ս. Տ. Երեմյանը հանդես է եկել իրատեսորեն, բացառել որոշ կարծիքներ և առաջ քաշել նոր տեսակետներ, որոնք Աղվանքի եկեղեցական պատմության մեջ շրջանառվում են առաջին անգամ։

Նա, միանգամայն հիմնավոր, գտնում է, որ Աղվանից կաթողիկոսությունը ձևավորվել է 552 թ. և նույն թվականին էլ նրա առաջնորդանիստ կենտրոնը Ջողից տեղափոխվել է Պարտավ[72]։ Հետազոտողի համոզմամբ՝ Աղվանից եկեղեցին մշտապես գտնվել է Հայոց եկեղեցու ազդեցության ներքո, և նրա կաթողիկոսներն իրենց ձեռնադրությունն ստացել են Հայոց վեհապետներից[73]։

---

67 Очерки истории СССР. III-IX вв, М, 1958, с. 303-323:

68 С. Т. Еремян, Идеология и культура Албании, III-VII вв., см. Очерки истории СССР, с. 323-33:

69 Նույն տեղում, էջ 323:

70 Նույն տեղում:

71 Նույն տեղում, էջ 324:

72 Նույն տեղում:

73 Նույն տեղում, էջ 325:

Ս. Տ. Երեմյանն արձանագրել է նաև, որ 6-7-րդ դարերում Աղվանից եկեղեցին հաճախ փոխել է իր դավանական ուղղվածությունը, և դա իրավացիորեն կապել է Բյուզանդիայի և Սասանյան Իրանի նվաճողական քաղաքականության հետ, որոնք քաղաքական գերիշխանության հասնելով Աղվանքում (և Հայաստանում)՝ նաև իրենց նախընտրելի կրոնն էին պարտադրում նվաճվածներին[74]*։*

Սույն աշխատության մեջ շոշափվող մի շարք հարցերի շուրջ ուսումնասիրություններով հանդես է եկել Բագրատ Ուլուբաբյանը՝ քննության նյութ դարձնելով Աղվանքում և Հայոց Արևելից կողմերում քրիստոնեության տարածման, հաստատման, կաթողիկոսության ձևավորման ու այլ խնդիրներ և, ընդհանուր առմամբ, հանգելով ընդունելի եզրահանգումների[75]*։ Վերապատմելով նշված վայրերում նոր վարդապետության ներթափանցման մասին հյուսված ավանդությունը՝ նա գտնում է, որ սբ. Եղիշային ներկայացնելով որպես Հայոց առաջին լուսավորիչ՝ նպատակ են հետապնդել Աղվանից եկեղեցին ցուցադրել իբրև Հայոց եկեղեցու նվիրապետական թեմերից մեկը, որն իր հետագա ողջ գործունեությունը ծավալել է այդ համակարգում*[76]*։ Քննության ենթարկելով Աղվանքում և Հայոց Արևելից կողմերում քրիստոնեության տարածման մասին մատենագրական տվյալները՝ նա վեր է հանում հոգևոր ու պետական-հասարակական գործիչների՝ Գրիգոր Լուսավորչի, նրա թոռ Գրիգորիսի, Մեսրոպ Մաշտոցի, Տրդատ Գ ու Վաչագան Գ Բարեպաշտ արքաների ունեցած դերն այդ գործում, այդպիսով՝ բացահայտում հայերի ու աղվանցիների դավանական միասնության ակունքները*[77]*։ Նա վերահաստատում է այն իրողությունը, որ Աղվանից մարզպանության կազմավորումից հետո Ուտիքի և Արցախի եկեղեցիներն անցել են*

---

74 Նույն տեղում:

75 Բ. Ուլուբաբյան, Հայոց եկեղեցու Աղվանից թևի սկզբնավորման հարցը, Էջմիածին, 1976, թ. Դ, էջ 57-61, թ. Ե, էջ 38-44: Բ. Ուլուբաբյան, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության (V-VII դդ.), Երևան, 1981, 299 էջ: Բ. Ուլուբաբյան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Երևան, 2001, ~~252~~ 453 էջ:

76 Բ. Ուլուբաբյան, Հայոց եկեղեցու Աղվանից թևի սկզբնավորման հարցը, էջ 58: Բ. Ուլուբաբյան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին, էջ 25-27:

77 Բ. Ուլուբաբյան, Հայոց եկեղեցու Աղվանից թևի սկզբնավորման հարցը, Էջմիածին, 1976, թ. Ե, էջ 38-44:

Աղվանից եկեղեցու իրավասության տակ և այդ կարգավիճակով շարունակել իրենց հետագա գոյությունը, իսկ մասնավորելով խոսքը Աղվանից եկեղեցու մասին՝ գտնում է, որ այն իր նոր թեմերի հետ միասին ենթակա է եղել Մայր Աթոռ Սբ. Էջմիածնին[78]*։*

Բ. Ուլուբաբյանն իր ուշադրությունը բևեռել է նաև Աղվանից կաթողիկոսության կազմավորման խնդրի վրա, մատնանշել նրա ձևավորման հանգամանքները և բանավեճի մեջ մտնելով այդ իրադարձության ժամանակաշրջանի շուրջ տարբեր կարծիքներ հայտնած ուսումնասիրողների հետ՝ եզրակացրել, որ երկրի հոգևոր իշխանության գերագույն մարմինը ձևավորվել է ոչ շուտ, քան 6-րդ դարի կեսերին։ Նա բերում է Աղվանից հայրապետների ցանկը, փորձում պարզել նրանցից յուրաքանչյուրի ինքությունն ու պատմականությունը և շատերին համարում անիրական՝ սոսկ անվանապես հիշատակվող անձնավորություններ[79]*։*

Բ. Ուլուբաբյանի հետաքրքրության շրջանակնում տեղ են գտել նմանապես և Աղվանից կաթողիկոսներին վերաբերող խնդիրներ, և նա առանձին նախանձախնդրությամբ մոտենալով այդ հարցին՝ հիշատակում է նրանցից մի քանիսին, դրվատում վերջիններիս գործունեությունը և մեծարում։ Նրա մոտ, սակայն, յուրահատուկն այն է, որ իր հիշատակած հոգևոր առաջնորդներից շատերին կտրելով իրականությունից և Աղվանից եկեղեցու իրավասության շրջանակներից՝ հայտարարում է լոկ Հայոց Արևելից կողմանց կաթողիկոսներ[80]*, ինչն հակառակ է պատմական ճշմարտությանը, քանի որ նրանք նույնպես հանդես էին գալիս իբրև «Աղվանից» կոչվող եկեղեցու առաջնորդներ և վարում ողջ կաթողիկոսության հոգևոր գործերը։*

Նա անդրադառնում է նաև քաղկեդոնականությանն ու այլ հերձվածողներին, նշում նրանց դեմ հայերի ու աղվանցիների մղած համատեղ պայքարը, խոսում երկու եկեղեցիների փոխհարաբերություններին առնչվող զանազան հարցերի մասին, վերլուծում դրանք և նոր վարկածներ առաջ քաշում[81]*։*

---

78 Բ. Ուլուբաբյան, Հայոց եկեղեցու Աղվանից թևի սկզբնավորման հարցը, էջ 57:

79 Բ. Ուլուբաբյան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, էջ 98-106:

80 Նույն տեղում, էջ 119-122:

81 Նույն տեղում:

Աղվանքում քրիստոնեության տարածման, եկեղեցու կազմավորման, տարատեսակ աղանդավորական շարժումների և մի խումբ կաթողիկոսների աթոռակալության թվականների շուրջ ուսումնասիրությամբ է հանդես եկել Աստվածաբանության դոկտոր Եզնիկ քհն. Պետրոսյանը[82]*։ Համադրելով պատմիչների թողած գավազանագրքերի տվյալները միմյանց հետ՝ Ե. Պետրոսյանն ընդունում է դրանցում հիշատակված առաջնորդների հաջորդականությունն ու գահակալության տարիների համապատասխանությունը, բայց և նշում տարբերություններ, որոնք, ըստ նրա, ձեռագրական աղավաղումների հետևանք են*[83]*։ Փորձելով վերացնել դրանք՝ նա վկայակոչում է Կաղանկատվացու այն հաղորդումը, որի համաձայն՝ Սյունյաց եպիսկոպոս Վրթանեսի ձեռնադրումը, որը, նրա կարծիքով տեղի է ունեցել 570 թ.*[84]*, կատարել է Տեր Զաքարիան, ով նախորդել է Տեր Աբասին։ Ե. Պետրոսյանը եզրակացնում է. «Կաղանկատվացու գավազանագրքի այն տվյալները, թե Աբասը կաթողիկոս է եղել 551/2-595/6 թթ., իսկ Զաքարիան՝ 629/30-644/5 սխալ է»*[85]*։*

Իր նպատակաուղղվածությամբ, առաջ քաշված հարցերի խորությամբ և լուծումներով առանձնանում է Ալեքսան Հակոբյանի 1987 թ. հրատարակած «Ալբանիա-Աղվանքը հունա-լատինական և հին հայկական աղբյուրներում» ռուսերեն մենագրությունը՝ Աղվանից եկեղեցու պատմությանը նվիրված հատուկ բաժնով[86]*։ Ա. Հակոբյանը նույնպես շատերի պես իր հետազոտությունն սկսում է քրիստոնեության Աղվանք մուտք գործելու պատմությամբ, նշում, որ քրիստոնեությունն այստեղ տարածվել է Գրիգոր Լուսավորչի ուղարկած քարոզիչների կողմից և գտնում, որ այն Աղվանքում հաստատվել է և պաշտոնական կրոն հռչակվել*

---

82 Եզնիկ քհն. Պետրոսյան, Աղվանից աշխարհի կաթողիկոսության մի քանի թվականների շուրջ, Էջմիածին, 1984, թ. ԺԱ-ԺԲ, էջ 78-87: Եզնիկ քհն. Պետրոսյան, Հայ եկեղեցու պատմություն, մաս Ա. Սկզբից մինչև 1441 թ., Ս. Էջմիածին, 1990, 125 էջ:

83 Եզնիկ քհն. Պետրոսյան, Աղվանից աշխարհի կաթողիկոսության մի քանի թվականների շուրջ, էջ 80:

84 Նույն տեղում, էջ 83:

85 Նույն տեղում:

86 А. А. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, с. 124-142.

315 թ.[87] *և մերժում տարածված այն կարծիքը, թե Աղվանքում քրիստոնեությունը պետական կրոն էր հռչակվել Ուռնայր արքայի կողմից*[88]*։ Մինչդեռ, ինչպես ցույց ենք տվել մեր ուսումնասիրություններում, Աղվանքը դարձի է եկել 370-ական թվականներին՝ Հայոց Պապ թագավորի (368-374) ժամանակակից Ուռնայր արքայի ջանադիր գործունեությամբ*[89]*։*

Ա. Հակոբյանը քննարկում է նաև ներեկեղեցական խնդիրներ և գտնում, որ 6-րդ դարի կեսերին Աղվանից հայրապետներն արդեն կրում էին «կաթողիկոս» տիտղոսը[90]*, իսկ ժամասացության լեզուն աղվաներենի հետ մեկտեղ եղել է հայերենը*[91]*։*

Անցնելով Աղվանից կաթողիկոսների նստավայրերի խնդրին՝ Ա. Հակոբյանը գրում է, որ մինչև 462 թ.՝ Աղվանից թագավորության վերացումը, Աղվանքի հոգևոր կենտրոնը եղել է երկրի մայրաքաղաք Կապաղակը, դրանից հետո փոխադրվել Ջող, իսկ 552 թվականից հաստատվել է Պարտավում։ Այսպես քննարկելով զանազան խնդրահարույց հարցեր՝ Ա. Հակոբյանն իր աշխատությունն ամփոփում է 6-10-րդ դարերում Աղվանքում գահակալած կաթողիկոսների շարքով[92]*, նշում նրանց աթոռակալության տարիներն ու թեմական պատկանելիությունը, ուղղումներ մտցնում և հավելում, որ մինչև Աբաս կաթողիկոսը հիշատակված 12 հայրապետներից իրական են միայն Մանուկ Գրիգորիսն ու Տեր Երեմիան*[93]*։*

Անվիճելի է քննարկվող աշխատության կարևորությունը։ Այն արդիական է և խոշոր ներդրում աղվանագիտության բնագավառում, լույս է սփռում մութ և խճճված շատ հարցերի վրա և լուրջ հակահարված հասցնում ոլորտի պատմության կեղծարարներին։

---

87 Նույն տեղում, էջ 126:
88 Նույն տեղում:
89 Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, էջ 103-114:
90 А. А. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, с. 131-132:
91 Նույն տեղում, էջ 137:
92 Նույն տեղում, էջ 134-135:
93 Նույն տեղում, էջ 277:

2009 թ. լույս է տեսնում պատմական գիտությունների թեկնածու Մելանյա Բալայանի աշխատությունը, որը վերնագրված է «Հայ Աղվանից եկեղեցին» և բովանդակում է «Աղվանից» կոչվող, բայց փաստացիորեն Հայոց Արևելից կողմերում գործող եկեղեցու պատմությունը՝ սկզբնավորումից մինչև մեր օրերը[94]։ Սկզբնաղբյուրների և մասնագիտական գրականության լայն օգտագործմամբ գրված այս աշխատությունում հեղինակը խնդրո առարկա եկեղեցին դիտելով որպես Ամենայն Հայոց կաթողիկոսության ճյուղային թեմերից մեկը՝ քննության է ենթարկում Հայոց Արևելից կողմերում քրիստոնեության տարածման ու արմատավորման հանգամանքները։ Այդ ընթացքում նա հընթացս հիշատակում է առաջին քարոզիչներին, շեշտում «Հայ Աղվանից» եկեղեցու առաքելական բնույթը և անդրադառնալով կաթողիկոսության ձևավորման խնդրին՝ իրավացիորեն այն համարում է ժամանակաշրջանի քաղաքական պայմանների թելադրանքով կազմավորված հոգևոր գերագույն մարմին[95]։ Ընդսմին, նա բարեխղճորեն նշում է մեզ հետաքրքրող աշխարհագրական տարածքի շրջանակներում գործող կաթողիկոսներին և վեր հանում դժվարին իրադրություններում նրանց վարած շրջահայաց ու հեռատես քաղաքականությունը։ Մ. Բալայանը խոսում է նաև Աղվանից հոգևոր առաջնորդների նստավայրերի շուրջ և հենվելով սկզբնաղբյուրների տվյալների վրա՝ նկատում, որ թեմի եպիսկոպոսական կենտրոնն սկզբնական շրջանում եղել է Ամարասը, ապա Պարտավը, իսկ 6-րդ դարի սկզբից՝ Զողը[96]։

Ուսումնասիրվող եկեղեցու պատմության մեջ առանձնացնելով երեք՝ Պարտավյան, Աստանդատական ու Գանձասարյան շրջաններ՝ Մ. Բալայանը մանրամասնում է դրանցից յուրաքանչյուրում ծավալվող ներքին ու արտաքին իրադարձությունները, նշում հոգևոր դասի ու նրանց առաջնորդների գործուն մասնակցությունը դրանցում, ի ցույց դնում Սասանյան Իրանի ու Բյուզանդիայի նկրտումներն դրացի Հայոց և Աղվանից եկեղեցիների հանդեպ ու վեր հանում նրանց դեմ վերջինիս հակադրած ազգա-

---

94 Մ. Բալայան, Հայ Աղվանից եկեղեցին (սկզբնավորումից մինչև մեր օրերը), Ստեփանակերտ, 2009, 239 էջ:

95 Նույն տեղում, էջ 41:

96 Նույն տեղում, էջ 42:

պահպան գործունեությունը[97]*։ Առաջ քաշված հարցերին զուգահեռ՝ Մ. Բալայանը միաժամանակ պարզաբանում է դավանաբանական ու ներեկեղեցական կյանքի մի շարք այլ խնդիրներ։*

Առաջարկվող աշխատությունում, ըստ անհրաժեշտության, օգտագործվել են նաև քննարկվող հարցերին անուղղակիորեն առնչված ուսումնասիրողների Ս. Ջալալյանցի, Աս. Մնացականյանի, Բ. Հարությունյանի, Վ. Վարդանյանի, Կ. Մելիքյանի և այլոց գործերը, որոնք հետազոտվող նյութին վերաբերող անդրադարձումներով նույնպես նպաստել են գրքում քննարկվող խնդիրների լուծմանը[98]*։*

* * *

Աղվանքի պատմության և հոգևոր մշակույթի հարցերը հետաքրքրել են նաև օտարազգի հեղինակներին և նրանք անդրադարձել են դրանց թե՛ երկրի ընդհանուր պատմությանը նվիրված իրենց աշխատություններում, թե՛ առանձին մենագրություններում։ Նրանց մեջ յուրահատուկ տեղ է զբաղեցնում ռուս պատմաբան Կ. Վ. Տրեվերն Աղվանից աշխարհի քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակույթի հարցերին նվիրված իր աշխատությամբ[99]*։ Գրքում հեղինակը հետազոտվող հիմնական նյութին առընթեր քննության է ենթարկում նաև կրոնական խնդիրներ, որոնք արտացոլում են Աղվանքի հոգևոր կյանքն իր բոլոր դրսևորումներով մ. թ. ա. 4-րդ-մ. թ. 7-րդ դարերում։ Այն խորը, վերլուծական ուսումնասիրություն է, խորհրդային տարիներին աղվանագիտության ձեռք բերած նվաճումներն անփոփոխ մի երկասիրություն, որում քննարկվող շատ հարցեր,*

---

97 Նույն տեղում, էջ 59-65:

98 Սարգիս վրդ. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփխիս, 1842, 234 էջ, մասն Բ, Տփխիս, 1858, 517 էջ: Ա. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966, 286 էջ: Բ. Հարությունյան, Հայոց եկեղեցու թեմական բաժանումը, Պատմա-բանասիրական հանդես, 2000, թ. 2, էջ 108-127: Վ. Մ. Վարդանյան, Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչմերուկներում, Երևան, 2005, 400 էջ: Կ. Մելիքյան, Հայոց եկեղեցու դիրքն ընդհանրական քրիստոնեական եկեղեցու համակարգում IV-VI դարերի I կեսին, Երևան, 2016, 262 էջ:

99 К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании, IVв до н.э.-VII в н.э., М.-Л., 1959:

իրենց նորովի մեկնաբանություններով, ուշագրավ դիտարկումների տեղիք են տալիս[100]։ Աշխարհիկ մի շարք հարցեր քննարկելուց հետո, անցնելով երկրի հոգևոր կյանքի անցուդարձերին, Կ. Վ. Տրեվերը համոզմունք է հայտնում, որ նոր վարդապետությունն Աղվանքում միակ կրոնը չէր։ Ըստ նրա՝ վերջինիս կողքին գործում էին նաև այլ կրոնական ուղղություններ ու պաշտամունքներ, որոնք նույնպես իրենց ազդեցությունն էին թողնում բնակչության աշխարհայացքի վրա, լրջորեն խոչընդոտում նրա վերելքին, որի պատճառով էլ, հիմնավորում է նա, այն առավել դժվարությունների միջով էր անցնում Աղվանքում, քան Մեծ Հայքում ու Վիրքում[101]։ Անդրադառնալով քրիստոնեության տարածման խնդրին՝ արգո հեղինակը նույնպես գտնում է, որ նորածագ կրոնը երկրում առաջինն ընդունել են պալատականներն ու ազնվականական վերնախավը և ապա միայն ժողովրդական զանգվածները[102]։ Նա հաստատում է, որ Աղվանից եկեղեցին իր նվիրապետական կառուցվածքով հար և նման էր Հայոց եկեղեցուն և նրա պես ուներ սանդղաձև, ավատատիրական հասարակարգերին բնորոշ համակարգ։ Կ. Վ. Տրեվերը նշում է նաև, որ Աղվանից եկեղեցին օգտվում էր լայն իրավունքներից, որոնք լրացվում և նոր արտոնություններով առավել են ընդարձակվում 488 թ. Ուտիքի Աղվեն գավառում գումարված եկեղեցական ժողովում ընդունված որոշումներով[103]։ Ռուս հետազոտողն անդրադառնում է նաև Աղվանից եկեղեցու և աղանդավորականների միջև ընթացող անվերջանալի հակառակություններին և վեր հանում երկրի աշխարհիկ ու հոգևոր տերերի քրիստոնեամետ գործունեությունը։ ~~Նա հատկապես հիշատակում է Վաչագան Գ Աղվանից արքային, ով կարողացել է մեծ ջանքերի գնով վերացնել իր օրերում գործող մատնահատության և դեղատվության աղանդներն ու կարգավորել հասարակական հարաբերությունն~~

[100] Գրքի պատմագիտական արժևորումը տես В. В. Струве, В. А. Белявский, Н. Ю. Ломоури, К. В. Тревер: Очерки по истории и культуре КавказскойАлбании, с. 179-191: Տես նաև Հ. Ս. Սվազյան, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 31-32:

[101] К. В. Тревер: Очерки по истории и культуре КавказскойАлбании, с. 292-293:

[102] Նույն տեղում, էջ 292:

[103] Նույն տեղում, էջ 295-296:

~~ները~~[104]։ Կ. Վ. Տրեվերը խոսում է նաև հայոց և աղվանից կաթողիկոսների փոխհարաբերությունների մասին և օրինակներ բերելով նրանց գործունեությունից, ցույց տալիս հայոց կաթողիկոսների գերակայությունը վերջիններիս նկատմամբ։ Խորազնին հեղինակը նմանապես մատնանշում է Աղվանից հայրապետների գործուն մասնակցությունը երկրի քաղաքական կյանքին և արձանագրում, որ նրանք հոգևորականներ լինելով հանդերձ՝ երկրի համար ծանր ժամանակներում հանդես են եկել նաև որպես քաղաքական գործիչներ։ Առանձին հոգևոր գործիչների մասին խոսելիս նա հատուկ անդրադառնում է Մանուկ Գրիգորիսին, անձանձրույթ նկարագրում նրա գործունեությունը Փայտակարանում, Արցախում, Աղվանքում ու Մասքթաց աշխարհում և վերահաստատում այն միտքը, թե վաղ շրջանում քրիստոնեությունն Աղվանք էր թափանցում Մեծ Հայքից[105]։ Հիմք ընդունելով Աղվանից կաթողիկոսներին տրվող «Աղուանից, Լփնաց և Զողայ կաթողիկոս» տիտղոսը, որ նրանք կրում էին նաև 7-րդ դարում[106], Կ. Վ. Տրեվերը միանգամայն տեղին եզրակացնում է, որ Զողն ու Լփիքն ունեցել են ներքին ինքնավարություն, ինչն էլ հիմք է ծառայել, որ Աղվանից կաթողիկոսներն հանդես գան նման տիտղոսով[107]։

Կ. Վ. Տրեվերի աշխատասիրությունը թեպետ և զերծ չէ թերություններից, բայց լավագույններից մեկն է Աղվանից աշխարհի պատմությանը նվիրված հետազոտությունների մեջ[108]։

* * *

Աղվանից աշխարհի պատմությունը մեծ հետաքրքրություն է առաջացրել նաև ադրբեջանցի հեղինակների շրջանում։ Մեկը մյուսի հետևից լույս են տեսել աշխատություններ, որոնցում ուսումնասիրվել է խնդրո առարկա երկրի պատմական անցյալն իր բոլոր դրսևորումներով, այդ թվում՝ հոգևոր կյանքին ու նյու-

---

104 Նույն տեղում, էջ 294-296։
105 Նույն տեղում, էջ 188-197։
106 Նույն տեղում, էջ 242-243։
107 Նույն տեղում։
108 Տես Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, էջ 42-44

թական մշակույթին վերաբերող արծարծումներով[109]*։*

Ինչպես ժամանակին նշվել է, ադրբեջանցի հեղինակների նպատակն Աղվանքի քաղաքական պատմության, հետևաբար և եկեղեցու պատմության հնեցումն է, առաջնայնության վերագրումն ու նրան անկախ և ինքնագլուխ ցույց տալու սնապարծ ցանկությունը[110]*։ Առաջնորդվելով նման սկզբունքով և պետականորեն խրախուսվող հրահանգներով՝ նրանք քննարկվող հարցերին մոտենում են կանխակալ եզրակացություններով ու իրենց մտահղացումներին հանգույն մեկնաբանություններով*[111]*։*

Առանձին հարցերի կապակցությամբ արված իրենց քննարկումներում, ադրբեջանցի հեղինակները ևս անդրադառնում են տարածաշրջանում առաջինը քարոզչական աշխատանքներ ծավալած Թադեոս առաքյալի աշակերտ սբ. Եղիշայի գործունեությանը, վերապատմում նրա շուրջ հյուսված ավանդազրույցը, գտնում, որ նա էր Աղվանքի լուսավորիչը, եկեղեցու հիմնադիրը և վայրերը, որոնցում քարոզել էր նա, անվերապահորեն հայտարարում Աղվանից աշխարհի տարածքային տեղամասեր[112]*։ Նման հետազոտողներից, մասնավորապես, Ռ. Բ. Գեյուշևն անդրադարձել է նաև սբ. Եղիշայի ժամանակաշրջանի հարցին և աղբյուրներում առկա տվյալների հիման վրա որոշել, որ վերջինս Աղվանքում քարոզել է մ. թ. 2-րդ դարում*[113]*։*

---

109 Р. Б. Геюшев, Христианство в Кавказской Албании. (По данным археологии и письменных источников), Баку, 1984, 192 с.: Ф. Мамедова, Политическая история и историческая география Кавказской Албании. (III в. до н. э.-VIII в.н.э.), Баку, 1986, 284 с.: Ф. Мамедова, Кавказская Албания и албаны, Баку, 2005, 798 с.: Д. А. Ахундов, Архитектура древнего и раннесредневекового Азербайджана, Баку, 1986, 311 с.:

110 Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, էջ 44:

111 Р. Б. Геюшев, Христианство в Кавказской Албании, с. 25-27: Ф. Мамедова, Политическая история и историческая география Кавказской Албании, с. 223-224: Աղվանից աշխարհի պատմության հարցերին ադրբեջանցի հեղինակների մոտեցումների և պատմագիտության մեջ դրանց կապակցությամբ հայտնված կարծիքների մասին մանրամասն տես Հ. Ս. Սվազյան, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 36-46: Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, էջ 44-49:

112 Р. Б. Геюшев, Христианство в Кавказской Албании, с. 27:

113 Նույն տեղում, էջ 29:

Ի տարբերություն իր հայրենակիցների՝ Ռ. Բ. Գեյուշևն ընդունում է, որ քրիստոնեությունն Աղվանքում նույնպես դժվարությամբ է հասնում ժողովրդական զանգվածներին, և դրա պատճառն իրավացիորեն համարում երկրի բազմացեղայնությունն ու սեփական գրի ու դպրության պակասը[114]*։*

Ռ. Բ. Գեյուշևն երկար ու հանգամանորեն խոսում է Մանուկ Գրիգորիսի մասին, Աղվանքում հոգևոր առաջնորդի պաշտոնում նրա նշանակվելը դիտում խոշոր իրադարձություն, մեծարում «կաթողիկոս» տիտղոսով, որպես գործունեության տարիներ՝ նշում է 330-337 թթ. և վկայակոչելով Ամարասի պեղումների ժամանակ հայտնաբերված նրա անունով տապանաքարը՝ հաստատում աղբյուրների այն տեղեկությունը, որ պատանի գործիչն ամփոփվել է Ամարասի եկեղեցու բակում[115]*։*

Խոսելով Աղվանքում քրիստոնեության ընթացքի մասին՝ նա գրում է, որ այն սույն երկրում պաշտոնապես ճանաչվել է Ուռնայր արքայի կողմից 4-րդ դարի առաջին կեսում՝ Գրիգոր Լուսավորչի կենդանության օրոք, մինչև 326 թ.[116]*։ Ի դեպ, ընդգծելով, որ 488 թ.՝ ժողովի հրավիրման տարում, Աղվանից հոգևոր առաջնորդների նստավայրը Պարտավ քաղաքն էր՝ նա առաջարկում է վերանայել թե՛ ժողովի գումարման, թե՛ նստավայրը Ջողից Պարտավ փոխադրելու տարեթիվը*[117]*։*

Հետազոտողն հատուկ ուշադրությամբ է մոտեցել Աղվանից կաթողիկոսությանը վերաբերող հարցերին, մանրամասնել նրա կազմավորման հանգամանքները, նշել նրա կաթողիկոսանիստ վայրերը, ճյուղային հաստատությունները՝ եպիսկոպոսությունները և միացել այն ուսումնասիրողներին, որոնք գտնում են, որ 6-րդ դարում այդ գերագույն մարմնի իրավասության ներքո գործում էին ութ այդպիսի կառույցներ[118]*։*

Աղվանից եկեղեցու պատմության մի շարք հարցերի վրա է կենտրոնացել Ֆ. Մամեդովան իր վերոհիշյալ աշխատությունը-

---

[114] Նույն տեղում, էջ 33, 34:
[115] Նույն տեղում:
[116] Նույն տեղում, էջ 29, 136:
[117] Նույն տեղում, էջ 37, 39:
[118] Նույն տեղում, էջ 36, 37:

ների շրջանակում[119]։ Լինելով Աղվանից աշխարհի պատմության հնեցման ջատագովներից մեկը՝ Ֆ. Մամեդովան, Կաղանկատվացու մոտ գործածված «Հյուսիս-արևելք», «Արևելից երկիր» կամ պարզապես «Արևելք» եզրույթների ներքո պարտադրել է հասկանալ «Աղվանք»՝ իբրև Երուսաղեմից Արևելք ընկած երկիր։ Առաջին քարոզիչների գործունեությունը Կուրի աջափնյակում, այն է՝ Ուտիք-Արցախյան աշխարհում դիտում է որպես Աղվանքում ծավալվող շարժում և հայտարարում, թե քրիստոնեությունն Աղվանք ավելի վաղ է թափանցել, քան Հայաստան[120], իսկ Ուտիքի Գիս ավանում սբ. Եղիշայի կառուցած եկեղեցին համարում է առաջին քրիստոնյա եկեղեցին ողջ Անդրկովկասում[121]։

Անտեսելով աղբյուրների այն պնդումը, թե քրիստոնեություն տարածելու նպատակով Գրիգոր Լուսավորիչը Սուրբ Գրքերին ծանոթ քարոզիչներ էր ուղարկում Մեծ Հայք, Աղվանք և հարևան երկրներ[122]՝ Ֆ. Մամեդովան անիրական է համարում պատմագիտության մեջ տարածված այն կարծիքը, թե քրիստոնեությունն Աղվանք էր թափանցում Մեծ Հայքից[123]։

Խոսելով Աղվանքում քրիստոնեության ընթացքի մասին՝ Ֆ. Մամեդովան համարում է, որ այն սույն երկրում պաշտոնական կրոն է հռչակվել 313 թ.[124]։ Նա անդրադառնում է Աղվանից կաթողիկոսներին վերաբերող որոշ խնդիրների, գտնում, որ նրանք 551 թ. կրում էին «Աղվանից, Լփնաց և Ջորայ կաթողիկոս» տիտղոսը[125] և 5-8-րդ դարերում իրենց իրավասության տակ ունեին տասներկու եպիսկոպոսություն[126]։ Նա անդրադառնում է նաև Աղվանից կաթողիկոսների առաջնորդանիստ կենտրոններին և գտնում, որ այդպիսին 4-րդ դարում նորահռչակ մայրաքաղաք

119 Ф. Мамедова, Политическая история и историческая география Кавказской Албании, с. 217-239: Ф. Мамедова, Кавказская Албания и албаны, с. 523-565:

120 Ф. Мамедова, Политическая история и историческая география Кавказской Албании, с. 223-224:

121 Նույն տեղում, էջ 224, 225:

122 Ագաթանգեղոս, Վարք, էջ 177: Բուզանդ, էջ 24-26: Խորենացի, էջ 260:

123 Նույն տեղում, էջ 229:

124 Ф. Мамедова, Политическая история и историческая география Кавказской Албании, с. 226:

125 Նույն տեղում, էջ 235-236:

126 Նույն տեղում, էջ 236:

Պարտավն էր[127], 9-10-րդ դարերում՝ Փառիսոսի թագավորության Միափոր գավառի Խամշի ավանը, իսկ 13-րդ դարից սկսած՝ Գանձասարը[128]։

Ամբողջության մեջ Ֆ. Մամեդովայի աշխատությունները կամայական հետազոտություններ են, հետապնդում են «Ադրբեջան» արհեստածին անվամբ այսօրվա հանրապետության համար պատմություն կերտելու նպատակ, հակագիտական են «...և եթե կարող են հագուրդ տալ իր և իր նմանների ազգայնամոլական ձգտումներին, բայց երբեք տեղ չգտնել իսկական գիտության մեջ և այն իրապես գնահատողի մոտ»[129]։

Նույն սևեռուն մտքերն են թևածում նաև 1986 թ. Բաքվում Դ. Ա. Ախունդովի հրատարակած «Հին և վաղ միջնադարյան Ադրբեջանի ճարտարապետությունը» աշխատությունը[130]։

Նրանում հեղինակը, հավատարիմ մնալով ադրբեջանական պատմագիտության որդեգրած ուրիշինը յուրացնելու սովորություններին, Սյունիքը, Արցախ-Խաչենը և Ավանից աշխարհին կից-հարևան հայկական նահանգները դիտում է որպես աղվանական մարզեր, դրանցում գտնվող եկեղեցական ու աշխարհիկ շինություններն իրենց հայերեն արձանագրություններով համարում է աղվանական և, քանի որ ըստ իրենց շինծու տեսության՝ այն, ինչ աղվանական է, ուրեմն և ադրբեջանական է, դրանք զետեղում իր գրքում՝ որպես ադրբեջանական նմուշներ[131]։

Խոսելով քրիստոնեության տարածման մասին՝ Դ. Ա. Ախունդովը գտնում է, որ ի տարբերություն Մեծ Հայքի ու Վիրքի, որոնցում նոր կրոնը ընդունվում է միանգամից, հասարակության բոլոր խավերի կողմից՝ Աղվանքում այն առաջինն ընդունում են թագավորը, իշխաններն ու նրանց ենթակաները և ապա միայն ժողովրդական զանգվածը[132]։ Քննության ենթարկելով ճարտարապետական տարբեր կոթողների ու խաչքարերի (նրա արտա-

[127] Նույն տեղում, էջ 235:
[128] Նույն տեղում, էջ 238:
[129] Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերություններ 2-8-րդ դարերում, էջ 49:
[130] Д. А. Ахундов, Архитектура древнего и раннесредневекового Азербайджана, 312 с.:
[131] Նույն տեղում, էջ 222-252:
[132] Նույն տեղում, էջ 234:

բերմամբ՝ «խաչդաշերի») վրա դրոշմված խորհրդանիշներն ու զարդանախշերը՝ նա եզրակացնում է, որ դրանք քրիստոնեության, զրադաշտականության և տեղական հավատալիքների ազդեցության հետևանք են և արտացոլում են Աղվանքի հոգևոր կյանքի խայտաբղետությունը[133]։ Դ. Ա. Ախունդովն հատուկ ուշադրությամբ է մոտենում խաչքարերին, առանձնապես Ջուղայում կանգնեցվածներին, դրանք նույնպես համարում աղվանական (ադրբեջանական) ճարտարապետական արվեստի յուրահատուկ նմուշներ և այդպես էլ ներկայացնում գրքում[134]։

Այսպիսով, ադրբեջանցի հեղինակներն Աղվանքի հոգևոր կյանքին նվիրված իրենց անդրադարձումներում առաջնորդվում են ցանկալին իրականություն համարելու սկզբունքով և միջոցների մեջ խտրություն չդնելով՝ ամեն կերպ ձգտում հնեցնելու քրիստոնեության Աղվանք մուտք գործելու ժամանակաշրջանը, Աղվանից եկեղեցին ներկայացնում որպես հնավանդ, արտաքին ազդեցություններից զերծ, ինքնագլուխ հաստատություն ու ժխտում Հայոց եկեղեցու գերակա դերը տարածաշրջանում։ Նրանց առաջ բերած դրույթները գիտական լրջությունից զուրկ մակաբերություններ են և, որպես այդպիսին, բնավ չեն կարող տեղ ունենալ պատմագիտության մեջ և հասարակական կյանքում։

---

133 Նույն տեղում, էջ 240:

134 Այդ խաչքարերը, որոնց Դ. Ա. Ախունդովն ու նրա նման մտածողներն այդքան ջանում են «ադրբեջանական» ցույց տալ, բառացիորեն փշրվեցին և խճաքարերի վերածվեցին հենց ադրբեջանցիների կողմից և օրինակը չունեցող վանդալիզմի այդ գործողություններով, փաստորեն, հաստատեցին վերջիններիս հայկական պատկանելիությունը:

ԳԻՐՔ Ա
ՎԱՂ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՇՐՋԱՆ

ՄԱՍ Ա
ԱՌԱՋԻՆ ՔԱՐՈԶԻՉՆԵՐՆ ԱՂՎԱՆՔՈՒՄ (2-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԻԶԲ-4-ՐԴ ԴԱՐԻ 70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԵՂԻՇԱ ԱՌԱՔՅԱԼ

Եղիշա առաքյալն ավանդաբար համարվում է Ջողա երկրի, Բուն Աղվանքի և Հայոց Արևելից կողմանց լուսավորիչ, դրանց «առաջին պատճառ լուսաւորութեան»[135]*, որ նաև «առաքելական հաւատն (այս կողմերում-Հ.Ս.) ... հիմնադրեալ»*[136]*։ Գործել է երկրորդ դարի առաջին տասնամյակում*[137]*։ Նրա կյանքի ու գործունեության շուրջ հյուսված եկեղեցական ավանդության համաձայն Եղիշան եղել է Սբ. Թադեոս առաքյալի աշակերտներից, որը նրա հետ գալով Երուսաղեմից՝ քարոզում է Մեծ Հայքում, այնուհետև՝ ուսուցչի նահատակությունից հետո, վերադառնում Սուրբ Քաղաք, ձեռնադրվում եպիսկոպոս և կրկին մեկնում Արևելք*[138]*։ Այսպիսով, Երուսաղեմից Արևելք է ուղարկվում մի անձ, որն արդեն եղել էր Հայաստանում։*

---

[135] Կաղանկատվացի, էջ 342: Տես նաև, Գանձակեցի, էջ 192:

[136] Կաղանկատվացի, էջ 300:

[137] Հ. Ս. Սվազյան, Քրիստոնեության Աղվանք ներթափանցման ուղիներն ու ժամանակաշրջանը, Պատմա-բանասիրական հանդես, 2002, թ. 2, էջ155: Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, էջ 69-72:

[138] Կաղանկատվացի, էջ 9-11: Գանձակեցի, էջ 192-193: Ավանդությունը Ն. Ակինյանի կարծիքով, հորինվել է 6-7-րդ դարերում և նպատակ է ունեցել ցույց տալ Աղվանից եկեղեցու առաքելական բնույթը: Տես Ն. Ակինեան, Ն. Ակինեան, Մովսէս Դասխուրանցի, Հանդէս ամսօրեայ, Վիէննա, 1953, թ. 4-6, էջ 171:

Նշանակման վայր հասնելու համար Եղիշան, հավանաբար աչքի առաջ ունենալով Թադեոս առաքյալի նահատակության փաստը[139]*, ընտրում է անվտանգ, բայց երկար ու Հայաստանը շրջանցող ճանապարհ՝ հայտնվելով Կուրի ձախափնյակում (Բուն Աղվանքում) գտնվող Մասքթաց աշխարհում։ Հանգրվանելով երկրի մայրաքաղաք Զողում՝ նորընծա եպիսկոպոսը «սկիզբն առնէ քարոզութեան», որի ընթացքում «զբազումս աշակերտեալ՝ ծանոյց զփրկութիւնն»*[140]*։ Զողը դառնում է Եղիշայի գործունեության մեկնակետը, որտեղից այլ վայրեր անցնելով՝ նա նոր վարդապետության սերմերն է տարածում Մասքթաց աշխարհում և դառնում նաև այդ երկրի առաջին ավետարանիչը։ Բուն Աղվանքում Եղիշայի քարոզչության մասին վկայում են նրա անունով պահպանված վանքերն ու եկեղեցիները։*

Երուսաղեմի նվիրակը Զողից, ինչպես ներկայացնում է ավանդությունը, Կուրի ձախափնյակից ուղևորվում է գետի աջափնյակ՝ Մեծ Հայքի Ուտիք աշխարհ[141]*, ուր տանող ճանապարհն անցնում էր նրա հարևանությամբ ընկած Աղվանքի տարածքով և, պետք է կարծել, որ նա այդ ժամանակ էլ մտնում է Աղվանք և համանման գործունեություն ծավալում նաև այստեղ։ Դրա առհավատչյան Կիրակոս Գանձակեցու մի հաղորդումն է, ըստ որի՝ Եղիշան քարոզներով «հասանէ յաշխարհս Աղուանից»*[142]*։ Այս հաղորդմանը, սակայն, պետք է մոտենալ վերապահությամբ, քանի որ Աղվանից մարզպանության կազմավորումից հետո Հայոց Արևելից կողմերը նույնպես անվանում էին «Աղվանք», և հայ պատմիչները հաճախ են գործածել այն՝ որպես «Եզրույթ»-ի հոմանիշ հասկացություն։ Այնուհանդերձ, անկասկած է, որ Թադեոսի աշակերտը եղել է Բուն Աղվանքում և նոր հավատի սերմերը տարածել նաև հարևան այս երկրում։ Դա են հաստատում նյութական մշակույթի այն հուշարձանները՝ եկեղեցիները, վան-*

---

139 Հայ ժողովրդի պատմություն, հտ. I. Հայաստանը նախնադարյան-համայնական և ստրկատիրական կարգերի ժամանակաշրջանում, պատ. խմբ.՝ Ս. Տ. Երեմյան, խմբ.՝ Հ. Ա. Մարտիրոսյան, Գ. Խ. Սարգսյան, Գ. Ա. Տիրացյան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Երևան, 1971, էջ 786:

140 Կաղանկատվացի, էջ 10:

141 Նույն տեղում:

142 Գանձակեցի, էջ 193:

քերն ու տարածքով մեկ սփռված սրբուղիները, որոնք կանգնեցվել են ի նշան նրա հավերժացման[143]*։*

Գալով Աղվանք՝ առաքելաշավիղ սուրբը լայն գործունեություն է ծավալում. քարոզներ կարդում, համայնքներ հիմնադրում։

Երեք աշակերտների հետ գալով Հայոց Արևելից կողմեր և մտնելով Ուտիք՝ Եղիշան եռանդագին կերպով շարունակում է քարոզչական աշխատանքները։ Ուտիքում նրա քարոզչության տեղիներ են դառնում Սահառն քաղաքը, Գիս ավանը, Հոմենք վայրը, դիցամոլների կենտրոն Ջերգուն բնակավայրը և հեթանոսական այլ կենտրոններ[144]*։ Քարոզչությունն սկսելով Սահառն քաղաքից՝ Եղիշան իր աշակերտների հետ, բազում դժվարություններ հաղթահարելով, կարողանում է տեղի բնակչության շրջանում հավատ ներշնչել քրիստոնեության նկատմամբ։ Սակայն, այստեղ նրանց կրնկակոխ հետապնդող հեթանոսները սպանում են Եղիշայի աշակերտներից մեկին, իսկ մյուս երկուսին ետ են դարձնում*[145]*։ Դրանից հետո Եղիշան հաստատվում է Ուտիքի Գիս ավանում, ուր նա ավելի արդյունավետ գործունեություն է ծավալում. եկեղեցի է կառուցում, պատարագ մատուցում և ծիսական արարողակարգեր սահմանում ու կարգավորում*[146]*։ Ըստ ադրբեջանցի հեղինակների՝ Գիսում Եղիշայի կառուցած եկեղեցին առաջինն էր ողջ Անդրկովկասում*[147]*, ինչը պարզապես թյուրիմացություն է, աղբյուրների տեղեկությունների անտեղյակություն կամ միտումնավոր անտեսման հետևանք։ Բանն այն է, որ Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ՝ Եղիշայից ավելի վաղ Բարդուղիմեոս առաքյալն էր Գողթնում Տեառնընդառաջ*

---

143 Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 256: М. Казиев, Новые археологические находки в Мингечауре, Доклады АН Азер. ССР, 1948, т. IV, 9, с. 396-403: А. Г. Абрамян, Дешивровка надписей Кавказских агван, Ереван, 1964, с. 76: Ս. Կարապետյան, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, Երևան, 1957, էջ 11, 94-95: Р. Геюшев, Христианство в Кавказской Албании, էջ 26:

144 Կաղանկատվացի, էջ 10-11: Նշված վայրերի տեղերոշման հետ կապված հարցերի քննությունը տես Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերություններ 2-8-րդ դարերում, էջ 55-63:

145 Կաղանկատվացի, էջ 10:

146 Նույն տեղում:

147 Ф. Мамедова, Политическая история и историческая география Кавказской Албании, с. 224:

անունով եկեղեցի[148]*, իսկ Մաղարթում՝ վանք կառուցել*[149]*։ Հետևաբար, Եղիշայի կառուցած եկեղեցին ոչ թե առաջինն էր ողջ Անդրկովկասում, այլ Հայոց Արևելից կողմերում, որ դառնում է «արևելեայցս եկեղեցեացս մայրաքաղաքաց տեղի»*[150]*։*

Շարունակելով քարոզչական գործունեությունը՝ Եղիշան Գիսից անցնում է դիցամոլների կենտրոնատեղիներից Ջերգուն և փորձում նրանց դարձի բերել իրենց իսկ կենտրոնում։ Սակայն Ջերգունում նրա քարոզներն առաջացնում են տեղի քրմերի ու մոլեռանդ ամբոխի զայրույթը, և նրանք, սպանելով սրբին, դին նետում են Հոմենք վայրում գտնվող մահապարտների համար հատուկ նախատեսված փոսը[151]*։ Ավանդության փոխանցմամբ՝ երկար տարիներ այստեղ ամփոփված մնալուց հետո ~~Վաչագան Գ Բարեպաշտ Աղվանից արքայի օրոք,~~ Աստծո զորությամբ, հայտնաբերվում են նրա նշխարները և ամփոփվում Արցախի Մեծ Կողմանք գավառի Ուռեկան (Հոռեկա, Գլխովանք) կոչվող վայրում։ Որոշ ժամանակ անց սրբի մասունքները փոխադրվում են նույն գավառի Ներսմիհր կամ Ջրվշտիկ վանք, որն այսուհետ սկսում է կրել «Եղիշէ առաքյալ» անունը*[152]*։*

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սբ. Եղիշայի նահատակությունը տեղի է ունեցել 3-րդ դարի առաջին տասնամյակում[153]*։*

Այսպես է ավարտում իր սրբակյաց կյանքը Եղիշան, ով գալով Երուսաղեմից՝ եկեղեցու պատմության մեջ մնում է որպես Ջողա երկրի, Բուն Աղվանքի և Հայոց Արևելից կողմերի լուսավորիչ[154]*, առաքյալ*[155*]*։*

---

148 Օրբերլյան, էջ 21:

149 Նույն տեղում, էջ 341:

150 Կաղանկատվացի, էջ 10:

151 Կաղանկատվացի, էջ 11:

152 Նույն տեղում, էջ 11-12:

153 Հ. Ս. Սվազյան, Քրիստոնեության Աղվանք ներթափանցման ուղիներն ու ժամանակաշրջանը, էջ 131-141: Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, էջ 69-72:

154 Մ. Բարխուտարյանցի ասելով՝ սբ. Եղիշան քարոզել և աշակերտների է ուսուցանել նաև Ճղբաց, Լփնաց, Բագուի ու Շամախու գավառներում: Տես Մ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հտ. Ա, էջ 51:

155* Աղվանից եկեղեցու հիմնադրման վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ կան տարամետ տեսակետներ: Ուսումնասիրողների մի

Եղիշա առաքյալի նահատակությամբ, սակայն, նրա գործը չի ընդհատվում։ Այն շարունակում են նրա աշակերտները, որոնք նույն ջերմեռանդությամբ քարոզչական աշխատանքներ են տանում, խորացնում և ընդարձակում քրիստոնեության տարածման աշխարհագրական սահմանները։

Խադ և Դադի (Դադո, Թադեոս)

Նույն ժամանակաշրջանում քարոզչական աշխատանքներ էին տարվում նաև Ուտիքին սահմանակից Արցախ հայկական նահանգում։ Աղբյուրների համաձայն՝ նման աշխատանքներն Արցախում նույնպես իրականացնում էին Թադեոս առաքյալի աշակերտները, որոնք այդ նպատակով ուղարկվել էին այստեղ և մեծ եռանդով ի կատար էին ածում այն։ Նրանցից էր Խադ անունով եպիսկոպոսը, որը Թադեոս առաքյալի յոթանասուն աշակերտներից էր և Եղիշա քարոզչի հետ միասին ուղարկվել էր Հայոց Արևելից կողմեր՝ քրիստոնեություն ավետելու։ Այս մասին առաջինը վկայում է ասորիների Պատրիարք Միքայել Ասորին իր ժամանակագրության հայերեն թարգմանության մեջ. «Եղիշէ և Խադ. երկոքին սոքա յիւթանասնիցն են, և գնացին ի կողմանս

մասը, հիմք ընդունելով Եղիշային հիշատակող այս տեղեկությունները, կարծում է, որ Աղվանքում քրիստոնեությունը մուտք է գործել այդ առաքյալի քարոզչությամբ՝ տակավին 1-ին դարում կամ 1-ին և 2-րդ դարերի սահմանագծին: Տես The Caucasian Albanian Palimpsests of Mount Sinai, Edited by J. Gippert, W. Schulze, Z. Aleksidze, J.-P. Mahé, vol. I, Brepols, 2008, p. XI-XIII: Մ. Բալայան, Հայ Աղվանից եկեղեցին (սկզբնավորումից մինչև մեր օրերը), Ստեփանակերտ, 2009, էջ 16-17: Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, էջ 50-67: Խնդրին անդրադարձած հետազոտողների մյուս մասի համոզմամբ «Աղվանից աշխարհի պատմության» տեղեկությունները Եղիշա առաքյալի քարոզչության, նահատակության և Աղվանից եկեղեցին հիմնադրելու մասին հետագայի, այն է՝ 7-րդ դարի հորինվածք են՝ ստեղծված որոշակի կրոնաքաղաքական իրադարձությունների ազդեցությամբ և, ըստ ամենայնի, հետամտել են Աղվանից եկեղեցին Հայոց եկեղեցու ազդեցությունից դուրս բերելու նպատակ: տես А. А. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, с. 183-184: Ա. Ա. Հակոբյան, «Վաչագանի վէպը» եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Զ. դարերի Աղուանքում, Հանդէս ամսօրեայ, Վիէննա, 2003, թ. 1-12, էջ 47: Խառատեան Հ., Եղիշէ առաքեալի, Գրիգորիսի եւ Կովկասեան Աղուանքի քրիստոնէացման հարցի շուրջ, Բազմավէպ, Վենետիկ, 2010, թ. 1-2, էջ 40-59:

Աղուանից (իմա Հայոց Արևելից կողմեր-Հ.Ս.) հրամանաւ Թադէի և անդ կատարեցան»[156]*։ Նրան, հավանաբար օգտվելով միևնույն աղբյուրից, կրկնում է 13-րդ դարի պատմիչ Վանական վարդապետը գրելով. «Եւ Եղիշէ և Խադայ Բ՝ յիւթանասիցն են և գնացին կողմանս Աղուանից հրամանաւ Թադէոսի, և անդ կատարեցան»*[157]*։ Թե երբ է տեղի ունեցել այս իրադարձությունը, պատմիչները չեն նշում, բայց այն փաստը, որ Խադը հիշատակվում է Եղիշայի հետ կողք-կողքի և միևնույն առիթով, տարակուսանք չի թողնում եզրակացնելու, որ նա հիշյալ քարոզչի ժամանակակիցն էր և իր գործունեությունն Արցախում կարող էր ծավալել նույն ժամանակաշրջանում, այն է, մ.թ. 2-րդ դարի առաջին կեսում։*

Աղբյուրների լռության պատճառով դժվար է ամբողջովին վեր հանել Արցախի հոգևոր կյանքում Խադ եպիսկոպոսի գործադրած ջանքերը։ Ելնելով մի շարք անուղղակի տվյալներից՝ ավելի քան հավանական կլինի ենթադրել, որ նա իր հմուտ քարոզչական գործողություններով ու բարեպաշտ կենցաղով վայելել է հավատացյալների համակրանքը և մեծարվել նրանց կողմից։ Ասվածի առհավատչյան Տրտու (Թարթառ) գետի հովտում (Արցախի հանրապետություն, Մարտակերտի շրջան) կառուցված նշանավոր եկեղեցին է, որ նրա անվամբ կոչվում է Խաթարի կամ Խադայի վանք, իսկ ժողովրդական հնչողությամբ Խաթրավանք ու Խթրավանք[158]*։*

Նրա անունով վանք է կառուցվել նաև Երուսաղեմում. «Խաթրայ երանելւոյն վանքն, մերձ Սուրբ գերեզմանի մօրն Տեառն, թերեւս է պարտէզ ի ձեռնս հայոց»[159]*։*

Արցախ աշխարհում քրիստոնեություն քարոզած կրոնավորների շարքում հիշատակում է Դադին (Դադիում, Դադո)[160]*, որը,*

---

156 Միքայել Ասորի, էջ 233:

157 Գիրք Թղթոց, էջ 536: Տես նաև Հայապատում, էջ 47:

158 Շ. Մ. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1980, էջ 44: Տես նաև Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, էջ 120, 341: Բ. Ուլուբաբյան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին, էջ 410:

159 Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, հտ. Ա, աշխատասիրութեամբ հաւաքեաց Աստուածատուր եպս. Տ. Յովհաննէսեանց, Յերուսաղէմ, 1890, էջ 90:

160 Հայապատում, էջ 47:

մեր կարծիքով նույն՝ «Թադեոս» անվան կրճատ ձևն է և անձնավորում է միևնույն քարոզչին։

Վերոբերյալ հաղորդումների համաձայն՝ Դադի-Թադեոսն իր գործունեությունն Արցախում սկսում է Եդեսիայի հայոց Աբգար թագավորի վախճանից հետո։ Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վերջինս Աբգար 7-րդն էր, որը իշխել է 109-116 թթ. և իր հպատակությունն հայտնելով հռոմեացիներին՝ ճանաչվում է նաև Օսրոյենի թագավոր[161]։ Հիմք ընդունելով նրա թագավորության այս՝ պաշտոնապես ընդունված տարեթվերը՝ աներկբայորեն գտնում ենք, որ Դադին կամ, ինչպես Միքայել Ասորին է անվանում, Թադեոսն իր առաքելությունն Արցախում իրականացրել է հիշյալ արքայի վախճանից հետո, ոչ շուտ, քան 116 թ. կամ, որ նույնն է, 2-րդ դարի կեսերը։ Պարզելով սույն եպիսկոպոսի գործունեության ժամանակաշրջանը՝ տեղին ենք համարում նշել, որ սխալվում են այն ուսումնասիրողները, որոնց կարծիքով նա և եպիսկոպոս Խադը Հայոց Արևելից կողմերում հաջորդել են Մանուկ Գրիգորիսին[162], որն ակնհայտ թյուրիմացություն է և հակառակ պատմական ճշմարտությանը։ Ինչպես վկայված է մեզ հասած աղբյուրներում, Խադը և Դադին սբ. Եղիշայի ժամանակակիցներն էին և նրա հետ մեկտեղ 2-րդ դարի առաջին կեսերին ուղարկվել էին Հայոց Արևելից կողմեր։ Եղիշան հաստատվել էր Ուտիքում, իսկ Խադը և Դադին՝ Արցախում, մինչդեռ Մանուկ Գրիգորիսն այստեղ հայտնվել էր Գրիգոր Լուսավորչի հրամանով և գործել 4-րդ դարի 30-ական թվականներին, այսինքն, անհամեմատ ավելի ուշ, քան երուսաղեմյան պատվիրակները և, ուրեմն, չէր էլ կարող նախորդել նրանց։ Այսպիսով, ինչպես միանգամայն պարզորոշ նկատվում է նշված փաստերից, Լուսավորչի թոռն է Հայոց Արևելից կողմերում հաջորդել Խադ և Դադի քարոզիչներին և ոչ թե հակառակը, որ սխալմամբ կարծում են որոշ ուսումնասիրողներ։

Խոսելով Արցախում Խադ և Դադի եպիսկոպոսների կրոնական գործունեության մասին՝ Միքայել Ասորու հայերին թարգմանության հեղինակը հատուկ ընդգծում է, որ նրանք նահան-

[161] Հայ ժողովրդի պատմություն, հտ. I, էջ 774:
[162] Բ. Ուլուբաբյան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին, էջ 28:

գում գործել են «ծածկաբար», այսինքն «թաքուն» և շատերի պես նահատակվել հանուն հավատի[163]*։ Դատելով այս հաղորդումից՝ հիշյալ քարոզիչներն իրենց առաքելությունն Արցախում իրականացրել են անասելի ծանր պայմաններում, ուր ամենուրեք նրանց հետապնդել են հալածանքներն ~~ու դարանակալած սպանությունները~~, որոնք էլ դրդել են հավատի նվիրյալներին զգուշավորության համար գործել գաղտագողի, որի հետևանքով նրանց կյանքի ու գործունեության շատ դրվագներ մնացել են անհայտ և չբացահայտված։ Այնուհանդերձ, Կուրի աջափնյակում նրանց պատվին կանգնեցված կրոնական հուշարձանները և անունների հիշատակումները գրավոր մատյաններում վկայում են, որ նրանք Արցախում լայնածավալ քարոզչական աշխատանքներ են տարել և հավերժացել անվանապես կառուցված կրոնական շինություններով։ Վերջիններից էին Խադ քարոզչի անունը կրող Խութավանքը, որի մասին խոսք եղավ վերևում և Արցախի Խորաձոր*[164] *կոչվող պատմական վայրում*[165] *կառուցված վանական համալիրը, որն ըստ Կաղանկատվացու «կոչի Դադիվանք»*[166]*։ Պատմիչների տեղեկացմամբ՝ այն կառուցվել է Դադի-Դադոյի վախճանից հետո և ստացել նրա անունը. «Դադիու,- մասնավորապես գրում է Վանական վարդապետը,- մի յեօթանասնիցն ... եմուտ ի Փոքր Սիւնիս և կրօնաւորեալ՝ անդէն ծածկաբար վախճանեցաւ. և տեղին շինեցաւ վանք և յանուն նորա կոչեցաւ»*[167]*։*

Այսպիսով, 2-րդ դարի առաջին կեսում քրիստոնեության տարածման ալիքն ընդգրկում է նաև Արցախը և Խադ ու Դադի քարոզիչների ջանքերի շնորհիվ իր ուրույն տեղը գտնում հասարակության գիտակցության մեջ և առօրյա կյանքում։

---

163 Տես վերը:

164 Գտնվում է ներկայիս Արցախի հանրապետության Քարվաճառի շրջանում:

165 Այստեղ տոհմական գժտությունների պատճառով 821 թ. որդու՝ Ստեփանոսի հետ միասին իր ազգակցի կողմից սպանվում է Միհրանյան իշխանական տոհմի վերջին ներկայացուցիչ Վարազ Տրդատ Գ-ն: Տես Կաղանկատվացի, էջ 340:

166 Նույն տեղում:

167 Հայապատում, էջ 47: Միքայել Ասորի, էջ 33:

ՄԱՍ Բ

ԱՂՎԱՆԻՑ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ

Աղվանից հայրապետներն հիշատակվում են 7-13-րդ դարերում ապրած և ստեղծագործած հայ հեղինակների կազմած գավազանագրքերում, որոնցում թվարկվում են Սբ. Եղիշայի 2-րդ դարի կեսերից հաջորդած առաջնորդները, նշվում նրանց աթոռակալության տարիներն ու կյանքի և գործունեության զանազան դրվագները[168]: Այդ ցանկերի համաձայն՝ Սբ. Եղիշային, մինչև Մանուկ Գրիգորիսը, հաջորդել են Մատթեոս, Սահակ, Մովսես[169] և Պանդ հայրապետները[170], որոնց մասին, սակայն, տեղեկություններ չեն պահպանվել: Այդ բացը նկատել են նաև իրենք՝ գավազանագրքերի հեղինակները և դրանց պակասությունը բացատրել անօրենների կողմից նրանց անուններին ու գործերին վերաբերող տեղեկությունների վերացմամբ և իրեղեն ապացույցների ոչնչացմամբ. «Սակս հայրապետական անուանց պարտ և պատշաճ վարկանելի էր զստոյգն յիշատակաւ դրոշմել ի գրի: Բայց զի ի սկզբանցն հոլովեալ նախաշաւիղ առաջնորդաց գորք և ժամանակք և անուանք հրկէզ եղեալ յանօրինաց, և կտակարանք և սպասք և տեղիք կալոյ նոցա անյայտք մեզ, ոչ բերեալ ի լուր»,- գրում է Մովսես Դասխուրանցին և ավելացնում, որ նշված խնդրով հետաքրքրվողներին ի գիտություն ներկայացված տվյալները «փոքր ի շատէ» բացահայտված տեղե-

---

168 Կաղանկատվացի, էջ 345: Մխիթար Գոշ /Կաղանկատվացի, Յաւելուած Բ, էջ 350: Գանձակեցի, էջ 192-195: Մխիթար Այրիվանեցի, էջ 19: Սույն պատմիչները այս հայրապեների թվում տեղադրում են Աղվանքի Շուփհաղիշո անվամբ եպիսկոպոսապետին, բայց այնքանով, որքանով այլ աղբյուրներում վերջինս նշված է որպես Աղվանքի Վաչագան Գ թագավորին /488-510 թթ./ ժամանակակից կրոնական գործիչ:

169 Մխիթար Գոշի մոտ՝ Կարն: Տես Կաղանկատվացի, Յաւելուած Բ, էջ 350: Հայապատում, էջ 384:

170 Կաղանկատվացի, էջ 342 և այլք: Աղվանից հայրապետների շարքի քննական վերլուծությունը տես Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերություններ 2-8-րդ դարերում, էջ 91-103:

կություններ են[171]։ Դրանց համաձայն՝ այդ հայրապետներից իր գործերով աչքի է ընկել Տեր Ղազարը, որի հիշատակը հավերժացել է իր անունով կառուցված եկեղեցական շինությամբ։

[171] Կաղանկատվացի, էջ 341-342:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՂՎԱՆԻՑ ԵԿԵՂԵՑԻՆ Դ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

Ա. Թովմա Սատաղցի

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ընդունելուց հետո Սբ. Գրիգոր Լուսավորիչը ձեռնամուխ է լինում Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգի ստեղծմանը՝ նախ և առաջ լծվելով եպիսկոպոսական աթոռների ստեղծմանը։ Ուխտանեսի վկայությամբ՝ Գրիգոր Ա-ն Հայաստանի երեսուն տարբեր գավառներում հիմնադրում է թեմեր[172], որոնց թվում էին նաև Ուտիքի Գարդման գավառը[173] և Արցախի Ամարաս կենտրոնը[174]։ Դրանց ստեղծումն ինքնանպատակ չէր։ Այս միջոցով Լուսավորիչը նորանոր կողմնակիցներ էր ընդգրկում շարժման մեջ, որոնք, Լուսավորչի հետևությամբ, իրենց հերթին թեմեր են ստեղծում, աթոռակալներ նշանակում և ներգրավվում հեթանոսության դեմ մղվող պայքարում։ «Այս երեսուն եպիսկոպոսք,- գրում է Ուխտանեսը,- որք աթոռակալութեամբ ընկալան ձեռնադրութիւն ի սրբոյն Գրիգորէ, և այլ ևս երեք հարիւր և եւթանասուն եպիսկոպոսք, որ և նոքա կարգեցան ի տեղիս տեղիս տեսուչք և առաջնորդք յիւրաքանչիւր գաւառս ի փառս Աստուծոյ»[175]։

Ստանձնելով երկրի քահանայապետի պաշտոնը՝ Մեծն Գրիգորը, Բուզանդի վկայությամբ, գալիս է Արցախ և հաստատվելով նրա Հաբանդ գավառում՝ ձեռնամուխ լինում Քրիստոսի հավատով այն լուսավորելու աշխատանքներին[176]։ Այս մասին առավել մանրամասնորեն հաղորդում է նաև Կաղանկատվացին, ըստ որի՝ այստեղ նա քարոզչական լայն գործունեություն է ծա-

---

172 Ուխտանէս, Պատմութիւն Հայոց, հատուած առաջին, Վաղարշապատ, 1871, էջ 100:

173 Նույն տեղում:

174 Բուզանդ, էջ 26: Կաղանկատվացի, էջ 35:

175 Ուխտանէս, Պատմութիւն Հայոց, հատուած առաջին, էջ 100: Տես նաև Ագաթանգեղոս, Վարք, էջ 178:

176 Բուզանդ, էջ 26:

վալում, խրատական հորդորներ հնչեցնում, Քրիստոսի որդու պատվիրաններին հավատարիմ մնալու կոչեր անում, Ամարասում մի նոր եկեղեցու հիմքերը գցում և հոգևոր անձերի թիվն ավելացնում։ Նա գրում է. «Առեալ... զքահանապետութեանն պատիւ՝ (Գրիգոր Լուսավորիչը-Հ.Ս.) ... եկեալ ի Հաբանդ գաւառ՝ ուսուցանէր և խրատէր պահել զպատուիրանն Որդւոյն Աստուծոյ. անդ արկանէր հիմն եկեղեցւոյն գիւղաքաղաքն Ամարասայ և կացուցանէր գործօնս և հրամանադարս՝ շինել եկեղեցի»[177]*։ Այսպես, քրիստոնեության հետագա ընթացքի համար ամուր հիմքեր ստեղծելով՝ Գրիգոր Լուսավորիչը Թորգոմի տան տասվեց ~~մեծամեծ իշխանների~~, այդ թվում և Ուտիքի ու Արցախի (ծավդեացների-Հ.Ս.) իշխանների ուղեկցությամբ*[178]*, 301 թ. ուղևորվում է Կեսարիա և տեղի միտրոպոլիտ Ղևոնդիոսի կողմից ձեռնադրվում Մեծ Հայքի արքեպիսկոպոս*[179]*։*

Կեսարիայից վերադառնալով՝ Հայոց առաջին հայրապետն անցնում է վճռական գործողությունների, որոնց մեջ առանձնահատուկը թագավորի՝ Տրդատ Գ-ի ու նրա մերձավոր շրջապատի մկրտությունն էր։ Այն տեղի է ունենում Արածանի գետում՝ Նպատ լեռան ստորոտում ընկած Բագավան (Դիցավան) կոչվող վայրին հարող շրջանում[180]*։*

Հայոց թագավորի մկրտությունը մեծ իրադարձություն էր ողջ տարածաշրջանի քրիստոնեության կյանքում։ Այս արարողությանը մասնակցում էին նաև հարևան ժողովուրդների՝ լազերի,

---

177 Կաղանկատվացի, էջ 35: Մի ավանդության համաձայն այս եկեղեցու կառուցման բոլոր օրերին Գրիգոր Լուսավորիչը գիշերները բարձրացել է Ամարասից ոչ հեռու գտնվող Սոս անունով բլրի վրա և աղոթքներով դիմավորել այգաբացը, ինչը պատճառ է դարձել, որ բլուրը կոչվի «Լուսավորչի սար» և այդ անվամբ հասնի ընդհուպ մեր օրերը: Տես Մ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 115: Բ. Ուլուբաբյան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին, էջ 17:

178 Ագաթանգեղոս, Պատմություն, էջ 446: Ագաթանգեղոս, Վարք, էջ 172:

179 Ագաթանգեղոս, Վարք, էջ 174-176: Հայ ժողովրդի պատմություն, հտ. II. Հայաստանը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, պատ. խմբ.՝ Ս. Տ. Երեմյան, Բ. Ն. Առաքելյան, խմբ. Ս. Ս. Արևշատյան, Հ. Մ. Բարթիկյան, Է. Լ. Դանիելյան, Ա. Ն. Տեր-Ղևոնդյան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Երևան, 1984, էջ 76:

180 Ագաթանգեղոս, Պատմություն, էջ 456-464: Ագաթանգեղոս, Վարք, էջ 171-172: Ուխտանես, Պատմութիւն, հատուած առաջին, էջ 101: Հայ ժողովրդի պատմություն, հտ. II., էջ 76:

վրացիների ու աղվանցիների թագավորները, որոնք ժամանել էին Տրդատ Գ-ի հրամանով[181]։ Այս պարագան ցույց է տալիս, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում ընդլայնվել էին քրիստոնեության տարածման սահմանները՝ ընդգրկելով նաև հիշյալ երկրները ։ Սկիզբ էր առել նոր վարդապետության Մեծ Հայք ու հարևան երկրներ ներթափանցման մի գործընթաց, որն ուղղորդվում էր Տրդատ Գ Հայոց թագավորի և Գրիգոր Ա Լուսավորչի կողմից և ծավալվում նրան համընթաց ։ Հետևաբար, Տրդատ Գ-ի մկրտությունն ու դրան վերոհիշյալ թագավորների մասնակցությունը այդ համընդհանուր շարժման կարևորագույն ձեռնարկումներից մեկն էր և ուներ որոշիչ նշանակություն։ Ուստի կարծում ենք, որ այս հանգամանքն էլ դրդել էր Հայոց թագավորին նրանց՝ որպես համախոհների հրավիրել Բագավան (Դիցավան) և նման արարողակարգերին մասնակցելու միջոցով համախմբել իրենց ուժերը՝ լուսավորչական աշխատանքներն իրականացնելու համար ։ Կաղանկատվացու և Գանձակեցու տվյալներով Տրդատ Գ-ի հետ միաժամանակ մկրտվող Աղվանքի թագավորը ոչ այլ ոք էր, քան Ուռնայր արքան[182], ինչը, սակայն ճիշտ չէ։

Ուսումնասիրությունները պարզել են, որ Ուռնայր արքան Պապ թագավորի ժամանակակիցն էր (369-373)[183] և ոչ մի կերպ չէր կարող Լուսավորչի կողմից մկրտված լինել[184] ։ Դա անուղղակիորեն հաստատում է նաև ինքը՝ Ագաթանգեղոսն իր «Վարքում» զետեղված Հայոց դարձի մասին պատմությամբ, ուր Գրիգոր Լուսավորչի մկրտած թագավորների շարքում Ուռնայրի անունը՝ որպես նրանցից մեկը, չի հիշատակվում։ Շարունակելով մեր միտքը՝ հարկ ենք համարում ավելացնել, որ Ուռնայր արքայի մկրտությունն ու քրիստոնեության պաշտոնական ճանաչումը տեղի է ունեցել միևնույն ժամանակ՝ 4-րդ դարի 70-ական թվականներին, երբ Հայաստանում թագավորում էր Պապ Արշակունին, իսկ հոգևոր գործերը վարում էր Ներսես Ա Մեծը (353-373)[185]։

---

181 Ագաթանգեղոս, Վարք, էջ 171, 172, 177:
182 Կաղանկատվացի, էջ 19-20: Գանձակեցի, էջ 193:
183 Հայ ժողովրդի պատմություն, հտ. II, էջ 76, 364:
184 Նույն տեղում
185 Մանրամասները տես Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, էջ 103-114:

Տրդատ Գ-ի և նրա հետ նշված թագավորների մկրտությունը քրիստոնեության հաղթանակն էր. այն միավորում էր տարածաշրջանի հավատացյալներին մեկ ընդհանուր գաղափարի շուրջ, քաղաքական ու դավանական մերձեցման հանգեցնում Հռոմեական կայսրության հետ և Սասանյան Պարսկաստանի դեմ պայքարի միասնական ճակատ ստեղծում։

Գրիգոր Լուսավորչի հռչակը տարածվում է, դուրս գալիս երկրամասի սահմաններից, արժանանում հավատացյալների վստահությանը։ Շատ չանցած՝ նշանակվում է նաև Վիրքի ու Աղվանքի հովվապետ ու իր սրտամատույց գործողություններով այս երկրներում նույնպես ճանապարհ հարթում քրիստոնեության հաղթանակի համար ։ Այս մտայնությամբ նա, ինչպես աղբյուրներն են հաղորդում, շարունակ քարոզիչներ ու հոգևոր գործիչներ է ուղարկում Հայաստանին հարևան նշված երկրներ ու Լաշեկա և ձեռնամուխ լինում դրանցում քրիստոնեության ամրակցման աշխատանքներին ։ «(Գրիգոր Լուսավորիչը – Հ. Ս.),-գրում է Ագաթանգեղոսն իր «Վարքում»,- եկեղեցիներ է հիմնադրում, Սուրբ Գրքին քաջածանոթ մարդկանց քահանա էր նշանակում, ոմանց ուղարկում էր Վրաց և Լազերի երկիրը, իսկ ուրիշներին՝ Աղվանք»[186] ։ Աղբյուրի համաձայն՝ նշված առաջադրանքով Աղվանք է ուղարկվում Թովմա անունով սատաղցի մի հոգևորական։ Այս իրադարձությամբ սկիզբ է առնում քրիստոնեության Աղվանք ներթափանցման մի նոր շրջան։

Լուսավորչական շրջանի առաջին հոգևոր գործիչն Աղվանքում, «մի սրբազան մարդ», որ ծագումով Փոքր Հայքի Սատաղ քաղաքից էր, Սուրբ Գրքին քաջատեղյակ անձնավորություն և Գրիգոր Լուսավորչին հարած գաղափարակից ու գործակից եպիսկոպոսներից մեկը[187]։ Պետք է կարծել, որ Հայոց, Վրաց և Աղվանից արքեպիսկոպոսը հիշյալ գործչին Աղվանք է ուղարկել Հայոց աշխարհի ամբողջական դարձից հետո՝ 301 թ. ոչ շատ ուշ։ Աղվանքում Թովմա եպիսկոպոսը գործել է հատկապես այն վայրերում, ուր հեթանոսությունն ավելի մեծ ուժ էր ներկայացնում և լիովին խոչընդոտում էր քրիտոնեության ծավալմանը։ Աղբ-

---

[186] Ագաթանգեղոս, Վարք, էջ 177:
[187] Նույն տեղում, էջ 178:

յուրները, սակայն, շատ բան չեն հաղորդում նրա կյանքի ու գործունեության մասին, բայց հիմք ընդունելով «Վարքի» հեղինակի այն հաղորդումը, թե Լուսավորչի ուղարկած մարդիկ «շտապում էին դեպի իրենց երկիրը՝ եկեղեցիներ հիմնադրելու և վկայարաններ կառուցելու համար»[188]*՝ կարող ենք վստահաբար ասել, որ Թովմա եպիսկոպոսն իր թեմում քարոզչական աշխատանքներ տանելուց զատ նաև եկեղեցիներ ու վանական այլ շինություններ է կառուցել, պատարագ մատուցել և նման խորհրդանիշերով նույնպես ժողովրդական զանգվածներին ուղղորդել դեպի քրիստոնեություն։ Առաջնորդվելով նույն մտայնությամբ՝ նմանապես հնարավոր ենք համարում, որ նա դպրոցներ է բացել և հավաքելով հերձվածողներին ու նրանց որդիներին, դաստիարակել քրիստոնեության ոգով։ «Ահա այսպես,- ամփոփելով Գրիգոր Լուսավորչի գործունեությունը՝ գրում է Ագաթանգեղոսը,- ճշմարտության խոսքը քարոզելու ընդունակ բազմաթիվ մարդկանց եպիսկոպոս և քորեպիսկոպոս ձեռնադրելով՝ (Գրիգոր Լուսավորիչը - Հ.Ս.) ուղարկեց զանազան վայրեր ու շրջաններ»*[189]*, որոնցից մեկն էլ Հայոց քահանայապետի կողմից Աղվանք ուղարկված սույն սատաղցի քարոզիչն էր։*

Նշանակալից էր Թովմա Սատաղցու ավանդն Աղվանքում քրիստոնեության տարածման ու հաստատման գործում։ Նրա քարոզների շնորհիվ նորանոր մարդիկ են ներգրավվում, իսկ քրիստոնեությունն աստիճանաբար վերածվում է տիրապետող կրոնի։ Ամրակցվում են Աղվանից եկեղեցու հիմքերը և անխախտ ուխտով միավորվում Հայոց եկեղեցու հետ։ Թե մինչև երբ է նա քարոզել Աղվանքում, անհայտ է։ Հաստատ է, սակայն, որ նրան այստեղ փոխարինել է մի հռոմեացի հոգևորական, որին քաղաքական հանգամանքների բերումով նույնպես Գրիգոր Լուսավորիչն է ուղակում Աղվանք։

* * *

Մովսես Կաղանկատվացու ու Կիրակոս Գանձակեցու հավաստմամբ, երբ Աղվանքի թագավորը (ըստ Կաղանկատվացու՝ Ուռնայրը) գալիս է Տրդատ Գ-ի և Գրիգոր Լուսավորչի մոտ

[188] Նույն տեղում:
[189] Նույն տեղում, էջ 178:

մկրտվելու, իր աշխարհի համար հոգևոր գործիչ է խնդրում։ «Ի նմին ժամանակի,- գրում է Կաղանկատվացին,- շնորհեցաւ նոցա այր մի երանելի՝ ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն ի Հռովմ քաղաքէ, որ եկեալ էր ընդ Տրդատ արքային»[190]։Այս մասին գրում է նաև Գանձակեցին՝ հավելելով, որ Լուսավորչի այս ընտրյալը նրա սպասավորներից էր։ «Եւ ձեռնադրէ սուրբն Գրիգոր զայր մի ի սպասավորայ իւրոյ եպիսկոպոս, որ եկեալ էր ընդ նմա ի հռոմոց և տայ զնա Ուռնայրի արքայի»[191]։ Պետք է կարծել, որ այս նշանակումը տեղի է ունենում ոչ ուշ, քան 325 թ., երբ Գրիգոր Լուսավորիչը տակավին ողջ էր և հաջողությամբ վարում էր Հայոց աշխարհի հոգևոր գործերը։

Այսպիսով, 4-րդ դարի առաջին քառորդում Աղվանքում հայտնվում է մի նոր կրոնական գործիչ, որին ուղարկել էր Գրիգոր Լուսավորիչը՝ քրիստոնեության սահմաններն ընդլայնելու նպատակով։

Գրիգոր Լուսավորչի սույն ընտրյալը, որի անունն այդպես էլ մնում է անհայտ, ինչպես նշվեց, Հռոմից էր, հավանաբար արքունի դռան սպասավորներից և Աղվանք է ուղարկվում որպես քարոզիչ, որի համար էլ, գուցե, Աղվանից հայրապետաց ցանկում չի հիշատակվում։ Բայց, չնայած այս հանգամանքին, Հովհ. Շահխաթունյանցը և Մ. Բարխուդարյանցը նրան նույնպես դիտում են որպես Աղվանքի հոգևոր առաջնորդ և իրենց կազմած ցանկերում «ոմն այր» և «ոմն օտարազգի» դարձվածքներով զետեղում են Սբ. Եղիշայից հետո՝ երկրորդ հորիզոնականում[192], ինչը, կարծում ենք, պատմականորեն ճիշտ չէ։ Հռոմեացին Աղվանքում հանդես էր գալիս սոսկ որպես քարոզիչ. դրանով սահմանափակվում էր նրա առաքելությունը։ Պատահական չէ, որ նրա առաջնորդական գործունեության մասին աղբյուրները լռում են։

Օտարազգի այս կրոնավորն Աղվանքում գործում է մինչև Մանուկ Գրիգորիսի ասպարեզ իջնելը՝ 4-րդ դարի 30-ական թվականները։ Աղբյուրները, ինչպես նշեցինք, ոչինչ չեն հայտնում նրա գործունեության մասին։

---

190 Կաղանկատվացի, էջ 20: Մանրամասները տես նույն տեղում, էջ 19-20:

191 Գանձակեցի, էջ 193:

192 Ստորագրութիւն, հտ. երկրորդ, էջ 333-334: Մ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, Ա, էջ 58:

Բ. Սուրբն Գրիգորիս Պահլավիկ (Մանուկ Գրիգորիս)[193]

Գրիգոր Լուսավորչի թոռը և Հայոց Կաթողիկոս Վրթանես Ա Պարթևի (331-341) ավագ որդին[194]*։ Նա յոթերորդն է Աղվանից հայրապետների շարքում*[195]*։ Մականվանված է «Սուրբ» տիտղոսով և ընդունված բոլոր ուսումնասիրողների կողմից։ Հորջորջվում է նաև Վրաց և Աղվանից կողմանց կաթողիկոս*[196]*։*

Ըստ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի՝ Մանուկ Գրիգորիսը ծնվել է Կեսարիայում 295 թ. և հոր հետ միասին 310 թ. փոխադրվել է Հայաստան։ Ապրելով արքունիքում՝ նա Տրդատ թագավորի հովանավորության ներքո հոգևոր կրթություն է ստացել, դարձել աստվածային գիտության հմուտ գիտակ, դեռևս պատանի՝ տասնհինգ տարեկանում[197]*, եպիսկոպոս ձեռնադրել և թագավորի ազգական Սանատրուկ*[198] *Արշակունու հետ միասին ուղարկվել Փայտակարան՝ այս քաղաքի վերակացուների հա-*

---

[193] Տես նաև Հ. Ս. Սվազյան, Աղվանից կաթողիկոս Մանուկ Գրիգորիս, Էջմիածին, 2003, թ. Զ, էջ 39-46: Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, էջ 79-90:

[194] Բուզանդ, էջ 24: Խորենացի, էջ 259; Կաղանկատվացի, էջ 31, 342: Գանձակեցի, էջ 194:

[195] Մովսես Դասխուրանցին և Մխիթար Այրիվանեցին Աղվանից հայրապետների շարքում Մանուկ Գրիգորիսին տեղ են տալիս Եղիշայից անմիջապես հետո՝ երկրորդ հորիզոնականում: Տես Կաղանկատվացի, էջ 342: Այրիվանեցի, էջ 19: Կիրակոս Գանձակեցին ու Մխիթար Գոշը՝ ութերորդ, սակայն նրանք ճիշտ չեն: Տես Գանձակեցի, էջ 194: Մխիթար Գոշ /Կաղանկատվացի, Յաւելուած Բ, էջ 350: Հայապատում, էջ 384: Մինչդեռ նշված ցուցակների քննությունից պարզվում է, որ նրա իրական տեղը նմանների շարքում յոթերորդն է: Տես Հ. Ս. Սվազյան, Աղվանից հոգևոր առաջնորդները նախակաթողիկոսական շրջանում, Պատմաբանասիրական հանդես, 2004, թ. 3, էջ 189-198: Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, էջ 91-103:

[196] Բուզանդ, էջ 24: Կաղանկատվացի, էջ 31:

[197] Կաղանկատվացի, էջ 36-37: Մխիթար Գոշ /Կաղանկատվացի, Յաւելուած Բ, էջ 350: Հայապատում, էջ 384: Մ. Օրմանյանի կարծիքով Մանուկ Գրիգորիսն այդ ժամանակ շուրջ քսանհինգ տարեկան էր: Տես Ազգապատում, էջ 147:

[198] Ըստ Բուզանդի՝ Սանեասան: Տես Բուզանդ, էջ 26: Այս Սանատրուկ-Սանեսանի շուրջ առաջ քաշված խնդիրների մանրամասն քննությունը տես Հ. Ս. Սվազյան, Աղվանից թագավորության Արշակունյաց ճյուղի սկզբնավորումը, Բանբեր Հայաստանի արխիվների, 1979, թ. 4, էջ 158-170:

տուկ խնդրանքով. «Եկեալ գործակալք կողմանցն յարևելից հիւսիսոյ, վերսկացուք հեռաւոր քաղաքին, որ կոչի Փայտակարան՝ ասէն ցարքայ. «Եթէ կամիցիս ուղղութեամբ վարել կողմանցն այնոցիկ ըստ այամ հաւատոյ՝ առաքեալ նոցա եպիսկոպոս ի զաւակէ սրբոյն Գրիգորի (Լուսավորչի-Հ. Ս.), զի հոյժ փափագելով խնդրեն, և գիտենք հաւաստի, թե ի հռչակեալ անուանէն Գրիգորի՝ ակնածեացէն և ի նորէն զաւակէ առնել զամենայն ըստ հրամանի»[199]։ Թեպետ այս ժամանակաշրջանում քրիստոնեությունն Հայաստանում հռչակված էր պետական կրոն, ծայրամասերում, սակայն, հեթանոսական սովորությունները շարունակում էին պահպանվել։ Տրդատ Գ-ն դրանք վերացնելու համար, ընդառաջելով փայտակարանցիներին, Մանուկ Գրիգորիսին, իր վերոհիշյալ ազգականի հետ միասին՝ որպես նրա աջակից, ուղարկում է Փայտակարան, չնայած «յանչիութիւն աւուցն հայելով պարականոն զիրն վարկանէր («անչափասունությանը նայելով այս բանը կանոնի դեմ էր համարվում»)[200]։ Նշանակումը, որի մասին խոսում է Խորենացին, կարող էր տեղի ունենալ Տրդատ Գ-ի թագավորության վերջին տարում՝ 330 թ. կամ դրանից ոչ շատ առաջ, երբ Հայոց քահանայապետն արդեն Լուսավորչի որդին էր՝ Արիստակեսը (325-333)։ Իր գործունեությամբ ու վարքագծով նմանվելով Պապին[201] «առաջնոյն մեծին Գրիգորին»[202], կրտսեր Գրիգորը, ինչպես Խորենացին է ասում, «լիներ օրինակ բարի, հայրենականօքն վարելով առաքինութեամբք այլ կուսութեամբ գեր ի վերոյ քան զհարսն և պատժսկանաւ զոյգ ընդ թագաւորին»[203]։ Դատելով բերված քաղվածքից՝ Մանուկ Գրիգորիսը բոլոր միջոցներով՝ քարոզներով, հորդորներով, պատժամիջոցներով և այլ ձեռնարկումներով, կարողանում է տեղի բնակչության շրջանում կայունացնել հավատը Քրիստոսի որդու հանդեպ և նրանց համախմբել Հայ Առաքելական Եկեղեցու շուրջը։

Ավարտելով իր առաքելությունը Փայտակարանում՝ Մանուկ Գրիգորիսն անցնում է Արցախ, ուր մինչ այդ քարոզչական աշ-

---

199 Խորենացի, էջ 259:
200 Նույն տեղում:
201 Կաղանկատվացի, էջ 36:
202 Բուզանդ, էջ 20:
203 Խորենացի, էջ 259:

խատանքներ էր տարել նրա պապը՝ Գրիգոր Լուսավորիչը և արցախցիների առջև նոր վարդապետության խորհուրդներ բացել։

Գալով Արցախ և հաստատվելով Հաբանդ գավառում՝ Լուսավորչի թոռը շարունակում է պապի սկսած գործը. լուսավորչական աշխատանքներ տանում, ավարտին հասցնում Ամարասում նրա հիմնադրած եկեղեցու շինարարությունը, քահանաներ ձեռնադրում և հետևորդներ պատրաստում[204]։ Այստեղ նա նաև եպիսկոպոսություն է հիմնադրում և Ամարասը վերածում կենտրոնի[205]։

Հայոց Արևելից կողմերում Մանուկ Գրիգորիսի ծավալած գործունեությունն ավելի է բարձրացնում պատանի կրոնական գործչի հեղինակությունը և տարածաշրջանի բնակչության շրջանում խորացնում վստահությունը նրա հանդեպ։ Դա պարզորոշ նկատվում է մասնավորապես աղվանցիների վերաբերմունքից, որոնք մեր միջնադարյան պատմիչների վկայությամբ այս ժամանակի Հայոց թագավորից ու կաթողիկոսից խնդրում են իրենց համար հոգևոր առաջնորդ ուղարկել հատկապես Մանուկ Գրիգորիսին։ «Խնդրեցաւ,- գրում է Կաղանկատվացին,- յԱղուանից Մանուկ Գրիգորիս ի Հայոց կաթողիկոսութիւն իւրեանց»[206]։ Որ աղվանցիներն իրենց համար հոգևոր առաջնորդ են խնդրել Մանուկ Գրիգորիսին, նշում է նաև Մխիթար Գոշը[207]։ Եպիսկոպոս խնդրելով Մանուկ Գրիգորիսին՝ Աղվանից եկեղեցու հայրերը, հավանաբար, փայտակարանցիների նման առաջնորդվել են այն մտայնությամբ, որ այդ պարագայում դարձի ուղին ոտք դրած աղվանցիները, պատկառելով Լուսավորչի հռչակից, անվերապահորեն կկատարեն նաև նրա թոռան հրահանգները և ինքնըստինքյան կարագացնեն երկրի քրիստոնեացման գործընթացը։ Այս միտումից անկախ՝ հայոց թագավորը, ով այդ ժամանակ արդեն Տրդատ Գ-ի որդի Խոսրով Կոտակն էր (330-338), իսկ կաթո-

---

[204] Բուզանդ, էջ 26: Ս. վ. Ջալալեանց, Ճանապարհոդութիւն, մաս Ա, էջ 196: Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, էջ 84:

[205] Հ. Ս. Սվազյան, Հոգևոր իշխանության առաջնորդանիստ կենտրոնները հին և վաղ միջնադարյան Աղվանքում (II-IX դարի սկիզբ), Բանբեր հայագիտության, 2018, թ. 3, էջ 53-65:

[206] Կաղանկատվացի, էջ 14-15:

[207] Մխիթար Գոշ /Կաղանկատվացի, Յաւելուած Բ, էջ 350: Հայապատում, էջ 384:

ղիկոսը՝ Լուսավորչի որդի Վրթանես Ա-ն (331-347), համաձայնվելով նրանց հետ, շուրջ 30-ական թվականների սկզբին Մանուկ Գրիգորիսին ուղարկում են Աղվանք։ Ձեռնադրվելով Աղվանքի եպիսկոպոս՝ Լուսավորչի թոռը մեծ եռանդով ձեռնամուխ է լինում երկրում քրիստոնեության ծավալման և ամրապնդման աշխատանքներին, «քարոզ ճշմարտութեան հաւատոյն Քրիստոսի լինէր»[208] *և հանապազօրյա տքնաջան աշխատանքով անխախտ պահեր ավետարանական խոսքը երկրում։ Բուզանդի վկայությամբ՝ նա, անցնելով պաշտոնավարման, նորոգում է տեղի խոնարհված եկեղեցիները, կառուցում նորերը, քահանաներ ձեռնադրում և վերակացուներ նշանակում*[209]*։*

Աղվանքում Մանուկ Գրիգորիսի կատարած գործերի մասին խոսում է նաև Կաղանկատվացին, որ գրում է. «Շինէր (Գրիգորիսը - Հ. Ս.) և եկեղեցիս ըստ կարգաց և քաղաքաց. և ձեռնադրէր երիցունս և յորդորէր ի պաշտօն սրբութեան և յիշատակ սրբոց կանխեալ հանապազ... շրջեալ ընդ ամենայն հեթանոսս մկրտեալ հանուն հօր և սրբոյ և հոգւոյն սրբոյ»[210]*։ Այսպես գործելով՝ Լուսավորչի շառավիղն Աղվանքում շատերին է դարձի բերում և ամրակցում քրիստոնեական հավատը երկրում։*

Մատենագրական տվյալների համաձայն՝ Մանուկ Գրիգորիսը եղել է նաև Վիրքի կաթողիկոս[211]*։ Խոսելով այս մասին՝ մեր պատմիչները, սակայն, որևէ ստույգ բան չեն ասում այստեղ նրա իրականացրած ձեռնարկումների մասին, այլ նշում են ընդհանուր ձևով՝ Աղվանքի կողքին հպանցիկ հիշատակելով նաև Վիրքը։ Սա հանգեցնում է աներկբա համոզման, որ Մանուկ Գրիգորիսի գործունեությունը Վիրքում նույնչափ բարեհաջող է ընթացել, որչափ և Աղվանքում։ Կաղանկատվացին գրում է. «զՀնգետասն ամօք ձեռնադրեալ եպիսկոպոսութիւն Մանուկն Գրիգորիս Վրաց և Աղուանից աշխարհին, և երթեալ լուսաւորէր զերկուսին զաշխարհսն և հաստատէր քրիստոնական հաւատովն գնալ»*[212]*։*

---

[208] Բուզանդ, էջ 24:
[209] Նույն տեղում:
[210] Կաղանկատվացի, էջ 37:
[211] Բուզանդ, էջ 20: Կաղանկատվացի, էջ 37: Օրբելյան, էջ 20:
[212] Կաղանկատվացի, էջ 37 /ընդգծ.՝ Հ. Ս./: Ըստ Մ. Օրմանյանի՝ նշված

Նշանակվելով Աղվանքի և Վիրքի եպիսկոպոս՝ Մանուկ Գրիգորիսը, սակայն, չի սահմանափակվում սոսկ դրանք լուսավորելով։ Զուգահեռ նա գործունեություն է ծավալում նաև Աղվանքին հարող Կովկասյան այլ երկրներում և իրեն հատուկ ջանասիրությամբ դրանց նույնպես դարձի բերում։ Նրա վարած կրոնական այս քաղաքականությունը, որը միտված էր քրիստոնեության տարածման սահմաններն ընդարձակելուն, իր գործնական կիրառումն է ստանում Աղվանքից հյուսիս՝ Կովկաս լեռան ստորոտում ընկած Ճղբաց ազգագավառում, ուր մեկնում է նա 30-ական թվականներին և քրիստոնյա գործչի նախանձախնդրությամբ լուսավորչական աշխատանքներ տանում։ Հաստատվելով ազգագավառի բերդաքաղաք Ցրի կոչվող Մեծ քաղաքում, որն ամենայն հավանականությամբ նրա կենտրոնն էր՝ Մանուկ Գրիգորիսն այստեղ եկեղեցի է կառուցում, ոմն Դանիելի սպասավոր նշանակում և ճիղբ մանուկներից մեկին օծելով՝ նրան օգնական տալիս[213]*։*

Աղվանից և Վրաց կողմերում ձեռք բերած այս հաջողություններից հետո Մանուկ Գրիգորիսը Հաբանդի իր աշակերտներից մի քանիսի հետ մեկնում է Մասքթաց աշխարհ, որտեղ «թագավոր» հորջորջումով իշխում էր Մանուկ Գրիգորիսի հետ Փայտակարան ուղարկված վերոհիշյալ Սանատրուկ-Սանեսանը, ով Տրդատ Գ-ի մահից հետո ձգտում է օտար ցեղերի օգնությամբ տիրել հայոց գահին[214]*։ Հայոց աշխարհի համար օրհասական այս ժամանակաշրջանում մեկնելով Մասքթաց երկիր՝ Մանուկ Գրիգորիսը, կարծում ենք, կրոնականից զատ հետապնդում էր նաև քաղաքական նպատակ, այն է՝ թույլ չտալ խռովարարներին արշավել Հայաստան։ Ուստի, տեղ հասնելով և հանդիպելով*

երկրներից բացի նաև Գուգարքի վրա տարածվում է «Գրիգորիսի հովվական հոգածությունը»: Տես Ազգապատում, 138:

213 Ճղբաց երկրում Մանուկ Գրիգորիսի կատարած գործերը և դրանց առնչվող մի շարք հարցերի մասին մանրամասն տես, Կաղանկատվացի, էջ 37-48: Հ. Ս. Սվազյան, Աղվանից կաթողիկոս Մանուկ Գրիգորիս, էջ 43-44:

214 Բուզանդ, էջ 24-28: Խորենացի, էջ 259-260: Կաղանկատվացի, էջ 38-39: Այս հարցի շուրջ առավել ընդարձակ տես Հ. Ս. Սվազյան, Հ. Ս. Սվազյան, Աղվանից թագավորության Արշակունյաց ճյուղի սկզբնավորումը, Բանբեր Հայաստանի արխիվների, 1979, թ. 4, էջ 168-170:

Սանատրուկ-Սանեսանին, որի խառնիճաղանջ[215] *բանակը պատրաստվում է հարձակվել Հայաստանի վրա՝ նա բարոյախրատական քարոզներով փորձում է ետ կանգնեցնել նրան անօրինական ճանապարհով Հայոց գահին տիրելու իր սևեռուն մտադրությունից։ Այս մտքին են հանգեցնում «թագավորին» ու նրա շուրջ համախմբված վաչկատուն ցեղերին ուղղված քարոզները, որոնք, ըստ էության, բացառում են «աւարութիւն և յափշտակութիւն, սպանութիւն, ագահութիւն, այլազգկութիւն, զայլոցկերութիւն, ցանկութիւն այլոց ստացուածոց»*[216]*։*

Խոստումնալից էր Մանուկ Գրիգորիսի գործունեության սկիզբը մասքութների երկրում։ Լսելով նրան՝ Սանատրուկ-Սանեսանը, որդիները և շատերը նրա մարդկանցից (ըստ Կաղանկատվացու՝ շուրջ 3870 մարդ[217]*) լցվում են հավատով և հարում քրիստոնեությանը։ Բայց շուտով իմանալով, որ նոր վարդապետությունն անհարիր է իրենց կենցաղին, թույլ չի տալիս ավարառություն, ունեզրկում և այլն՝ խորհուրդ են անում միմյանց մեջ և գտնելով, որ նա հայոց թագավորի առաջադրանքով եկել է ծրագրված արշավանքը խափանելու, որոշում են նրան, որպես հայոց թագավորի գործակալ ու գլխավոր խոչընդոտի անհապաղ սպանել։ Այդ որոշմանը միանում է նաև Սանատրուկ-Սանեսանը և թույլ է տալիս նրանց ի կատարել ածել այն։ Մանուկ Գրիգորիսի սպանությունը տեղի է ունենում մի առանձին դաժանությամբ։ Կապելով մի ամեհի ձիու պոչից՝ բաց են թողնում կասպից ծովին առափնյա Վատնեան կոչվող դաշտով մեկ և քարշ տալիս մինչև վախճանվելը*[218]*։ «Կալան ձի մի ամեհի,- գրում է Բուզանդը,- կապեցին, կախեցին զմանուկն Գրիգորիս զագւոյ ձիոյն, և արձակեցին ընդ ծովեզեր դաշտին հիւսիսական ծովուն մեծի, արտաքոյ իւրեանց բանակին ի դաշտին Վատնեաց։ Եւ այսպես սպանին զառաքինի քարոզն Քրիստոսի զմանուկն Գրիգորիս»*[219]*։ Վերջինիս վախճանը այսպես են ներկայացնում*

---

[215] Բուզանդ, էջ 28:
[216] Նույն տեղում, էջ 26:
[217] Կաղանկատվացի, էջ 119:
[218] Բուզանդ, էջ 26:
[219] Բուզանդ, էջ 26:

նաև Մովսես Խորենացին ու Կաղանկատվացին[220]*։ Այս եղեռնագործությանը, ինչպես պարզվում է Խորենացու հաղորդումից, մասնակցում էին նմանապես աղվանցիները։ «Իսկ ի հասանել համբաւոյ վախճանին Տրդատայ,-գրում է նա նշված տեղում,- ի դաւելոյ նորին Սանատրկոյ և այլոց ոմանց հանապազասուտ արունց Աղուանից՝ որի մասին նույն տեղում նշում է Խորենացին (Անշուշտ նրա դավանական հակառակորդները-Հ.Ս.) սպանին զերանելին»*[221]*։ Այն տեղի է ունենում 336/337 թթ։ Ըստ վկայությունների՝ սպանված Գրիգորիսի խոշտանգված դին նրա աշակերտները տեղափոխում են Հաբանդ և ամփոփում Ամարասում՝ իր պապի հիմնադրած եկեղեցու բակում*[222]*։*

Բեղուն էր Մանուկ Գրիգորիսի գործունեությունը, քարոզչության շրջանակը՝ ընդարձակ։ Նշանակվելով տարածաշրջանի հոգևոր առաջնորդ՝ նա այդ պաշտոնը վարում է շուրջ յոթը տարի՝ 330-336 թթ.[223] *և այդ ընթացքում հասցնում է լուսավորել Հայոց Արևելից կողմերը (Փայտակարան և Արցախ նահանգները), Բուն Աղվանքը, Զողա կամ Մասքթաց աշխարհը և, նույնիսկ, Կովկաս լեռան ստորոտում բնակվող ճիղը ցեղերին։ Իր գործունեությամբ նա կարողանում է աղվանական ցեղերի համար քրիստոնեությունը դարձնել ընդունելի կրոն և նրա պետականորեն ճանաչման համար իրական նախադրյալներ ստեղծել։ Պատահական չէ, որ մեր պատմիչները վստահ արձանագրում են, որ առաքելական հավատն Աղվանքում «նախ ի սրբոյն Եղիշայէ հիմնադրեալ և ապա ի սրբոյն Գրիգորիսէ հաստատեալ»*[224]*։ Լինելով համոզված կրոնավոր՝ Մանուկ Գրիգորիսը երկրի համար վտանգավոր պահերին իրեն դրսևորել է նաև որպես քաղաքա-*

[220] Խորենացի, էջ 259-260: Կաղանկատվացի, էջ 38-39:

[221] Խորենացի, էջ 259: Այս հարցի շուրջ արված դիտարկումները, տես Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, էջ 88:

[222] Բուզանդ, էջ 26: Խորենացի, էջ 260: Կաղանկատվացի, էջ 339: 1969 թ. Ամարասում կատարված պեղումների ժամանակ բացվել է մի դամբարան. «Սա է սուրբ Գրիգորիսի՝ իմաստուն գերեզմանը՝ հայերեն գրությամբ, որն ըստ ուսումնասիրողների, Մանուկ Գրիգորիսի գերեզմանն է»: Տես, Р. Б. Геюшев, Христианство в Кавказской Албании, с. 34:

[223] Ըստ Ռ. Բ. Գեյուշևի՝ 630-637 թթ.: Տես, Р. Б. Геюшев, Христианство в Кавказской Албании, с. 34:

[224] Բուզանդ, էջ 26:

կան գործիչ և դրանց զուգակցմամբ ապահովել է նրա անվտանգությունը։

Մանուկ Գրիգորիսը մեծ հեղինակություն է վայելել հավատացյալների շրջանում։ Նրա գերեզմանը Ամարասի եկեղեցու բակում վերածվել է ուխտավայրի, ուր ամեն տարի հավաքվելով՝ հավատացյալները տոնել են նրա հիշատակը։ Այն քրիստոնյաների հետ մեկտեղ ցնծությամբ նշվել է նաև մահմեդականների կողմից[225]*։*

Մանուկ Գրիգորիսի վախճանից հետո Աղվանքի քրիստոնեացման գործընթացը, սակայն, կանգ չի առնում։ Այն առաջ են տանում վերջինիս հաջորդները, որոնք հայրապետական աթոռի վրա փոխարինելով նրան՝ նույն նվիրվածությամբ շարունակում են Գրիգոր Ա Մեծի գործը։

[225] Р. Б. Геюшев, Христианство в Кавказской Албании, с. 34:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ «ՈՐՔ Ի ՁՈՂ ՀԱՅՐԱՊԵՏՔ ՆՍՏԱՆ»

Ա. Տեր Զաքարիա Ա: *Հաջորդել է Մանուկ Գրիգորիսին և Աղվանից հայրապետների ցանկում զբաղեցնում է ութերորդ հորիզոնականը*[226]*: Շրջահայաց մի հոգևորական, որն այս պաշտոնն ստանձնում է իր անվանի նախորդի եղեռական սպանությունից հետո՝ 336-337 թթ., հավանաբար ժամանակի Հայոց կաթողիկոս, Գրիգոր Լուսավորչի երեց որդու՝ Վրթանես Ա Պարթևի (333-341) ձեռամբ, քանզի այդ շրջանում, ընդունված սովորույթի համաձայն, Աղվանքի հայրապետներն իրենց ձեռնադրությունները ստանում էին Հայոց կաթողիկոսների համաձայնությամբ և նրանց կողմից:*

Ստանձնելով հոգևոր առաջնորդի պաշտոնը՝ նորընծա հայրապետը մի շարք բարեփոխումներ է անցկացնում, որոնց մեջ նշանակալիցը առաջնորդանիստ կենտրոնի փոխադրումն էր Զող (Զոր, Զոլ) քաղաք, որը Մասքթաց աշխարհի մայրաքաղաքն էր: Դա է ցույց տալիս Մխիթար Գոշի մի եզակի հաղորդումը, որի համաձայն՝ Աղվանից հայրապետներից ոմանք նստում էին Զողում: «Եւ այսու քիչ են, որք ի Զոլ հայրապետք նստան,- գրում է նա և անուն առ անուն թվարկում նրանց,-Զաքարիա, Դաւիթ սուրբն, սուրբն Յոհան Երեմիայ»[227]*: Ուրեմն, ինչպես պարզվում է այս սեղմ տողերից, Աղվանից հայրապետները ժամանակ առ ժամանակ հաստատվել են Զողում և այն վերածելով նստավայրի՝ տարածաշրջանի քրիստոնեացման գործընթացը ղեկավարել այստեղից: Իրազեկելով այս մասին՝ Նոր Գետիկ վանքի հիմնադիրը, սակայն, այդ փոխադրման ժամանակաշրջանի շուրջ որևէ ստույգ տարեթիվ չի նշում: Քանի որ հիշատակվածների շարքում*

---

[226] Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, էջ 102:

[227] Մխիթար Գոշ /Կաղանկատվացի, Յաւելուած Բ, էջ 350: Հայապատում, էջ 384/:

առաջինը տրվում է Տեր Զաքարիայի անունը, անվարան գտնում ենք, որ այդ իրադարձությունը տեղի է ունեցել նրա օրոք և նրա իսկ նախաձեռնությամբ։

Այսպիսով, 4-րդ դարի 30-ական թվականներից Աղվանից հայրապետական Աթոռը Տեր Զաքարիայի գլխավորությամբ հաստատվում է Զողում, և երկրի հոգևոր գործերը ղեկավարվում են այստեղից։

Աղբյուրները քիչ են խոսում Տեր Զաքարիայի հովվական գործունեության մասին։ Սակայն քրիստոնեության ընթացքն Աղվանքում թույլ է տալիս նրան որակել որպես հեռատես կրոնական գործիչ, որն իր վարած ճկուն քաղաքականությամբ կարողացել է երկիրը դուրս բերել Մանուկ Գրիգորիսի նահատակությունից հետո առաջացած տարտամ վիճակից և ապահովել առաքելական հավատի շարունակական գոյակցությունը, ընդարձակել նրա տարածման սահմանները և առավել զանգվածային բնույթ հաղորդել նրան։

Անհայտ են Տեր Զաքարիայի մահվան տարին և նրա վախճանի հանգամանքները։ Հավանաբար նա ապրել է սրբակյաց կյանքով և իր մահկանացուն կնքել է խաղաղությամբ՝ հաջորդներին թողնելով բարգավաճ մի հաստատություն։

Բ. Տեր Դավիթ Ա (Դավիթ սուրբն) *– Մեկն այն հայրապետներից, որոնք համարվում են մտացածին*[228]*։ Բայց իր «Սուրբ» մականունով, որը տրվում էր քրիստոնեական հավատի համար նահատակված հոգևորականներին կամ ոլորտում մեծ ներդրում ունեցող գործիչներին, անառարկելիորեն հերքում է այդ թյուր կարծիքը և լիովին արդարացնում նրա անվան հիշատակումը հայրապետների ցանկում, ուր նա ~~«Սուրբ» մականունով~~ հաջորդում է Տեր Զաքարիային և զբաղեցնում 9-րդ հորիզոնականը*[229]*։ Աղբյուրների լռության պատճառով նրա կյանքի ու գործունեության մասին ոչինչ հայտնի չէ, բայց ելնելով նրա սրբադասված լինելու փաստից՝ կարծում ենք, որ Դավիթ Ա-ն Աղվանից*

[228] Ն. Ակինեան, Մովսէս Դասխուրանցի, Հանդէս ամսօրեայ, Վիէննա, 1953, թ. 10-12, էջ 570: Բ. Ուլուբաբյան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին, էջ 104: А. А. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, с. 277:

[229] Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, էջ 102:

այն երախտավոր հայրապետն էր, որն իր գործողություններով մեծ չափերով նպաստում էր երկրի քրիստոնեացման աշխատանքներին։

Դավիթ Ա-ի մահվան հանգամանքները մեզ անհայտ են։ Գավազանացանկում նրան հաջորդում է Հովհան հայրապետը։

Գ. Տեր Հովհան Ա (Սուրբն Յոհան, Յոհան, Յովհան, Յովհաննէս) - Ինչպես նշվեց, հաջորդել է Դավիթ Ա հայրապետին դարի երկրորդ կեսին և նրա նման կրել «Սուրբ» աստվածային պատվանունը։ Աղվանից հայրապետների շարքում տեղադրվում է 10-րդ հորիզոնականում[230]։ Հայ պատմագիտության մեջ դասվում է անգո հայրապետների դասին, ինչը դարձյալ ճիշտ չէ, քանի որ աղբյուրները նրան հիշատակելիս կենսագրական այնպիսի մանրամասներ են հայտնում, որոնք ի ցույց են դնում նրա գործունեության առաջին դրվագները և այդպիսով հաստատում վերջինիս մարմնավոր գոյությունը։

Գահակալումից անմիջապես հետո Տեր Հովհանը մեծ եռանդով անցնում է իր պարտականությունների կատարմանը և այնպիսի սրբական գործունեություն է ծավալում, որ կարճ ժամանակամիջոցում լայն ճանաչում և հեղինակություն է ձեռք բերում տարածաշրջանում և նրա սահմաններից դուրս։ Նրա համբավը տարածվում է անգամ հեռավոր Հոնաց աշխարհում, ուստի և հաշվի առնելով այդ հանգամանքը՝ եկեղեցու հայրերը նրան՝ որպես եպիսկոպոս ուղարկում են Հոնաց աշխարհ՝ անշուշտ այստեղ քրիստոնեություն տարածելու և հեթանոս հոներին դարձի բերելու։ «Սուրբն Յովհան,- գրում է Կաղանկատվացին,- որ և Հոնացն եղև եպիսկոպոս տէր հայրապետական շնորհիւ»[231]։ Ուրեմն, ինչպես կարելի է մակաբերել վկայակոչված քաղվածքից, Տեր Հովհանի հայրապետական գործունեությունը ծավալվել է երկու փուլով, որոնցից առաջինում նա պաշտոնավարում է Աղվանքում, իսկ երկրորդում՝ Հոնաց աշխարհում։

Ստանալով նոր նշանակում՝ Տեր Հովհանը թողնում է Ջողի իր նստավայրը և հաստատվում Հոնաց երկրում։ Այստեղ նրա կատարած գործերի մասին, սակայն, ոչինչ չի խոսվում։ Ենթադրաբար կարելի է ասել, որ նոր ժամանակների առաքյալը վաչկա-

230 Նույն տեղում, էջ 102:
231 Կաղանկատվացի, էջ 342: Տես նաև Գանձակեցի, էջ 195:

տու ցեղերի միջավայրում լուրջ խոչընդոտների է հանդիպել, իր բարոյախրատական քարոզներով հարուցել նրանց զայրույթը և անժամանակ նահատակվել նրանց կողմից՝ այդպես էլ չհասցնելով որևէ արժանահիշատակ գործ թողնել: Նրա վախճանի մասին առաջ քաշված այս վարկածը, թերևս, հաստատվում է նրան տրվող «Սուրբ» պատվանունով, որը շնորհվում էր մարտիրոսվածներին:

Զողից սուրբ Հովհաննի հեռանալուց հետո խամրում է վերջինիս՝ որպես հոգևոր կենտրոնի դերը: Անվանապես մնալով առաջնորդանիստ կենտրոն՝ այն իր տեղն աստիճանաբար զիջում է Բուն Աղվանքի մայրաքաղաք Կապաղակին, որտեղ էլ տեղակայվում է Տեր Հովհանի անմիջական հաջորդը՝ նորանշանակ հայրապետ Տեր Երեմիան:

Դ. Տեր Երեմիա - Աղվանքի եզակի հայրապետներից մեկը, որի պատմականությունն ընդունում են բոլոր հետազոտողները: Նրա անվան հետ է կապված Մեսրոպ Մաշտոցի կողմից Աղվանից գրերի ստեղծման և գործնականում կիրառման պատմությունը: «Ի սորա աւուրս արար գիր Աղուանից երանելին Մաշտոց»,- վկայված է հայ մատենագրության մեջ[232]:

Տեր Երեմիան, որ հանդես է գալիս նաև «եպիսկոպոսապետ» տիտղոսով[233], Մեսրոպ Մաշտոցի «առաջին կամ երեց»[234] աշակերտներից էր, տիրապետում էր հունարենին, պարսկերենին և, անշուշտ, նաև այն խոսակցական լեզվին, որով միմյանց հետ հաղորդակցվում էին տեղաբնակները: Ելնելով Կիրակոս Գանձակեցու այն հաղորդումից, թե Աղվանից առաջնորդները «հայալեզուք, հայերէնախօսք յոլովք էին»[235]՝ կարելի է վստահաբար ասել, որ Տեր Երեմիան տիրապետում էր նաև հայերենին: Այս ամենով հանդերձ՝ նա օժտված թարգմանիչ էր, որի օժանդակությամբ Մեսրոպ Մաշտոցը իրականացնում է Սուրբ Գրքի թարգմանությունը:

Ժամանակագրական առումով նա 5-րդ դարի գործիչ էր, Մեծ Հայքում, Աղվանքում և Վիրքում լայն թափ ստացած լուսավորչական շարժման առաջամարտիկներից, պետական մտածո-

232 Նույն տեղում:
233 Խորենացի, էջ 325:
234 Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 174:
235 Գանձակեցի, էջ 192:

ղությամբ խոշոր մի անհատականություն, ով ճիշտ ըմբռնելով գրի ու դպրության դերն ու նշանակությունը՝ ժամանակի թագավոր Եսվաղենի հետ միասին իր գործուն մասնակցությունն է բերում Աղվանից գրերի արարման աշխատանքներին[236]*, որոնք շարունակվեցին 421-422 թթ.*[237]*։ Իր հայրապետության սկզբնական շրջանում նա Աղվանից հոտն առաջնորդում էր Ջողից։*

Աղվանից գրերի արարումը նոր լիցք է հաղորդում այդ երկրում քրիստոնեության ամրապնդմանը։ Քարոզչությունը դառնում է հասարակության բոլոր խավերին հասկանալի հոգևոր բավարարման միջոց։ Ձարկ է տրվում եկեղեցաշինությանը։ Բացվում են դպրոցներ, ուր Եսվաղենն ու Երեմիան երկրի տարբեր վայրերից մանուկներ են ժողովում և նրանց կրթում քրիստոնեական ոգով։ Կորյունի վկայությամբ՝ «զուգակիցներն» այդ դպրոցները հիմնում էին «ըստ արժանաւոր և պատեհ տեղեաց»[238]*, ինչից կարելի է ենթադրել, որ նրանք այդպիսիք բացում էին հատկապես հեթանոսաբնակ շրջաններում՝ որպես նրանց դեմ պայքարի լավագույն միջոցներ։ Դնելով դպրոցական գործի հիմքերն Աղվանքում՝ Տեր Երեմիան թագավորի հովանավորությամբ ու մի խումբ թարգմանիչների մասնակցությամբ անցնում է Սուրբ Գրերի թարգմանությանը*[239] *կամ, ինչպես նկատվել է հայ մատենագիտության մեջ, դրանց բովանդակությունն աղվաներենով մեկնաբանելու խնդրին*[240]*։ Ըստ Հ. Աճառյանի՝ Տեր Երեմիան իր խմբի հետ աղվաներենով մեկնաբանել է Մարգարեությունները, Գործք Առաքելոցը և Ավետարանը*[241]*, որոնց շնորհիվ դեռևս հեթանոս*

---

236 Հ. Ս. Սվազյան, Քրիստոնեության ընթացքն Աղվանքում նրա ճանաչումից հետո և թագավոր Եսվաղենն ու Երեմիա եպիսկոպոսը, Էջմիածին, 2005, թ. Բ-Գ, էջ 128-135:

237 Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, էջ 134-135:

238 Կորյուն, էջ 72:

239 Նույն տեղում:

240 Ն. Ակինեան, Ս. Մաշտոց վարդապետ. կեանքն ու գործունեութիւնը հանդերձ կենսագրութեամբ Ս. Սահակայ, Վիեննա, 1949, էջ 317: Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 220: Ա. Շ. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, էջ 91-92: Բ. Ուլուբաբյան, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 97:

241 Հ. Աճառյան, Հայոց գրերը (Հայագիտական հետազոտությունների մատենաշար), Երևան, 1984, էջ 220:

աղվանցիները կարճ ժամանակում հարել են քրիստոնեությանը։ «(Երեմիա եպիսկոպոսապետը-Հ.Ս.),- գրում է Կորյունը,- զաստուծայինն գրոց թարգմանութիւնս ի գործ ալկանէր, որով... աշխարհն Աղուանից մարգարէա գետք և առաքելածանոթք և աւետարան ու ժառանգք լինէին, և ամենայն աւանդելոցն Աստուծոյ ոչ իրք անտեղեակք»[242]*։ Այս խաղաղ միջոցառումներից բացի, թագավորն ու եպիսկոպոսապետը դիմում են նաև կոշտ միջոցների՝ հրամայելով «թափել զերծանել յունայնավար հնացելոցն և հնազանդ լինել ամենահեշտ լծոյն Քրիստոսի»*[243]*։ Նշված գործողությունների շնորհիվ քրիստոնեությունն Աղվանքում աննախընթաց վերելք է ապրում։ Սահմանվում է պալատական քահանայի աստիճան~~ակարգ~~*[244]*, որը նվիրապետական նոր կարգ էր Աղվանից եկեղեցու համակարգում, ընդարձակվում են հոգևոր դասի իրավունքները՝ ծավալվելով հասարակական կյանքում ու եկեղեցական հարաբերություններում։ Երկրում խորանում է հավատն Աստծո որդու նկատմամբ։ Տեր Երեմիան ու Եսվաղեն արքան ժամանակ Երուսաղեմում Աղվանից եկեղեցուն պատկանող վանքեր և կրոնական այլ շինություններ են կառուցում, որոնք հոգևոր կյանքի կենտրոններ լինելով հանդերձ՝ կարճ ժամանակում վերածվում են դպրության ու մշակույթի օջախների։ Այդ վանքերի ցանկը, հավանաբար, 7-րդ դարում*[245] *հրատարակել է Անաստաս անունով վարդապետը, որից էլ օգտվելով՝ Մովսես Կաղանկատվացին դրանց անունները հականե հանվանե զետեղել է իր գրքում՝ «Անուանք վանորայիցն, որք յԵրուսաղէմ են շինեալ Աղուանից անուն, զոր ի թղթոյ երանելւոյն Անաստասայ առ Վահան Մամիկոնեան առեալ ուսաք, այս են» խորագրի ներքո*[246]*։ Սույն աշխատությունը հրատարակել է նաև Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց ուխտի միաբան, եպիսկոպոս Աստվածատուր տեր Հովհաննիսյանցը*[247]*։ Ակներև պարզությամբ վերջինս ցույց տալիս, որ Երուսաղեմում այդ եկեղեցիները կառուցվել 5-րդ*

---

[242] Կորյուն, էջ 72-74:
[243] Նույն տեղում, էջ 74:
[244] Նույն տեղում, էջ 329:
[245] Ա. Շ. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, էջ 97:
[246] Կաղանկատվացի, էջ 285-286:
[247] Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, էջ 86-97:

դարից, այն է՝ արքա Եսվաղենի (անտարակույս նաև նրա հոգևոր լծակից եպիսկոպոս Երեմիայի) ժամանակներում և նրանց նախաձեռնությամբ։ Վկայակոչելով նրանցից Պանդ (Պանտ) կոչվող վանքում հայտնաբերված Եսվաղեն արքայի թողած արձանագրությունը՝ «Բարեխաւս ունելով առ Աստուած զսուրբ Եսայի և զերանելի հարսս Եսվաղան արարի վասն թողութեան մեղայ զյիշատակարանս զայս»[248]՝ նա իրավացիորեն եզրակացնում է, որ տապանագիրը գրվել է «...ի ժամանակս Ս. Սահակայ և Մեսրովբայ և թագաւորին Արսվաղանայ»[249]՝ այդ օրինակով փաստելով պատմական ճշմարտությունը։ Այդ վանքերում պահվում էին հիմնականում հայերեն աստվածախորհուրդ գրքեր և հաղորդակցվում էին հայերենով։ Այդ մասին հիշատակում է երկար տարիներ այդտեղ ծառայություն անցած վերոհիշյալ Անաստաս վարդապետը, որը մասնավորապես գրում է. «Իմովին իսկ աղօք տեսեալ զամս բազմս լինելով յաշխարհին յայնմիկ և ամենայն աստուածաշունչ և հոգեպատում պատուիրանք գոյր ի հայկական լեզու յամենայն մենաստանս Երուսաղէմի, որ է նովաւ շուրջ զԵրուսաղեմեաւ»[250]։ Ի դեպ, երկաթագիր հայերենով է դրոշմված նաև Պանդավանքում Եսվաղենի թողած խաչանկար արձանագրությունը[251], որը համադրելով Անաստաս վարդապետից քաղված տեղեկության հետ՝ եզրակացնում ենք, որ հայերենն Աղվանքում լայնորեն գործածվող լեզու էր և կիրառվում էր թե՛ առօրյա կյանքում, թե՛ հանապազորյա քարոզչական աշխատանքների ժամանակ[252]։ Ուշագրավը բերված օրինակներում նաև այն է, որ դրանք դարերի հեռվից առարկայորեն հաստատում են Կիրակոս Գանձակեցու հայտնի հաղորդումն այն մասին, որ Աղվանքի առաջնորդներն «հայալեզուք, հայերենախօսք յոլով էին»[253]։

---

248 Նույն տեղում էջ 89:

249 Նույն տեղում:

250 Հայապատում, էջ 229: Ա. Շ. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, էջ 101:

251 Ա. Գ. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959, էջ 77-78: Ա. Շ. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, էջ 103:

252 Այս ամենի մասին տես նաև Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, էջ 137-140:

253 Գանձակեցի, էջ 192:

Տեր Աստվածատուր Հովհաննիսյանցի ներկայացրած տվյալների համաձայն՝ Եսվաղեն արքայի ու Երեմիա հայրապետի ջանքերի շնորհիվ քրիստոնեությունն Աղվանքում մեծ հեղինակություն է ձեռք բերում և սկսում հովանավորվել պետության կողմից։ Այսպես, շարունակելով խոսքը Պանդավանքի մասին՝ նա հատուկ ընդգծում է, որ այն կառուցվել է «արքունի ծախիւք»[254], այսինքն՝ պետության միջոցներով և դրանով իսկ արտացոլում է Աղվանից եկեղեցու հանդեպ պետության դրսևորած վերաբերմունքը։ Վայելելով աշխարհիկ իշխանության հոգացողությունը՝ քրիստոնեությունը Աղվանքում գործում է ավելի անկաշկանդ և նոր հաջողություններ է գրանցում։ Խորանում է կապը մայր եկեղեցու և երուսաղեմյան վանքերի միջև, աշխուժանում է փոխհամագործակցությունը, Պանդավանքը դառնում է նեկայացուցչական մարմին, որ միջնորդավորում է կապը Երուսաղեմի պատրիարքարանի ու Աղվանից կաթողիկոսության միջև, զարգանում է դպրական արվեստը[255]։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Աղվանքում տեղի են ունենում նաև այլ փոփոխություններ, որոնք խորը հետք են թողնում Աղվանից եկեղեցու կյանքում։ Կորյունի մի հաղորդման համաձայն՝ Աղվանից գրերի գյուտից հետո Մեսրոպ Մաշտոցը դրանք տեղում ճշգրտելու և կատարելագործելու նպատակով գալիս է Աղվանք և «ի թագաւորական տեղիսն, տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից որում անուն Երեմիա կոչէին, և զնոցին թագաւոր որում Արսվաղ էր անուն»[256]։ Ընդունելով, որ ընդգծված արտահայտությունը վերաբերում է Բուն Աղվանքի մայրաքաղաքին՝ ուսումնասիրողներից Հ. Աճառյանը, ապա և Բ. Ուլուբաբյանը գտնում են, որ այդ ժամանակ Աղվանքի մայրաքաղաքը Չողն էր։ Նա զարգացնում է այն միտքը, թե Սուրբ Մաշտոցի հանդիպումը Երեմիայի ու Եսվաղենի հետ կայացել է այստեղ[257]։

---

254 Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, էջ 87:

255 Ա. Շ. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, էջ 102-103:

256 Կորյուն, էջ 72 /ընդգծ.՝ Հ. Ս./:

257 Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 219: Բ. Բ. Ուլուբաբյան, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 96: Չողին, այլ առիթով, անդրադառնում է նաև Մ. Բարխուտարյանցը և այն դիտում որպես Աղվանքի առաջին մայրաքաղաք: Տես Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ

*Սակայն, ինչպես ցույց են տվել աղբյուրները և առընթեր ուսումնասիրությունները, մ.թ.ա 1-ին դարի սկզբներից մինչև 5-րդ դարի կեսերը՝ Աղվանից թագավորության վերացումն ու 461 թ. մարզպանության կազմավորումը, անընդմեջ Աղվանքի մայրաքաղաքը եղել է եղել Կապաղակը (*Cabalaca-*ն)*[258]*. դրանով ինքնստինքյան հերքվում է առաջ քաշված տեսակետը։ Նույն կերպ մոտենալով խնդրին և նույնպես ժխտելով այն՝ փոխարենն աներկբայորեն գտնում ենք, որ Կորյունի խնդրո առարկա վկայությունը վերաբերում է Կապաղակին և մակաբերում, որ հանդիպումը, որի մասին խոսում է պատմիչը, տեղի է ունեցել Աղվանքի հինավուրց այս գլխավոր քաղաքում, ուր, ինչպես վկայված է, նստում էին նաև երկրի աշխարհիկ և հոգևոր տերերն «ամենայն ազատօք հանդերձ»[259]։ Այս հանգամանքը և նրանց կողքին Տեր Երեմիայի անվան հիշատակումը միանգամայն համոզիչ կերպով ցույց է տալիս, որ Տեր Երեմիայի ժամանակներում Կապաղակ քաղաքը հանդես էր գալիս ոչ միայն որպես տերության վարչական կենտրոն, այլև իբրև Աղվանից հայրապետաց նստավայր, ուր փոխադրվել էր այն Ջողից։ Այստեղ էին այսուհետ լուծվում պետական նշանակություն ունեցող շատ հարցեր և այստեղից էր ղեկավարվում եկեղեցական կյանքը տեղերում։ Պետք է կարծել, որ Կապաղակն իր այս դերը վերստանում է Տեր Երեմիայի ~~կողմից~~, քանի որ, ինչպես տեսանք, նշված իրադարձություններն Աղվանքում ծավալվում էին վերջինիս եպիսկոպոս նշանակվելուն հաջորդած ժամանակահատվածում՝ նրա գլխավորությամբ ու անմիջական մասնակցությամբ[260]։*

դրացիք, էջ 105:

258 Ն. Ակինեան, Մովսէս Դասխուրանցի, Հանդէս ամսօրեայ, Վիէննա, 1953, թ. 4-6, էջ 133; А. А. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, с. 133: Հ. Ս. Սվազյան, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 79, 199-207: Մ. Բալայան, Հայ Աղվանից եկեղեցին, էջ 42: О. Ш. Исмизаде, Кабала-столица древней Кавказской Албании, см. Вопросы истории Кавказской Албании, Баку, 1962, с. 54-74:

259 Կորյուն, էջ 72:

260 Առավել մանրամասն տես Հ. Ս. Սվազյան, Մեսրոպ Մաշտոցը Աղվանից գրերի հեղինակ: Բենիամին Երեց, տես Հայոց պատմության հարցեր 6, Երևան, 2005, էջ 76-92: Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, էջ 135-140:

Այսպիսով, 5-րդ դարի սկզբներից, Ավանից հայրապետական աթոռը զբաղեցնում է Երեմիա անունով եռանդուն ու գործունյա մի հոգևորական, որն իր նստավայրը հաստատում է Կապաղակում և մեծ դերակատարում ունենում Աղվանքի քաղաքական, հասարակական ու հոգևոր մշակույթի կյանքում։

Տեր Երեմիայով ավարտվում է Զողը ներկայացնող հայրապետների շարքը և նրա հաջորդներն իրենց գործունեությունը սկսում են իրականացնել Կապաղակից, որը նստավայր հռչակվելուց հետո շարունակում էր մնալ այդպիսին և որպես առաջնորդանիստ կենտրոն ծառայել նաև վերջիններիս։ Այստեղ էլ հայրապետական գահի վրա նրան փոխարինում է Շուփհաղիշո անվամբ կրոնական մի նոր գործիչ, ով աչքի է ընկնում Աղվանքի հասարակական կյանքում և եկեղեցական հարաբերություններում բերած իր խոշոր ներդրումով։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԱՂՎԱՆԻՑ ՀԱՅՐԱՊԵՏ ՇՈՒՓՀԱՂԻՇՈՆ[261]

Շուփհաղիշոն հիշատակվում է Աղվանից հայրապետների՝ մեզ հասած բոլոր ցուցակներում «Սուրբ» մականվամբ և դրանցում զբաղեցնում Մանուկ Գրիգորիսից հետո երկրորդ[262] կամ երրորդ[263] հորիզոնականները։ Սակայն սա չի համապատասխանում պատմական իրողությանը։ Մատենագրական մի շարք տվյալներ գալիս են ապացուցելու, որ նա ավելի ուշ ժամանակների գործիչ է, քան ներկայացվում է, և նրան հատկացված տեղերը զգալիորեն առաջ են բերված։ Այդ անհամապատասխանությունը նկատել է դեռևս Կիրակոս Գանձակեցին և թեպետ այդ կապակցությամբ հայտնել է իր տարակուսանքը, բայց և այնպես նրան թողել է նույն՝ երրորդ հորիզոնականում՝ «որպէս գտաք և եդաք»[264] գրությամբ հիմնավորելով իր մոտեցումը։

Շուփհաղիշոյին Մանուկ Գրիգորիսի անմիջական հաջորդ ընդունելով՝ Հովհ. Շահխաթունյանցն ու Բ. Ուլուբաբյանը նույնպես նրան տեղադրում են պատանի քարոզչից հետո[265]։ Հիշյալ հակասությունը հարթելու համար Հ. Աճառյանն առաջ է քաշում է երկու՝ նույնանուն հայրապետների գոյություն ունենալու տեսակետը, որոնցից մեկն իբրև թե գլխավորել է Աղվանից եկեղեցին 4-րդ դարում՝ անմիջապես հաջորդելով Մանուկ Գրիգորիսին, իսկ մյուսը՝ 6-րդ դարում և մասնակցել 556 թ. Դվինում հրավիրված եկեղեցական ժողովին[266]։

Գրելով, թե «Վաչագան Բարեպաշտի ժամանակակից Շուփ-

---

261 Շուփհաղիշոյի մասին տես նաև Հ.Ս. Սվազյան, Աղվանից հայրապետ Սբ. Շուփհաղիշո, Էջմիածին, 2021, թ. Ա, էջ 106-116:

262 Գանձակեցի, էջ 194: Մխիթար Գոշ /Կաղանկատվացի, Յաւելուած Բ, էջ 350: Հայապատում, էջ 384:

263 Կաղանկատվացի, էջ 342: Տես նաև Այրիվանեցի, էջ 19:

264 Գանձակեցի, էջ 194:

265 Ստորագրութիւն, հտ. երկրորդ, էջ 334: Բ. Ուլուբաբյան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին, էջ 103:

266 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ե, Երևան, 1962, էջ 184:

հաղիշոն կաթողիկոս (իմա՝ հայրապետ, եպիսկոպոսապետ) չի եղել և ոչ մի կապ չուներ IV դարի Աղվանից ենթադրյալ կաթողիկոս Շուփհաղիշոյի հետ՝ Բ. Ուլուբաբյանը ևս գտնում է, որ Աղվանից հայրապետների շարքում եղել է Շուփհաղիշո անվամբ երկու բարձրաստիճան հոգևորական, որոնցից մեկը գործել է 4-րդ դարում, իսկ մյուսը «Պարտավի եպիսկոպոս» պատվաստիճանով՝ 5-րդ դարում, որոնց հետագայում «պատմության հավաքող-խմբագիրը» շփոթել է միմյանց հետ «և կոչումն ուղղել»[267]։ Սակայն դժվար է համաձայնել նրանց հետ, քանի որ հայ մատենագրության մեջ հիշյալ անվամբ միայն մեկ հայրապետ է հիշատակվում. սա ևս առաջինը նկատել է Գանձակեցին։ «Այս անուն,- նկատել է նա,- ոչ գտանի ի կարգ համարոյ եպիսկոպոսացն»[268]։ Հետևաբար, Աղվանից հայրապետների շարքում եղել է Շուփհաղիշո անվամբ սոսկ մեկ աթոռակալ, և աղբյուրների հաղորդումները վերաբերվում են միայն նրան։

Շուփհաղիշոյի հովվապետության ժամանակի հարցով զբաղվել են Ն. Ակինյանը, Մ. Բարխուդարյանը և ուրիշներ։ Ն. Ակինյանը գտնելով, որ Աղվենի Սահմանադիր ժողովը գումարվել է «Ե դարու առաջին կէսին»՝ որոշել է, որ Շուփհաղիշոյի ժամանակը «...հարկ կըլլայ զետեղել ընդ մէջ 425-460 տարիներուն մերձաւորապէս»[269], որը չնչին տարբերությամբ մոտ է իրականությանը։

Նույն փաստը վկայակոչում է նաև Սիմեոն Ա Հայոց կաթողիկոսը (1763-1780)[270]։

Խնդրին ավելի իրատեսորեն մոտեցել է Մ. Բարխուդարյանցը՝ Շուփհաղիշոյին տեղ հատկացնելով Տեր Երեմիայից հետո՝ 12-րդ հորիզոնականում[271], ինչը քննությամբ հաստատվել է նաև մեր կողմից։ Այդ քննության համաձայն՝ «...առաջին պատճառ լուսաւորութեան մերոյ է սուրբն Եղիշայ, 7. Սուրբ Գրիգոր (Մանուկ Գրիգորիս), 10. Տէր Յոհան (Յովհան Ա, Յովհաննէս), 11. Տէր Երեմիայ, 12. Սուրբն Շուփհաղիշոյ», որով և ավարտվում է

---

267 Բ. Ուլուբաբյան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին, էջ 66:
268 Գանձակեցի, էջ 194:
269 Ն. Ակինեան, Մովսէս Դասխուրանցի, Հանդէս ամսօրեայ, Վիէննա, 1953, թ. 10-12, էջ 571-572:
270 Ջամբռ, էջ 75:
271 Մ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հատ. Ա, էջ 80:

Աղվանից հայրապետների նախակաթողիկոսական շրջանը[272]։

Պարզելով Շուփհաղիշոյի իրական տեղն Աղվանից հայրապետների ցանկերում՝ կարելի է վստահաբար պնդել, որ նա Աղվանքում հովվապետ է նշանակվել ոչ շուտ, քան 5-րդ դարը և հովվել նույն դարի վերջին քառորդից մինչև 6-րդ դարի առաջին քառորդն ընկած ժամանակահատվածում։ Նշված կարծիքն իր հիմնավորումն է գտնում նաև Կաղանկատվացու հայտնած անուղղակի տվյալներով, որոնց համաձայն՝ նա պատմության ասպարեզում հայտնվում է սոսկ 5-րդ դարում ծավալվող իրադարձություններում՝ որպես Վաչագան Գ Բարեպաշտի (485-510) ժամանակակից և համագործակից[273]։ *Ծանոթ լինելով մատենագրական այս հիմքին՝ ուսումնասիրողներից Ս. Հովհաննիսյանը նրան համարում է 4-րդ դարի կրոնավոր, որը գործել է Աղվանից Վաչագան Բ թագավորի օրոք և մասնակցել 372/387 թթ. ընթացքում վերջինիս կողմից հրավիրված Աղվենի ժողովին։ «Աղվենի սահմանադիր ժողովը,- գրում է նա,- հրավիրվել է Վաչագան II-ի թագավորության և Շուփհաղիշոյի հայրապետության օրոք, ամենայն հավանականությամբ 372/387 թթ.* [274] *հունիսի առաջին օրերից մեկում»* [275]։ *Բայց, քանի որ հիշյալ ժողովը, որ նրա գլխավոր կովանն է, գրեթե բոլոր ուսումնասիրողների կարծիքով հրավիրվել է 5-րդ դարի վերջերին*[276]*, չի կարող նման փաստարկի դեր կատարել։*

Առանձին կարևորություն են ներկայացնում Մխիթար Այրի-

---

[272] Հ. Ս. Սվազյան, Աղվանից հոգևոր առաջնորդները նախակաթողիկոսական շրջանում, Պատմա-բանասիրական հանդես, 2004, թ. 3, էջ 189-198: Հ. Ս. Սվազյան, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, էջ 102:

[273] Կաղանկատվացի, էջ 89-95: Տես նաև Կանոնագիրք Հայոց, Բ, էջ 91-100:

[274] Մինչ այդ, նա Աղվենի ժողովի գումարման տարեթիվ նշել էր 372-375 թթ.: Տես Ս. Հովհաննիսյան, Աղվենի սահմանադիր ժողովի կանոնները և նրանց աղերսը Աշտիշատի կանոնների հետ, Պատմա-բանասիրական հանդես, 1967, թ. 4, էջ 269:

[275] Նույն տեղում, էջ 274 /ընդգծ. Հ. Ս./:

[276] Мовсес Каганкатваци. История агван Мойсея Каганкатваци, писателя X века, пер. с арм., предисл. и коммент. К. Патканьяна, Санкт Петербург, 1861, с. 11, 305, 310: Մ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հտ. Ա, էջ 80: Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ., Երևան, 1962, էջ 38: К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании, с. 185, 295: Բ. Ուլուբաբյան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին, էջ 58-72:

վանեցու հաղորդումները Շուփհաղիշոյի հովվապետության ժամանակաշրջանի մասին, որոնցում նա իր ներկայացրած ցանկում նախ նրան կարգում է Մանուկ Գրիգորիսից հետո[277]*, ապա տարեգրությանն անդրադառնալով՝ հատուկ շեշտում. «Սուրբ Շուփհաղիշոյ ամք տեսեն 500»*[278]*։ Այս փաստը, որ 5-րդ դարում Տեր Երեմիային հաջորդել է Շուփհաղիշոն, փարատել է նրա՝ ժամանակների հետ կապված բոլոր տարակուսանքները։*

Ըստ Մ. Բարխուտարյանցի՝ Շուփհաղիշոն հոգևոր առաջնորդի պաշտոնն ստանձնել է «Աղուանից ժողովրդեան ընտրութեամբ և իշխանաց խնդրանօք, Հայոց Բաբկեն կաթողիկոսի ձեռնադրմամբ»[279]*։*

Անցնելով պաշտոնավարման՝ Շուփհաղիշոն 461 թվականից հաստատվել է Աղվանից մարզպանության կենտրոն հռչակված Պարտավ մեծ քաղաքում և գլխավորել երկրի հոգևոր իշխանությունը։ Հայ մատենագրության մեջ նա հանդես է գալիս մի փոքր անսովոր՝ «աւագ եպիսկոպոսապետ»[280] *կամ «Պարտաւայ արքեպիսկոպոս»*[281] *տիտղոսներով, որոնց վրա հատուկ ուշադրություն դարձնելով՝ Բ. Ուլուբաբյանը գտնում է, որ «աւագ եպիսկոպոսապետ» եզրույթի վերջին «պետ» մասնիկը և «Պարտաւայ արքեպիսկոպոս» դարձվածքի «արք»-ը հետագայի հավելումներ են՝ կատարված միանգամայն անհմուտ ձեռքով*[282]*, և, ըստ էության, շփոթության արդյունք են։ Կարելի է համաձայնվել հետազոտողի հետ, քանի որ «եպիսկոպոսապետն» ինքնին ավագ է իր պաշտոնակիցների համեմատ, և դա կրկնելու հարկ չկար, իսկ*

[277] Այրիվանեցի, էջ 19:

[278] Նույն տեղում, էջ 48 :

[279] Մ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հտ. Ա, էջ 80: Թերևս սխալվում է Շամախու եկեղեցու քարոզիչը՝ գտնելով, թե Շուփհաղիշոյին ձեռնադրել է Հայոց Կաթողիկոս Բաբկեն Ա Ոթմացին, ով առաջնորդել է Հայոց եկեղեցին 490-516 թթ., երբ Շուփհաղիշոն արդեն Աղվանից հայրապետ էր: Մեր հաշվարկներով, ավելի ճիշտ կլինի կարծել, որ վերջինիս ձեռնադրումը տեղի է ունեցել 478-490 թթ.՝ Հայոց առաքելական եկեղեցին գլխավորած Հովհաննես Մանդակունու ձեռամբ, որի աշակերտներից մեկն է եղել նա: Տես Մ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հտ. Ա, էջ 80:

[280] Կաղանկատվացի, էջ 85 :

[281] Նույն տեղում, էջ 89: Տես նաև Կանոնագիրք Հայոց, Բ, էջ 91-92:

[282] 4. Բ. Ուլուբաբյան, Դրվագներ, էջ 172, Նույնի, Հայոց արևելից կողմանց եկեղեցին, էջ 66 :

«արքեպիսկոպոս» տիտղոսով մեծարվում էին ոչ թե առանձին քաղաքների եպիսկոպոսները, այլ երկրի հովվապետերը։ Եվ Շուփհաղիշոն թեև առաջ քաշվելով դարձավ նրանցից մեկը, բայց այդ շրջանում ժամանակավրեպ էր նմաններին «արքեպիսկոպոս», որ նույնն է թե «կաթողիկոս» կոչելը այն պարզ պատճառով, որ տվյալ ժամանակաշրջանում Աղվանքում կաթողիկոսություն՝ որպես հոգևոր իշխանության գերագույն մարմին, դեռ չէր կազմավորվել։ Իսկ վերոհիշյալ շփոթությունը, կարծում ենք, Պարտավը Շուփհաղիշոյի համար նստավայրի վերածելու հետևանք է։ Հաստատվելով Պարտավում՝ Շուփհաղիշոն ամենայն հավանականությամբ գլխավորել է նաև Պարտավի եպիսկոպոսությունը, և այդ երկու պաշտոնների համակցությունը ենթագիտակցաբար հանգեցրել է «Պարտաւայ արքեպիսկոպոս» յուրահատուկ եկեղեցական աստիճանակարգի առաջ գալուն, որով և տիտղոսավորել են նրան։ Տեղին է այստեղ նշել, որ Շուփհաղիշոյի ղեկավարությամբ Պարտավի եպիսկոպոսությունը դարձել է Աղվանից եկեղեցու առաջատար թեմերից մեկը և իր գործունեությամբ ետ է մղել նույնիսկ անվանապես առաջնորդանիստ համարվող Ջողին։ Դա հստակ երևում է Աղվենում գումարված ժողովի մասնակիցների կազմից, որոնց թվում Պարտավն, ի դեմս Շուփհաղիշոյի և Մատթե երեցի, ուներ երկու ներկայացուցիչ[283], մինչդեռ Ջողը, որ ի պաշտոնե պարտավոր էր այդ կարևորագույն ժողովում ունենալ իր մասնակիցը կամ մասնակիցները, ներկայացված չէր[284]։ Ուստի, անհավանական չի լինի առհասարակ մակաբերել, որ Պարտավի եպիսկոպոսության առաջատար դիրքն ու նրա առաջնորդի եռանդուն գործունեությունն են նաև հիմք ծառայել, որ հետագա հեղինակները կամ նրանցից մեկը Շուփհաղիշոյին մկրտի հիշյալ տիտղոսով և դնի գործածության մեջ։

Նորանշանակ հայրապետի անունն, ըստ Ն. Ակինյանի, ունի ասորական ծագում, բառացի նշանակում է «փառք Յիսուսի»[285] և հիմնականում տարածվում էր ասորիների միջավայրում։ Այս հանգամանքը մեզ թույլ է տալիս եզրակացնելու, որ ինքը՝ Շուփհաղիշոն ևս իր ծագմամբ ասորի էր և իրենով ներկայացնում էր

283 Կաղանկատվացի, էջ 89-90: Կանոնագիրք Հայոց, Բ, էջ 91-92:
284 Նույն տեղում:
285 Ն. Ակինեան, Մովսէս Դասխուրանցի, Հանդէս ամսօրեայ, Վիէննա, 1953, թ. 10-12, էջ 571:

Աղվանքում գործող ասորական համայնքները։ Ասվածի առհավատչյան այն իրողությունն է, որ մեզ հետաքրքրող տարիներին Աղվանքում գործում էին նաև ասորի հոգևորականներ, որոնք նաև երկրում ծավալվող իրադարձությունների գործուն մասնակիցներ էին, վանքեր էին կառուցում և ամեն կերպ նպաստում էին հոգևոր կյանքի առաջընթացին։ Կաղանկատվացու վկայությամբ՝ Ցրի քաղաքում նահատակված Դանիել սրբի և ճիղբ մանկան նշխարները հայտնաբերելուց հետո «...ասորեաց ոմանց աբեղայից տանէին ի Հսկու անուանալ գիւղն, և անդ եդեալ ի գերեզմանի, և ինքեաք ի տեղւոջն վանս շինէին»[286]։ Դատելով Աղվանքում ասորի հոգևորականների գործունեության մասին Կաղանկատվացու պատմություններից՝ նրանք այստեղ ունեին իրենց համայնքը, որի կենտրոնը Հակու գյուղն էր։ Համայնքն այնքան զորեղ էր, որ կարող էր վանական շինություններ կանգնեցնել և այլ կարգի միջոցառումներ իրականացնել։ Նման համայնքի գոյությունն Աղվանքում նրա սպասավորներին լայն հնարավորություններ կընձեռներ ներգավվելու գլխադաս եկեղեցու համակարգում, բարձր աստիճանների հասնել աստվածամատույց գործերով ու սրբակյաց կենցաղով։ Ասվածը հավասարաչափ վերաբերում է նաև Շուփհաղիշոյին, ով ամենայն հավանականությամբ լինելով այդ համայնքի առաջատար գործիչներից մեկը՝ կարող էր նշանակվել Աղվանքի հայրապետ։

Աղվանքի համար ծանր ժամանակներում է Շուփհաղիշոն ստանձնում երկրի հովվապետի պաշտոնը։ Պարսիկ մարզպանների շուրջ երեսնամյա տիրապետությունը կործանման եզրին էր հասցրել մարզպանության տնտեսությունը։ Այն քայքայվել էր, կողոպտվել։ Քաղաքական կյանքում իշխում էին կամայականությունն ու թողտվությունը։ Բարվոք չէր երկրի վիճակը նաև դավանական առումով։ Ամենուրեք կառուցվում էին ատրուշաններ, խոնարհվում եկեղեցիները, թուլացել էր քրիստոնեական հավատը և զորացել «...կրակալոյց պաշտամունք դիցն աղտեղութեան»[287]։ Ի հայտ էին եկել նոր, այսպես կոչված, մատնահատության և դեղատվության աղանդներ, որոնց ծիսակատարությունների հիմքում ընկած էր մարդկային զոհաբերությու-

[286] Կաղանկատվացի, էջ 40:
[287] Նույն տեղում, էջ 43:

նը[288]։ Խռովված էր նաև հասարակական կյանքը։ Սուր հակասություններ էին ծագել հոգևորականության տարբեր դասերի ու աշխարհականների միջև։ Աղբյուրներն արձանագրում են, որ «Յամս Վաչագանայ՝ Աղուանից արքայի (որ նույնն է թե Շուփհաղիշոյի-Հ.Ս.) բազում հակառակութիւնք լինէին իմէջ աշխարհականաց և եպիսկոպոսաց և քահանայից, քորեպիսկոպոսաց, ազատաց և ռամկաց»[289]։

Աղվանքում առաջացած տարտամ իրավիճակում անցնելով եկեղեցու գլուխ՝ եպիսկոպոս Շուփհաղիշոն, որ եկել էր Երուսաղեմից («յԵրուսաղեմէ եկեալ»)[290] և, անկասկած, ներկայացնում էր Սուրբ քաղաքի քրիստոնեական դպրոցը, Վաչագան Գ Բարեպաշտի հետ միասին ձեռնամուխ է լինում Աղվանից եկեղեցուն սպառնացող վտանգը չեզոքացնելուն, ուղղափառ հավատը պահպանելուն, քրիստոնեության ընկած վարկը բարձրացնելուն։ Անցկացվում են մի շարք բարեփոխումներ։ Բացվում են դպրոցներ, որոնցում արքայական հրամանով հավաքում են հատկապես «զմանկունս կախարդացն, և դիւթաց և քրմաց»[291] ու նրանց կրթում «վարուց քրիստոնէութեան»[292]։

Հրամայելով «վարժել և հմուտ լինել կարգի քրիստոնեացն»[293]՝ Վաչագան Բարեպաշտն իր հսկողության տակ էր պահում նման դպրոցների աշխատանքը և հաճախակի այցելություններով անձամբ հետևում դրանցում տարվող դասընթացներին[294]։ Օգտվելով բռնի հավատափոխություններն արգելող Վաղարշ Ա-ի արձակած հրովարտակով[295] իրենց տրված հնարավորությունից՝ հավատի ջատագովները՝ բարեպաշտ թագավորն ու եպիսկոպոսը, քրիստոնեությունն Աղվանքում հռչակում են ազատ, վերականգնում Աստծո ավերակված տաճարները, զարկ տալիս եկեղեցաշինությանը։ Պատմիչ Մովսես Կաղանկատվացին այս

288 Այս աղանդների ծիսական արարողությունների նկարագրությունը մանրամասն տես Կաղանկատվացի, էջ 52-55 :
289 Նույն տեղում, էջ 89: Տ՛ես նաև Կանոնագիրք Հայոց, Բ, էջ 91:
290 Կաղանկատվացի, էջ 342:
291 Նույն տեղում, էջ 50:
292 Նույն տեղում, էջ 51:
293 Նույն տեղում:
294 Նույն տեղում:
295 Նույն տեղում, էջ 48:

բարեփոխումների մասին գրում է, որ «...ըստ թուոյ աւուրց տարւոյն (այսինքն 365 կամ 366-Հ.Ս.) եկեղեցի միայն բարեպաշտն Վաչագան շինեաց յարևելս»[296]։ Զուգակիցները նմանապես ավելացնում են եկեղեցու սպասավորների թվաքանակը, վերակազմավորում աստիճանակարգը և հսկողության տակ վերցնում ծիսակատարությունների բնականոն ընթացքը. «Կարգէր (Վաչագանը-Հ.Ս.),-հայտնում է նույն պատմիչը,- տեղեաց տեղեաց եպիսկոպոսունս, և երիցունս, և հայեցողս»[297]։ Նշված այս բարեփոխումներին զուգահեռ՝ նրանք նաև խիստ պատժամիջոցներ էին կիրառում քրիստոնեության պատվիրաններից խուսափողների և հին սովորությունները պահպանողների հանդեպ։ «(Այդպիսիներից-Հ.Ս.) զոմանս խեղելով, և զոմանս շկոթակ առնելով և զոմանս ի ստրկութիւն արկանելով և զյոլովս խրատելով»՝ նա շատերին է բերում քրիստոնեական հավատի և խտացնում ուղղափառության հետևորդ հավատացյալների շարքը[298]։ Այս շրջանում Վաչագան Գ Բարեպաշտի և նրա հոգևոր գործակից Շուփհաղիշոյի ձեռնարկած կտրուկ միջոցառումների շնորհիվ հայտնաբերվում և վնասազերծվում են վերոհիշյալ մատնահատության և դեղատվության չար աղանդները։ Երկիրը խաղաղվում է։ Ընդդիմադիր ուժերը տեղի են տալիս։ Շատերն հավատափոխներից թողնում են կրակապաշտությունը և մկրտվում առաքելական ծիսակարգով։ Քրիստոնեությունն Աղվանքում կրկին վերելք է ապրում, դառնում գերակա կրոն։ Կաղանկատվացին այդ ժամանակների համար անթաքույց գոհունակությամբ նշում է, որ Վաչագան Բարեպաշտի թագավորության տարիներին «բոլոր իսկ ուխտ եկեղեցւոյ մեծարեալք և յարգեալք էին»[299]։

Մեծ տեղ հատկացնելով ժողովրդի մոտ հոգևոր զգացմունքների խթանմանը՝ երկրի աշխարհիկ և հոգևոր առաջնորդները ջանում են դա անել նաև նախնիների հիշատակը հավերժացնելու եղանակով, և այդ ուղղությամբ ևս լայնահուն աշխատանքներ տարվում։ Առանձնակի կարևորություն էր տրվում նահատակ սրբերի մասունքների հայտնաբերման, պահպանման և երկր-

296 Նույն տեղում, էջ 338:
297 Նույն տեղում, էջ 50:
298 Նույն տեղում, էջ 49-50:
299 Նույն տեղում:

պագության արժանացնելու խնդիրներին, ուստի և թագավորն ու գլխավոր հովիվն իրենց ուշադրությունը բևեռում են դրա վրա և անցնում եռանդուն գործողությունների։ Եկեղեցական ավանդության համաձայն՝ նրանց երկոքեան ջանքերի շնորհիվ Ճղբաց ազգագավառի կենտրոն Ցրի քաղաքում հայտնաբերվում են քրիստոնյա աշխարհում մեծ հռչակ վայելող սուրբ Զաքարիայի՝ Հովհաննես Մկրտչի հոր և Նիկոմեդիա քաղաքում նահատակված երանելի Պանտալեոնի նշխարները[300], որոնք ժամանակին իր հետ այստեղ էր բերել Մանուկ Գրիգորիսը[301] ։ Հակու գյուղում ամփոփված հիշյալ Ցրի քաղաքի երեց Դանիելի ու նրա օգնական ճիղբ մանկան[302], Գրիգոր Լուսավորչի, «հռչակելի» Հռիփսիմեի ու Գայանեի մասունքները և պահ տրվում Դարահոջ կոչվող գյուղում[303]։ Շարունակելով որոնումները՝ նրանք կարճ ժամանակ անց Արցախի Ամարաս եպիսկոպոսական կենտրոնում հայտնաբերում են տեղի եկեղեցու բակում թաղված Մանուկ Գրիգորիսի աճյունը և յուրովի տնօրինում այն։ Ըստ Կաղանկատվացու՝ գտածոյի հիմնական մասը պահվում է տեղում, մի մասը բաժանվում է եպիսկոպոսներին՝ սեփական վիճակներում տեղադրելու համար, իսկ մնացածը տրվում է թագավորին, ով անուշահոտ յուղերով դրանք օծելով ու թագավորական մատանիով կնքելով՝ մեծ շուքով, Շուփհաղիշոյի ուղեկցությամբ փոխադրում է հայրենի Դյուտական կոչվող գյուղը։ «Առեալ թագաւորին,- գրում է Կաղանկատվացին,- ընդ ինքեան զաւագ եպիսկոպոսապետն Շուփհաղիշոյ գնայր»[304]։ Դյուտականում նա մի մատուռ է կառուցում և սրբի մասունքներն այստեղ տեղադրելով՝ այն վերածում ուխտավայրի, ուր տարին երկու անգամ այցելելով՝ շքեղ հանդիսավորությամբ նշում էր նահատակաց հիշատակը[305]։

Վաչագան Գ Բարեպաշտի և եպիսկոպոսապետ Շուփհաղիշոյի համատեղ գործունեության մեջ յուրահատուկ հնչեղություն ունի 488 թ. Ուտիքի Աղվեն գավառում գումարված եկեղեցական ժողովը, որը միտված էր անիշխանության տարիներին առա-

[300] Նույն տեղում, էջ 56-57:
[301] Նույն տեղում, էջ 37 :
[302] Նույն տեղում, էջ 56-57 :
[303] Նույն տեղում, էջ 66-67:
[304] Նույն տեղում, էջ 85:
[305] Նույն տեղում, էջ 89-90: Կանոնագիրք Հայոց Բ, էջ 91-93:

ջացած հակասությունների վերացմանն ու հասարակության առանձին խավերի միջև առկա հարաբերությունների հստակեցմանը։ Ժողովը ներկայացուցչական էր։ Բացի երկրի առաջին երկու դեմքերից, մասնակցում էին նաև այլ հայտնի եպիսկոպոսներ, քահանաներ, տարբեր աստիճանի հոգևորականներ, մեծատոհմիկ այրեր և շատ ազատ մարդիկ, որոնք հականե հանվանե հիշատակվում են ժողովի արձանագրային բաժնում[306]*։ Ուշագրավն այս շարքում այն է, որ Շուփհաղիշոն այստեղ հիշատակվում է երկրորդը՝ Վաչագան Գ Բարեպաշտից անմիջապես հետո*[307]*, ինչը խոսում է հասարակական կյանքում նրա ունեցած առաջատար դիրքի մասին և ենթադրել տալիս, որ նա ժողովի գումարման նախաձեռնողներիցներից էր, կազմակերպիչը և, հավանաբար, նաև նախագահողը։ Անկասկած է, սակայն, որ նա իր անմիջական մասնակցությունն է ունեցել ժողովում ընդունված կանոնների կազմման աշխատանքներին և գործնականում նպաստել դրանց կիրառմանը։*

Ժողովն իր ընդունած քսաներկու կանոններով օրենսդրորեն ամրակայում է եկեղեցու հիմքերը, սահմանում աշխարհիկ ու եկեղեցական դասերից յուրաքանչյուրի իրավունքներն ու պարտականությունները, հաստատում հօգուտ եկեղեցու ժողովրդից գանձվող հարկերի կայուն չափեր ու տեսակներ[308]*։ Նոր կանոններն աննախադեպ բարձրացնում են հոգևորականության ու ազնվականության հեղինակությունը և օժտում քաղաքական, տնտեսական ու իրավական լայն արտոնություններով ։*

Մեծ էր Շուփհաղիշոյի դերն այս ամենում։ Այստեղ նա Վաչագան Գ Բարեպաշտի հետ միասին իրեն դրսևորում է որպես պետական ու կրոնական խոշոր գործիչ, ով լուծում է հասարակությանը հուզող մի շարք հարցեր, երկիրը զերծ պահում կրոնական խժդժություններից և ապահովում քրիստոնեության խաղաղ ընթացքը։

---

306 Կաղանկատվացի, էջ 89: Կանոնագիրք Հայոց Բ, էջ 91:

307 Նույն տեղերում:

308 Աղվենի ժողովի հետ կապված հարցերի մանրամասն քննությունը տե՛ս Ս. Հովհաննիսյան, Աղվենի սահմանադիր ժողովի կանոնները և նրանց աղերսը Աշտիշատի կանոնների հետ, Պատմա-բանասիրական հանդես, 1967, թ. 4, էջ 269-274: Բ. Ուլուբաբյան, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին, էջ 72-32:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՂՎԱՆՔԻ ՎԱՂ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ (2-ՐԴ-6-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)[309]

Աղվանքի հոգևոր առաջնորդներն, ինչպես քրիստոնյա Արևելքի բոլոր հովվապետները, ունեին իրենց նստավայրերը, որտեղից կազմակերպում և ղեկավարում էին իրենց իրավասության տակ գտնվող կրոնական հաստատությունների գործունեությունը։ Հիմնադրվելով նոր դավանական ուղղության հետ գրեթե միաժամանակ՝ դրանք տարբեր ժամանակներում տարբեր նշանակության հանձնառություններ էին իրականացնում և նպաստում տարածաշրջանում քրիստոնեության տարածմանն ու ամրապնդմանը միտված աշխատանքներին։ Այդ վաղ շրջանում այդպիսիք հաստատվում էին ըստ քարոզչավայրերի և ժամանակավոր կացարանների բնույթ ունեին, քանի որ գոյատևում էին մինչև տվյալ քարոզչի բամասացության ավարտը, այլ վայր փոխադրվելը կամ մահկանացուն կնքելը։ Եվ դա է պատճառը, որ աղբյուրներն այդ ժամանակների համար անվանապես որևէ նստավայր չեն հիշատակում։ Ըստ այդմ, հետևելով տարածաշրջանում քարոզչություն վարած առաջին ավետարանչիների անցած ուղուն՝ նկատելի է դառնում, որ նման կացարաններ հիմնադրվել են Զողում, Բուն Աղվանքում, Աղվանից Հայքում՝ Ուտիքի Սուհառն ու Գիս քաղաքներում և Արցախի Խորաձոր կոչվող վայրում, ուր, ինչպես մի առիթով արդեն նշել ենք, հետագայում վանք է կառուցվել Դադի քարոզչի անունով՝ Դադիվանք անվամբ[310]։

Դ դարի կեսերին՝ Գրիգոր Լուսավորչի հանդես գալուց հետո, տարածաշրջանում բարձրանում է քրիստոնեության Աղվանք

[309] Տես նաև Հ. Ս. Սվազյան, Հոգևոր իշխանության առաջնորդանիստ կենտրոնները հին և վաղ միջնադարյան Աղվանքում (II-IX-րդ դարի սկիզբ), Բանբեր հայագիտության, 2018, թ. 3, էջ 53-65:

[310] Կաղանկատվացի, էջ 340:

և կից երկրներ ներթափանցման նոր ալիք, որի ժամանակ նորածագ ուսմունքն հիշյալ վայրեր մուտք է գործում Մեծ Հայքից եկած վարպետների միջոցով[311], որոնք հաստատվում են արդեն հատուկ նպատակադրված կացարաններում և դրանք վերածում մշտական նստավայրերի։ Եկեղեցական ավանդությունը պահպանել և մեզ է հասցրել նրանցից շատերի անունները և դրվատանքի խոսքերով պարուրել նրանց գործունեությունը։ Վերջիններիս մեջ առանձնակի երկյուղածությամբ հիշատակվում է Գրիգոր Լուսավորչի անունը, ով գալով Արցախ և տեղակայվելով Հաբադ գավառի Ամարաս կենտրոնում՝ լայն քարոզչական աշխատանքներ է տանում, նոր եկեղեցու հիմքերը գցում և երկրի լուսավորման համար եռանդուն միջոցներ ձեռնարկում։ «Եկեալ ի Հաբանդ գաւառ (Գրիգոր Ա-ն-Հ.Ս.),- գրում է Կաղանկատվացին,- ուսուցանէր և խրատէր պահել զպատուիանս Որդւոյն Աստուծոյ. անդ արկանէր հիմն եկեղեցւոյն ի գիւղաքաղաքն Ամարասայ. և կացուցանէր ծօնս և հրամանատարս՝ շինել եկեղեցի»[312]։ Ինչպես կարելի է մակաբերել վկայակոչված քաղվածքից, մանավանդ տեղում եկեղեցի կառուցելու Լուսավորչի մտադրությունից, Ամարասը նրա համար ծառայել է որպես նստավայր և հոգևոր կենտրոն, որտեղ ավելի ուշ, աղբյուրների վկայության համաձայն, հաստատվել է նաև նրա թոռը՝ մեզ քաջ հայտնի Մանուկ Գրիգորիսը։ Հաջորդելով իր անվանի պապին՝ Մանուկ Գրիգորիսը ավարտին է հասցրել Ամարասում նրա հիմնադրած եկեղեցու շինարարությունը, կառուցել նորերը, նորոգել խոնարհվածները և «տքնական հակմամբ... զաւետարանական ընթացս և զվերակացութիւն եկեղեցւոյ սրբոյ շնորհօքն աստուծոյ առանց պակասութեան առնէր, առաւել ևս փութայր գուն եդեալ յորդորելով զամենեսեան առ ի բարեացն քաջալերութիւն»[313]։ Պարզ տրամաբանությունը հուշում է, որ այս աշխատանքները Մանուկ Գրիգորիսը կազմակերպել, իրականացրել և վերահսկել է տարածքում գործող հոգևոր կենտրոնից, որն, ըստ մեզ հասած մատենագրական տվյալների, Ամարասն էր։ Այդ մա-

---

311 Հ. Ս. Սվազյան, Քրիստոնեության Աղվանք ներթափանցման ուղիներն ու ժամանակաշրջանը, էջ 131-141:

312 Կաղանկատվացի, էջ 35 /ընդգծ. Հ.Ս./:

313 Բուզանդ, էջ 24:

սին փաստում է նաև այն, որ Մասքթաց աշխարհում (Վատնյան դաշտում) նահատակված պատանի քարոզչի դին Հաբանդից գնացած նրա աշակերտները բերում, ամփոփում են Ամարասում՝ նրա պապի հիմնադրած եկեղեցու բակում[314]*։ Թերևս այս եղելության մասին վերհուշն է ընկած 13-րդ դարի պատմիչ Ստ. Օրբելյանի այն հաղորդման հիմքում, որում նա Ամարասը կոչում է «մեծ աթոռն Աղվանից» և հատուկ շեշտում, որ այն «ի հինուն (հին ժամանակներից-Հ. Ս.)» լեալ էր աթոռ կաթողիկոսաց նոցին (աղվանցիների-Հ.Ս.)»*[315]*։ Իր երկարատև ուսումնասիրությունների արդյունքում նման եզրակացության է հանգել նաև Հայոց, Վրաց և Իմերեթիայի թեմական առաջնորդ Ս. վ. Ջալալյանը, ով նույնպես գրում է, որ Ամարասը վաղ ժամանակներից «էր կաթողիկոսական աթոռ աշխարհին Աղուանից»*[316]*։ Ուրեմն, ինչպես բխում է վերոշարադրյալից, Ամարասը, որ դեռևս Գրիգոր Լուսավորչի ժամանակներում Աղվանից հայրապետների համար նստավայրի էր վերածվել, առաջնորդանիստ կենտրոն է դառնում նաև Մանուկ Գրիգորիսի եպիսկոպոսության տարիներին, և նա այսուհետ այստեղից է սկսում ուղղորդել Հայոց Արևելից կողմերում, Բուն Աղվանքում և Ջողա երկրում ծայր առած քրիստոնեական շարժումը։ Նման հետևությունը հիմք է տալիս վստահաբար հայտարարելու նաև, որ շրջանառվող այն կարծիքը, թե «Աղվանից եկեղեցու կենտրոնը IV դարում Կապաղակ մայրաքաղաքն է»*[317]*, չի համապատասխանում պատմական իրականությանը։ Ամարասում տեղակայված այս հոգևոր կենտրոնն իր խնդիրներով ու գործունեությամբ էականորեն տարբերվում էր ըստ քարոզչական վայրերի հաստատված ժամանակավոր կացարաններից։ Նոր իրավիճակում տարածաշրջանի քրիստոնեացումն ընթանում է հիմնականում ժողովրդական զանգվածների միջավայրում Քրիստոսի հանդեպ հավատն ամրակայելու և խորացնելու ուղղությամբ։ Ջարկ է տրվում եկեղեցաշինությա-*

---

[314] Բուզանդ, էջ 26: Խորենացի, էջ 260: Կաղանկատվացի, էջ 39: Օրբելյան, էջ 470:

[315] Օրբելյան, էջ 470:

[316] Ս. վ. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն, մաս Ա., էջ 196:

[317] Ф. Мамедова, Политическая история и историческая география Кавказской Албании, с. 235:

նը, գաղափարական պայքարում մեծ տեղ է հատկացվում հասարակության հոգևոր դաստիրակությանը, լուսաբանվում են աստվածաշնչյան խորհուրդները։ Գրիգոր Լուսավորչի, ապա և Մանուկ Գրիգորիսի ծավալած եռանդուն գործողությունների շնորհիվ նստավայր Ամարասը կարճ ժամանակում վերածվում է ազդեցիկ հոգևոր հաստատության, որը մեծ չափերով նպաստում է առաքելական հավատի տարածմանն ու կայունացմանը։

Ամարասի առաջնորդանիստը գործում է մինչև Մանուկ Գրիգորիսի վախճանը՝ 336 թ, որին, ինչպես հստակ նշում է Մխիթար Գոշը, հաջորդում են Տեր Զաքարիան, Դավիթը, Հովհանը և Երեմիան, ովքեր նույն հեղինակի տեղեկացմամբ հովվում էին Զողից։ Պատմիչի այս տեղեկությունը և դրա շուրջ կատարված քննությունը անվերապահորեն ցույց են տալիս, որ Աղվանից հայրապետների նստավայրը 4-րդ դարի 30-ական թվականներին Ամարասից փոխադրվել էր Զող և հաստատվել Մասքթաց աշխարհի այս մայրաքաղաքում[318]*։ Իրադարձությունների ընթացքը թույլ է տալիս կարծելու, որ նշված փոփոխությունը կարող էր տեղի ունենալ Մանուկ Գրիգորիսի անմիջական հաջորդ Տեր Զաքարիա Ա-ի օրոք և նրա կողմից։ Այն պատանի գործչի եղեռնական սպանությունից հետո երկու երկրների միջև առաջացած նոր հարաբերությունների արդյունք էր, մասքութ բարբարոս ցեղերին քրիստոնեությանը հակելու վերջինիս գործի շարունակությանը միտված կրոնական ու քաղաքական ձեռնարկում։ Հավանական ենք համարում նաև, որ նստավայրի տեղափոխությունը Զող այն հեռավոր ժամանակների արձագանքն էր, երբ այն սբ. Եղիշայի քարոզչության մեկնակետը և առաջին նստավայրը դարձավ։ Հաստատվելով Զողում՝ Աղվանից հայրապետներն այստեղ ևս նույն ջերմեռանդությամբ շարունակում են իրենց գործունեությունը, կազմակերպում և վարում երկրի հոգևոր գործերը, դառնում ծավալվող անցուդարձերի գործուն մասնակիցներ և տքնաջան գործողություններով նոր վարդապետության հիմունքներն ամրապնդում հասարակության գիտակցության մեջ։ Բարձրանում է նրանց հեղինակությունը, համբա-*

[318] Մխիթար Գոշ /Կաղանկատվացի, Յաւելուած Բ, էջ 350: Հայապատում, էջ 284: Տես նաև վերը:

վը դուրս գալիս տարածաշրջանի սահմաններից։ Ելնելով այս հանգամանքից՝ Աղվանից եկեղեցու հայրերը հավանաբար դարի երկրորդ կեսին, Տեր Դավիթ Ա-ին փոխարինած սբ. Հովհանին նշանակում են Հոնաց աշխարհի եպիսկոպոս[319]*, ով, բնական է կարծել, նոր պաշտոն ստանձնելով՝ թողնում է Զողի իր նստավայրը և հաստատվում Հոնաց երկրում։ Տեր Հովհանի հեռանալուց հետո խամրում է Զողի՝ որպես նստավայրի դերը, թուլանում և չնայած անվանապես պահպանում է առաջնորդանիստ կենտրոնի իր համարումը, սակայն, աստիճանաբար, տեղը զիջում է Աղվանքի մայրաքաղաք Կապաղակին, որն, ինչպես տեսանք վերևում, Երեմիայի ժամանակներից վերածվել էր Աղվանից հայրապետների փաստացի նստավայրի։*

Այսպիսով, 5-րդ դարի սկզբներին Աղվանից հայրապետների նստավայրը Տեր Երեմիայի գլխավորությամբ հաստատվում է Կապաղակում։ Զողը դադարում է իրեն վերապահված առաքելությունը գործնականում իրականացնելուց և սոսկ անվանապես է մնում որպես առաջնորդանիստ կենտրոն։ Ճիշտ մեկնաբանելով Կորյունի վիճարկվող արտահայտությունը՝ Ա. Հակոբյանը ևս գտնում է, որ 4-5-րդ դարերում Աղվանից եպիսկոպոսների նստավայրը Կապաղակ մայրաքաղաքն էր[320]*։ Նրա հետ համամիտ է նաև Մ. Բալայանը*[321]*։ Ավելացնենք, որ Տեր Երեմիայից հետո նրա հաջորդները մինչև Աղվանքի առաջին կաթողիկոս Աբաս Ա-ի ասպարեզ իջնելը, նույնպես նստում էին Կապաղակում։*

461 թ. կազմավորվում է Աղվանից մարզպանությունը[322]*։ Նորաստեղծ վարչաքաղաքական միավորի մայրաքաղաք է հռչակվում Ուտիքի Ուտիք-Առանձնակ գավառի կենտրոն Պարտավ (Պերոզապատ, Պերոզ Կավատ, Պերոժ Կավատ, Բարդա) քաղաքը, ուր կենտրոնանում է նաև աշխարհիկ իշխանությունը և այն վերածում մարզի տնտեսական ու քաղաքական կենտրոնի։ Շու-*

---

319 Կաղանկատվացի, էջ 342: Գանձակեցի, էջ 195: Տես նաև վերը:

320 А. А. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, с. 133-134

321 Մ. Բալայան, Հայ Աղվանից եկեղեցին, էջ 42:

322 Հանգամանորեն տես Հ.Ս. Սվազյան, Աղվանից աշխարհի պատմություն, էջ 199-207:

տով նրանց է միանում և հոգևոր իշխանությունը, որը վերաձևավորվում է կաթողիկոսության։ Սբ. Եղիշայի հաջորդներն սկսել էին հանդես գալ «կաթողիկոս» հնչեղ տիտղոսով։ Նրանցից Տեր Աբաս Ա-ն առաջինը օծվելով Աղվանից կաթողիկոս՝ թողնում է Կապաղակի իրենց նստավայրը և 552 թ. փոխադրվում է Պարտավ՝ իր կաթողիկոսական աթոռն հաստատելով այստեղ։ Պարտավն Աղվանից հայրապետների համար դառնում է կաթողիկոսական շրջանի առաջին նստավայրը։ Այս տեղափոխումով Աղվանից եկեղեցու պատմության մեջ սկսվում է մի նոր ժամանակաշրջան, որն իր ուրույն տեղն ունենում քրիստոնյա այս երկրի կյանքում։

ԱՄՓՈՓՈՒՄ

Քրիստոնեությունն Հայոց Արևելից կողմերում, Բուն Աղվանքում և Զողա երկրում մուտք է գործում և տարածվում 2-րդ դարի առաջին կեսում ~~Երուսաղեմից, ապա և Մեծ Հայքից եկած քարոզիչների միջոցով։~~ Այս առաքելությամբ գալով նշված երկրներ՝ նրանք, հաղթահարելով բազում դժվարություններ, լայն քարոզչական աշխատանքներ են տանում տեղերում և ժողովրդական զանգվածների շրջանում սերմանում նոր վարդապետության մասին առաջին պատկերացումները։ Տեղից տեղ փոխադրվելով՝ նրանք շրջում էին տարածաշրջանով մեկ և ամեն անգամ մի նոր վայրում հաստատվելով՝ իրենց նպատակաուղղվածությանն հարիր գործունեություն ծավալում։ Դրանք կրում էին ժամանակավոր կացարանների բնույթ և գոյատևում էին մինչև տվյալ քարոզչի վախճանը կամ այլ վայրում տեղակայվելը։ Առաջինների այս շարքը գլխավորում է Սբ. Թադեոս առաքյալի աշակերտ Սբ. Եղիշան, որն ուսուցչի նահատակվելուց հետո Երուսաղեմից ուղարկվելով վերոհիշյալ կողմեր՝ մեծ նվիրումով շարունակում է իր մեծ ուսուցչի կիսատ թողած գործը։ Դուրս գալով Երուսաղեմից՝ նա Մասքթաց աշխարհի վրայով անցնում է Աղվանք ու Հայոց Արևելից կողմեր, մասնավորապես Ուտիք և հաստատվելով ժամանակավոր կացարաններում՝ քրիստոնեություն է քարոզում Զողա և Կապաղակ մայրաքաղաքներում, Ուտիքի Սուհառն և Գիս խոշոր բնակավայրերում, դիցամոլներով բնակեցված զանազան վայրերում, առաքելական հավատը տարածում դրանցում և իր այս բարեպաշտ գործերով դառնում վերջիններիս առաջին լուսավորիչն ու առաքելական հավատի հիմնադիրը տարածաշրջանում։

3-4-րդ դարերի սահմանագլխին, Գրիգոր Լուսավորչի ասպարեզ իջնելով, քրիստոնեությունը մտնում է զարգացման նոր փուլ։ Հայոց քահանայապետների նախաձեռնությամբ լայն թափ է ստանում եկեղեցաշինությունը, կազմավորվում են եպիսկոպո-

սություններ։ Այս փուլում քրիստոնեությունը մեզ հետաքրքրող երկրներ սկսում է թափանցել Մեծ Հայքից՝ Լուսավորչի կողմից ուղարկված կրոնական գործիչների կողմից, որոնք իրենց հատկացված վիճակներում մեծ եռանդով ծավալում են քարոզչական աշխատանք և մեկնաբանում են քրիստոնեության խորհուրդները։ Այս փուլի ամենակարկառուն ներկայացուցիչը Մանուկ Գրիգորիսն էր՝ Գրիգոր Ա Մեծի թոռը, ով պապի հրամանով նշանակվելով Հայոց Արևելից կողմերի ու հարակից շրջանների եպիսկոպոս՝ անմնացորդ նվիրումով լծվում է Սուրբ Երրորդության սկզբունքները ժողովրդական զանգվածներին հասցնելու գործին։ Նրա աստվածամատույց ձեռնարկումներում առանձնանում է Աղվանից հայրապետների համար կայուն ու մշտաթև նստավայրի հիմնադրումն Արցախի Ամարաս գյուղաքաղաքում, որն իր տեսակի մեջ առաջինն էր տարածաշրջանի հոգևոր կյանքում։ Նրա հայրապետության տարիներին քրիստոնեությունն ապրում է աննախադեպ վերելքի շրջան և լայն տարածում գտնում հասարակության բոլոր շերտերի մոտ։ Առավել են ամրապնդվում Աղվանքում Սբ. Եղիշայի հիմնադրած առաքելական հավատի հիմքերը, և հասունանում է քրիստոնեության պաշտոնապես ճանաչման հարցը։

Աղվանից աշխարհի քրիստոնեացման աշխատանքներն հաջողությամբ շարունակում են նաև Մանուկ Գրիգորիսի հաջորդները՝ Տեր Զաքարիա Ա-ն, Դավիթ Ա-ն, Հովհան և Երեմիա եպիսկոպոսները, ովքեր երկրի առաջնորդանիստ կենտրոնը Ամարասից փոխադրելով Զող՝ հաջորդականությամբ գլխավորում են Բուն Աղվանքի և նրան հարող վարչաքաղաքական միավորումների հոգևոր կյանքը։

Զուգադիպությամբ մերձավոր Արևելքում տեղի են ունենում քաղաքական ու կրոնական այնպիսի տեղաշարժեր, որոնք անմիջականորեն ազդում են նաև Զողում տեղակայված Աղվանից հայրապետների քրիստոնեական ընթացքի վրա։ Առաջնորդվելով Կոստանդիանոս Ա Մեծի արձակած հրովարտակով (Միլանի էդիկտոր), պարսից արյաց արքա Վաղարշ Ա-ի՝ քրիստոնեությունն ազատ դավանանքի կրոն հռչակելու հրամանագրով՝ Աղվանից հայրապետները Զողում առավել անկաշկանդ գործու-

նեություն են ծավալում և բուռն թափով անցնում իրենց առջև ծառայած հանձնառությունների իրականացմանը։ Այս շրջանի ամենախոշոր իրադարձությունն Աղվանքում քրիստոնեության պաշտոնապես ճանաչումն էր, որ 4-րդ դարի 70-ական թվականներին պետականորեն հռչակում է Ուռնայր արքան՝ վերոհիշյալ հոգևոր գործիչների ամենագործուն աջակցությամբ։ Աղվանցիների դարձը զգալի փոփոխություններ է առաջացնում երկրի հոգևոր առաջնորդների կյանքում ու գործողությունների մեջ։ Փոխվում են Հայոց և Աղվանից եկեղեցիների փոխհարաբերությունները, դառնում ավելի սերտ ու միակուռ։ Աշխուժանում են քրիստոնեության ծավալմանը միտված աշխատանքները։ Հաշվի առնելով այս հանգամանքները և ժամանակաշրջանի պատեհությունը՝ Աղվանից եկեղեցու հայրերը փորձում են շարժման մեջ ներգրավել նաև հեթանոս այլ երկրներ։ Այդ նպատակով Հովհան հայրապետին նշանակելով Հոնադ աշխարհի եպիսկոպոս՝ ուղարկում են այդ երկիր։ Զողից Տեր Հովհանի մեկնումը, սակայն, ունենում է բացասական հետևանքներ։ Այն թուլանում է, կորցնում նախկին հեղինակությունն ու ծանրակշիռ դիրքը և, չնայած անվանապես մնում է առաջնորդանիստ կենտրոն, բայց գործնականում դադարում է իրեն վերապահված գործառույթներն իրականացնելուց ու, ի վերջո, տեղը զիջում Բուն Աղվանքի մայրաքաղաքին։

Քրիստոնեությունն Աղվանքում իր ծաղկմանն է հասնում Տեր Երեմիայի օրոք, որի հայրապետության տարիներն Աղվանքում գրերի արարման, դպրության ու լուսավորության ժամանակներ էին և բոլորեքյան ուղղված էին քրիստոնեական հավատի խթանմանն ու նրա գերակա դիրքի պահպանմանը։ Տեր Երեմիայի ողջ գործունեությունը ծավալվում է Բուն Աղվանքի մայրաքաղաք Կապաղակում, ուր հաստատվել էր նա Զողից հետո՝ այն վերածելով Աղվանից հայրապետների փաստացի նստավայրի։ Այստեղ է նաև թագավոր Եսվաղենի հետ հանդիպում Մեսրոպ Մաշտոցը, օգնում նրան նորաստեղծ Աղվանից գրերը հղկելու և այլ քրիստոնեամետ ձեռնարկություններում։

Դառնալով Աղվանից հայրապետների փաստացի նստավայր՝ Կապաղակը այդպիսին մնում է նաև Տեր Երեմիայի հաջորդների

համար և դադարում է գործելուց միայն 552 թ., երբ կազմավորվում է Աղվանից կաթողիկոսությունը, և նրա Մայր Աթոռ ընտրվում է Ուտիք նահանգի Ուտիք-Առանձնակ գավառի կենտրոն Պարտավ քաղաքը։

ՎԵՐՋ Ա ԳՐՔԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հրատարակության առիթով.....5-6

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ա. Սկզբնաղբյուրներ..... 7-19
Բ. Ուսումնասիրություններ.....19-38

Գիրք Ա
ՎԱՂ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Մաս Ա
ԱՌԱՋԻՆ ՔԱՐՈԶԻՉՆԵՐՆ ԱՂՎԱՆՔՈՒՄ
(2-րդ դարի սկիզբ-4-րդ դարի 70-ական թվականներ)
Գլուխ Առաջին
Եղիշա առաքյալ 39-43
Խադ և Դադի (Դադդ, Թադեոս) 43-46

Մաս Բ
Աղվանից հայրապետները 47-48

Գլուխ Երկրորդ
ԱՂՎԱՆԻՑ ԵԿԵՂԵՑԻՆ Դ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ
Ա. Թովմա Սատաղցի 49-54
Բ. Սուրբն Գրիգորիս Պահլավիկ (Մանուկ Գրիգորիս) 55-62

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀՈԳԵՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ, «ՈՐՔ Ի ՉՈՂ ՀԱՅՐԱՊԵՏՔ ՆՍՏԱՆ»
Ա. Տեր Զաքարիա Ա 63-64
Բ. Տեր Դավիթ Ա /Դաւիթ Սուրբն/ 64-65
Գ. Տեր Հովհան Ա (Սուրբն Յոհան, Յովհան,Յովհաննէս) ..65-66
Դ. Տեր Երեմիա 66-72

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԱՂՎԱՆԻՑ ՀԱՅՐԱՊԵՍ ՇՈՒՔՀԱՂԻՇՈՆ ԵՎ
ՆՐԱ ՇՈՒՐՋ 73-82

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ԱՂՎԱՆՔԻ ՎԱՂ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ
(2-րդ -6-րդ դարի առաջին կես) 83-88

ԱՄՓՈՓՈՒՄ 89-92

Բովանդակություն 93-94

ՍՎԱՋՅԱՆ Հ. Ս.

ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

Խմբագիր՝
Վահե Թորոյան

ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ – 2021

Հրատարակչութեան տնօրեն՝ Տ. Արարատ քահանա Պողոսյան
Հրատարակչության գլխավոր խմբագիր՝ Սարգիս Մելքոնյան

Հրատարակչական խորհրդի անդամներ՝ Տ. Մկրտիչ եպս. Պռոշյան,
Տ. Ռուբեն վրդ. Զարգարյան,
Տ. Ասողիկ աբդ. Կարապետյան,
Տ. Արարատ քհն. Պողոսյան,
Տ. Գաբրիել քհն. Վարդանյան,
Գևորգ Տեր-Վարդանյան,
Կարեն Մաթևոսյան

Սրբագրիչ՝ Ն. Գրիգորյան
Էջադրումը՝ Տ. Ղևոնդ ավ. քհն. Մայիլյանի

Չափսը՝ 60x84 1/16, թուղթը՝ 80 գ.,
ծավալը՝ 96 էջ, տպաքանակը՝ 150:

ISBN 978-9939-59-285-5